ՓՈՓՈԽՎՈՂ ԱՇԽԱՐՀ

ՀԱՅԱՑՔ ԵՐԵՎԱՆԻՑ

2012/3
(3)

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) վերլուծական հանդես

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

ՀՀ, 0033 Երեւան, Երզնկյան 75
Հեռ՝ (37410) 528780, 274818
Ֆաքս՝ (37410) 524846
Էլ.փոստ՝ root@acnis.am
Վեբկայք՝ www.acnis.am

Երեւան
2012

Փոփոխվող աշխարհ. Հայացք Երեւանից

Վերլուծական-փորձագիտական եռամսյա հանդես

2012/3
(3)

Գլխավոր խմբագիր՝ Մանվել Սարգսյան

Խմբագիր՝ Գեւորգ Լալայան

Խմբագրական խորհուրդ՝ Կարապետ Կալենչյան
Սարո Սարոյան
Էդգար Վարդանյան
Ռուզան Պլուզյան

Համակարգչային ձեւավորող եւ էջադրող՝ Աշոտ Թուրաջյան

ՌԱՀՀԿ սույն հրատարակության՝ ***«Փոփոխվող աշխարհ: Հայացք Երեւանից»*** վերլուծական եռամսյա պարբերականի նպատակը տարածաշրջանային եւ համաշխարհային զարգացումների լույսի ներքո Հայաստանի այսօրվա ու վաղվա կարեւորագույն մի շարք խնդիրների, մարտահրավերների, հեռանկարների համայնապատկերի արտացոլումն է՝ թարմ հայացքով մատուցվող գաղափարների, առաջարկների, այլընտրանքային մոտեցումների միջոցով, որոնք կարող են լավագույն բանալի լինել մեր պետության առջեւ ծառացած բազում կնճռոտ հարցերին լուծում տալու տեսանկյունից: Թիրախային ընթերցողը քաղաքացիներ, անհատ փորձագետ-վերլուծաբաններ եւ ոլորտում գործող հաստատություններ են Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում:

© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (ՌԱՀՀԿ), 2012
© Armenian Center for National and International Studies (ACNIS), 2012
© Армянский центр стратегических и национальных исследований (АЦСНИ), 2012

Հոդվածագիրների տեսակետները կարող են չհամընկնել ՌԱՀՀԿ դիրքորոշումներին:
The views of the authors do not necessarily reflect those of the Center.
Мнения авторов публикаций не всегда совпадают с позицией АЦСНИ.

Հանդեսի կամ նրա առանձին հատվածների հրապարակումը առանց ՌԱՀՀԿ-ի գրավոր թույլտվության՝ արգելվում է:
This publication may not be reproduced or published, in whole or in part, without the express written consent of the Center.
Публикация данного издания или отдельных ее частей без письменного разрешения АЦСНИ запрещена.

Վաճառքի ենթակա չէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թողարկման հարցազրույցը

Տարածաշրջանային եւ ներքաղաքական հրամայականների ու դրանց փոխկապակցվածության խնդրի շուրջ 4

Հոդվածներ

ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ
Հայաստանի արտաքին եւ ներքին քաղաքականության ձեւավորման միջազգային պայմանները. 2012թ. 9

ԱՆԴՐԻԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Մեծ տերության ճգնաժամը. պատճառներ եւ հետեւանքներ: *Մաս 2* 30

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Ադրբեջանի արտաքին քաղաքականության մի քանի հարցեր՝ WIKILEAKS-ի գաղտնազերծած փաստաթղթերի լույսով 42

ՍԱՐՈ ՍԱՐՈՅԱՆ
Արեւմտյան Հայաստան. առասպե՞լ, թե՞ իրականություն 66

ԷԴԳԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կտրուկ ժողովրդավարացում. համաշխարհային փորձ 81

ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ
Տոտալիտար եւ ավտորիտար մտածողության հետեւանքները հայաստանյան հասարակական-քաղաքական դաշտում 91

ՎԱՐԴԱՆ ՁԱԼՈՅԱՆ
Հայաստանյան կուսակցական համակարգի «կարտելացումը» 104

Թողարկման հարցազրույցը

Տարածաշրջանային եւ ներքաղաքական հրամայականների ու դրանց փոխկապակցվածության խնդրի շուրջ

Հանդեսի հյուրն է Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի (ՏՀԿ) տնօրեն, քաղաքագետ ՌԻՉԱՐԴ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ

- Պարոն Կիրակոսյան, Ձեր կարծիքով, 2012-ի ո՞ր իրադարձություններն ամենալուրջ ազդեցությունը թողեցին հարավկովկասյան տարածաշրջանի վրա:

- Հետադարձ հայացք ձգելով 2012թ. անցած ժամանակահատվածի վրա, կարելի է մտաբերել մի քանի էական զարգացումներ ու միտումներ: Մասնավորապես՝ Հարավային Կովկասում տեղ գտավ լուրջ դիվանագիտական ճգնաժամ՝ կապված Հունգարիայի այն որոշման հետ, համաձայն որի՝ Ադրբեջանին հանձնվեց հայ սպային կացնահարած ադրբեջանցի սպան, ում պատվեցին հայրենիք վերադառնալուն պես, ազատություն եւ կոչում շնորհեցին: Իր այդ անսպասելի որոշումով հունգարական կառավարությունն արտահանձնեց ադրբեջանցի սպային, ով ձերբակալվել էր 2004թ. Բուդապեշտում՝ ՆԱՏՕ-ի ուսումնական ծրագրի ընթացքում, հայ սպային դաժանորեն սպանելու համար: Միջադեպն ահագնացող ճգնաժամ առաջացրեց, եւ Հայաստանը պաշտոնապես կասեցրեց Հունգարիայի հետ դիվանագիտական հարաբերությունները՝ Ադրբեջանին զգուշացնելով Ադրբեջանի այդ քայլին ի պատասխան կտրուկ արձագանքի մասին: Հատկանշական է, որ այս քայլը, թերեւս, ունենալու է ավելի լուրջ եւ համապարփակ հետեւանքներ: Մասնավորապես՝

1. Դիվանագիտական ճգնաժամի ահագնացմանը զուգընթաց՝ կապված ադրբեջանցի մարդասպանին ներում շնորհելու հետ, լարվածության նոր շրջան է սպասվում, քանի որ Հայաստանը սպառնացել է պատասխան լուրջ քայլեր ձեռնարկել՝ այդպիսով բարձրացնելով ռազմական բախումների հավանա-

կանությունը հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով եւ Լեռնային Ղարաբաղի մոտակայքում:

2. Հունգարիայի հետ բոլոր դիվանագիտական հարաբերությունները խզելու վերաբերյալ Հայաստանի որոշումից հետո Արեւմուտքն ընդհանրապես եւ Եվրոպական Միությունը մասնավորապես, կանգնած են մարտահրավերի առջեւ՝ համոզիչ կերպով բավարարել Հայաստանին, հակառակ դեպքում Հայաստանի եվրոպայամետ ռազմավարությունը կարող է լրջորեն խաթարվել եւ Հայաստանի կառավարության համար դառնալ քաղաքականապես չհիմնավորված:
3. Վտանգի տակ կարող են հայտնվել Հայաստանի հանձնառությունները ՆԱՏՕ-ի հետ կապերը խորացնելու առումով եւ, նույնիսկ, Հայաստանի մասնակցությունը ԵԱՀԿ-ի առաջնորդությանբ ընթացող Ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորման գործընթացին, որտեղ Հայաստանը կարող է շարժվել դեպի Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչում: Հավասարապես հնարավոր է, որ ռուսական լուրջ արձագանքի բացակայության դեպքում Մոսկվայի եւ Երեւանի հարաբերությունները վատթարանան, քանզի Հայաստանը ճգնաժամային այս ժամանակներում ռուսական աջակցության պակաս է զգում: Հայաստանի համար, սակայն, ճգնաժամի ժամկետները մատուցում են նաեւ քաղաքական դիվիդենտներ՝ ամրապնդելով իշխող Հանրապետական կուսակցության դիրքերը եւ առաջարկելով հաստատուն ժողովրդականության հնարավորություն 2013թ. փետրվարին կայանալիք նախագահական ընտրություններին ընդառաջ նախագահ Սերժ Սարգսյանի վերընտրման առումով:

- Սիրիայի խնդրի կապակցությամբ կտրուկ բարդացել են տարածաշրջանի հարեւան՝ Թուրքիայի խնդիրները: Այդ հանգամանքը կարո՞ղ է ազդեցություն թողել Հարավային Կովկասի երկրների անվտանգության վրա:

- Քանի դեռ սիրիական ճգնաժամը շարունակում է միայն ահագնանալ, հայ համայնքը դառնում է չափազանց խոցելի եւ անպաշտպան՝ որպես Ասադի կառավարությանն աջակցող սակավ սյուներից մեկը: Թեպետ հայ համայնքի անվտանգությունը հստակ մտահոգություն է Երեւանի համար, Հայաստանի կառավարությունը սահմանափակ հնարավարություններ ունի ճգնաժամի հետ առնչվելու հարցերում: Հետեւաբար, անիրական սպասումների եւ անգործության տպավորության ֆոնին, այս ժգնաժամը բացահայտում է իր համաշխարհա-

յին սփյուռքի հետ Հայաստանի անհարթ հարաբերությունները:

Սիրայում արդեն մեկուկես տարի շարունակվող եւ սաստկացող բռնություններից ու հակամարտությունից հետո հայկական սփյուռքը հայտնվել է անկայուն եւ խոցելի իրավիճակում՝ ընդդիմադիր ուժերի եւ կառավարական զորքերի միջեւ: Թեպետ Հայաստանի կառավարությունը սահմանափակ հնարավորություններ ունի սիրիական հայ համայնքի անվտանգության խնդիրները լուծելու հարցում, համաշխարհային հայկական սփյուռքի շրջանակներում հասարակական կարծիքը չափազանց քննադատական տեսք ստացավ, քանզի տպավորություն ստեղծվեց, թե սիրիական ճգնաժամին արձագանքելու հարցում Հայաստանը ձախողվեց: Այնուամենայնիվ, հայ պաշտոնյաները մի քանի միջոցներ են առաջարկել սիրիահայերի վիճակը թեթեւացնելու համար: Սրանց մեջ մտնում էին գործընթացների թեթեւացումը, որոնց շնորհիվ սիրիահայերը հնարավորություն կունենան դիմելու Հայաստանի քաղաքացիության համար եւ անձնագրեր ստանալու Դամասկոսի հայկական դեսպանատնից կամ Հալեպի հյուպատոսարանից:

Այս իրավիճակը, սակայն, կարող է բացահայտել Հայաստանի եւ սփյուռքի գերագնահատված հարաբերությունների ավելի իրական պատկերը: Միանշանակ Հայաստանը հետապնդում է իր պետական շահերը, որոնք ոչ միշտ են համընկնում կամ արտահայտում համաշխարհային հայ համայնքի շահերը: Որպես առաջնային քրիստոնեական համայք, որը երկար ժամանակ Սիրիայում վայելել է Ասադների աջակցությունը, հայերն արդեն իսկ խոցելի են դարձել ընդդիմության հարձակումների հանդեպ, սակայն հայերի տնտեսական ներուժը եւ առեւտրային կապերը կարող են էական լինել ցանկացած նոր կառավարության համար:

- Բարաք Օբամայի վերընտրվելուց հետո աշխուժացան ԱՄՆ եւ Իրանի միջեւ ուղիղ երկխոսության հնարավորության մասին խոսակցությունները: Արդյո՞ք հնարավոր է իրավիճակի կտրուկ փոփոխություն Մերձավոր Արեւելքում:

- Բարեբախտաբար, Օբամայի վերընտրությունը նվազեցնում է Իրանի դեմ պատերազմի վտանգը եւ քաջալերում Իրանի ու Արեւմուտքի միջեւ դիվանագիտական երկխոսությունը: Փոքր եւ շրջափակված Հայաստանի համար, որն ունի երկու փակ սահմաններ, այլ ընտրություն չի մնում, քան առնչվել Իրանի հետ: Թեպետ այս տարածաշրջանային իրականությունը հասկանալի է, սակայն Հայաստանը կարող է նոր ճնշման տակ հայտնվել Արեւմուտքի կողմից, որպեսզի սահմանափակի շփումներն Իրանի հետ եւ, միաժամանակ, Իրանի կողմից՝ որպես փոքր, սակայն հարմարավետ աղբյուր, պատժամիջոցները չեզոքացնելու եւ

շրջանցելու նպատակով: Այս առումով Հայաստանին երեք փորձություններ են սպասվում. ա/ ավելի մեծ ուշադրություն դարձնել Իրանի հետ գործունեությանը բիզնեսի ոլորտում Արեւմուտքին չեզոքացնելու նպատակով, բ/ կանխել իրանական կողմից եկող ցանկացած քայլ, որը կդրդի Հայաստանին՝ շրջանցել պատժամիջոցները, եւ գ/ նախապատրաստել արտակարգ իրավիճակային ծրագիր իրանական ուժերի կողմից վրեժի նպատակ հետապնդող ասիմետրիկ հարձակումները կանխելու կամ Իրանի դեմ ռազմական գործողությունների դեպքում ներգաղթյալների զանգվածային հոսքը վերահսկելու նպատակով:

- Հնարավոր համարո՞ւմ եք միջազգային գործընթացների ազդեցությունը 2013թ. փետրվարի 18-ին Հայաստանում սպասվելիք նախագահական ընտրությունների ընթացքի եւ արդյունքի վրա:

- Միանշանակ: Անցած տարվա իրադարձություններն անմիջականորեն կանդրադառնան գալիք նախագահական ընտրությունների վրա: Նախընտրական դաշտում, սակայն, շարունակում են ավելի գերիշխել անձերի բախումները, քան՝ քաղաքականությունների: Նախկին նախագահներ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Ռոբերտ Քոչարյանի ամբիցիաներն ու գործունեությունը շարունակում են լուրջ ուշադրության եւ շահարկումների առարկա մնալ: Նախկին նախագահների պարագայում անհավանական եմ համարում, որ նրանցից որեւէ մեկն առաջադրի իր թեկնածությունը 2013թ. նախագահական ընրություններում: Ավելի խորը խնդիրը, սակայն, այն է, որ քաղաքականության մեջ շարունակում են գերիշխել անձերը, այլ ոչ թե գաղափարների շուրջ քննարկումները: Հետեւաբար, գալիք նախագահական ընտրությունները չպետք է վերածվեն «հայտնիության մրցույթի», այլ Հայաստանի ժողովրդին առաջարկեն ռազմավարական տեսլականի ընտրություն: Փորձությունը պետք է հիմնված լինի թեկնածուների պլատֆորմի եւ գաղափարների վրա, թե ինչ քաղաքականություն է նա առաջարկում: Սա իրական փորձություն է ճշմարիտ առաջնորդությունը որոշելու համար, թե ինչպիսի Հայաստան է խոստացվում կամ առաջարկվում ընտրողներին: Շատ երկար ժամանակ է, որ հայաստանցիները չեն ունեցել իրական ընտրություն եւ իրական ձայն Հայաստանի քաղաքականության մեջ: Դա պետք է փոխվի:

- Շնորհակալություն հետաքրքիր զրույցի համար:

Интервью номера

РИЧАРД КИРАКОСЯН

О региональных и внешнеполитических вызовах и их взаимосвязи

The Interview of the Issue

RICHARD GIRAGOSIAN

On Regional and Foreign Policy Challenges and Their Correlation

Հայաստանի արտաքին եւ ներքին քաղաքականության ձեւավորման միջազգային պայմանները. 2012թ.

ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ
Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) տնօրեն

Այս տարվա սեպտեմբերի 24-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդես եկավ Լոս Անջելեսի քաղաքագիտական կենտրոնում, որտեղ ներկայացրեց Հայաստանի կողմից վարվող արտաքին քաղաքականությունը՝ նշելով, որ Հայաստանն իրականացնում է բազմավեկտոր քաղաքականություն: «Մեր արտաքին քաղաքականության հիմնական նպատակը Արեւելքի եւ Արեւմուտքի, Հյուսիսի եւ Հարավի երկրների հետ հարաբերությունների խորացումն ու համագործակցության ոլորտների բազմապատկումն է: Մեր գործընկերների հետ հարաբերություններ կառուցելիս եւ զարգացնելիս մենք ղեկավարվում ենք այնպիսի սկզբունքներով, ինչպիսիք են փոխադարձությունը, վստահությունը, բարի կամքը, միմյանց շահերի հարգումը: Հենց այս սկզբունքներն են ընկած ՌԴ-ի հետ մեր ռազմավարական համագործակցության, ԱՄՆ-ի հետ բարեկամական հարաբերությունների, ԵՄ-ի հետ ակտիվ փոխգործակցության եւ գործընկեր երկրների հետ ամուր կապերի հիմքում»[1]:

Նմանատիպ ընդհանրական ձեւակերպումը թույլ չի տալիս պարզել արտաքին քաղաքականության ռազմավարական ուղղությունը եւ արտաքին քաղաքական հարաբերությունների բովանդակությունը: Հայաստանի քաղաքական ուժերի «արեւմտամետ եւ ռուսամետ» կողմնորոշման վերաբերյալ չդադարող բանավեճի խորապատկերին Նալբանդյանի հայտարարությունը թողնում է առավել անորոշ տպավորություն: Առաջին հերթին պարզ չէ՝ ինչպիսի արտաքին ռեսուրսներ է որոնում Հայաստանն իր շահերը սպասարկելու համար: Այսպիսի պայմաններում հիմնազուրկ չեն կարծիքներն այն մասին, որ որոշիչ գործոնները Հայաստանի ներկա իշխանությունների կայունությունն ապահովող արտաքին միջոցներն են: Համենայն դեպս, Հայաստանի ղեկավարության ոչ մի գործողություն չի կարող հարվածի տակ դնել վերոհիշյալ ռեսուրսները: Համապատասխանաբար՝ տարբեր վեկտորների մեջ անհրաժեշտ է տարանջատել «հիմնականները», որոնք ձեւավորում են Հայաստանի արտաքին քաղաքական ջանքերի ռազմավարական

ուղեգիծը: Այսինքն՝ արտաքին քաղաքական վեկտորները որոշվում են ներքին քաղաքական պահանջներով պայմանավորված:

Վերոնշյալ փաստարկը կարեւոր է, բայց ոչ բավարար արտաքին եւ ներքին չափումներում Հայաստանի քաղաքականությունը բնութագրելու համար: Անհրաժեշտ է երեւան հանել միջազգային պայմանները, որոնցում մշակվում է Հայաստանի քաղաքականության այս կամ այն վեկտորը: Հաշվի առնելով Հայաստանի խիստ կախվածությունը արտաքին ռեսուրսներից՝ վերջին հանգամանքը կարեւոր իմաստ է ձեռք բերում: Այն առավել մեծ նշանակություն է ստանում՝ պայմանավորված Հայաստանի հարեւան երկրների քաղաքական պահվածքի միտումներով: Չէ՞ որ, եթե փորձենք բնութագրել շահերի դասավորությունը Հարավային Կովկասում, ինչպես նաեւ այստեղ ծավալվող քաղաքական գործընթացների բնույթը, ապա անհրաժեշտ է գնահատել այդ տարածաշրջանի երկրների հիմնական ձգտումը. այն է՝ արտաքին հովանավորների եւ տնտեսական ու ռազմական զարգացման ռեսուրսների փնտրտուք: Առավել առարկայորեն՝ տարածաշրջանի երկրների կողմից «փրկության» ուղիների փնտրտուք միմյանցից եւ հարեւան տերությունների հավակնություններից:

Վերջին հանգամանքի բնութագիրը շատ կարեւոր է՝ հասկանալու համար տարածաշրջանի յուրաքանչյուր երկրի քաղաքականության մշակման եւ վարման տրամաբանությունը: Քաղաքական իմաստով միասնական տարածաշրջան գոյություն չունի. գոյություն ունի եւ զարգանում է ուժային կենտրոնների եռանկյունի, որը բացառում է ռազմավարական մակարդակում որեւէ տարածաշրջանային համագործակցություն: Վրաստանը պահպանում է ՆԱՏՕ-ին եւ Եվրամիությանը ինտեգրվելու իր ուղեգիծը՝ սոսկ ձեւականորեն արձանագրելով տարածաշրջանային ինտեգրացիայի նախաձեռնություններում իր առաջնորդող դերը (հարավկովկասյան միասնական տարածքի կազմավորման անհրաժեշտության մասին հայտարարությունների մակարդակով): Հայաստանն ավելի ու ավելի կուռ է ինտեգրվում ՀԱՊԿ ռազմական դաշինքին՝ մնալով շրջափակման մեջ Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից: Ադրբեջանը ռազմականացման եւ Թուրքիայի հետ միության ուղղություն է վերցրել: Այս բոլոր ձգտումների վրա կախված է Ռուսաստանի ստվերը, որը փորձում է վերականգնել իր ազդեցությունը տարածաշրջանում եւ թույլ չտալ ՆԱՏՕ-ի եւ Եվրամիության մուտքը տվյալ տարածաշրջան:

Ուշագրավ է, որ նկարագրված շահերի եւ փոխհարաբերությունների գծապատկերը փոփոխությունների չի ենթարկվում: Սակայն նույնքան կարեւոր է, որ պարբերաբար փոփոխվում են տարածաշրջանի երկրների ակտիվ գործողությունների գերակա ուղղությունները: Այդ վերափոխումները ոչ պակաս չափով են

ազդում այն պայմանների վրա, որոնցում ձեւավորվում է բոլոր երկրների՝ այդ թվում Հայաստանի քաղաքականությունը: Նման ակտիվ գործողությունների գերիշխող ուղղությունները կարելի է կոչել անցկացվող արտաքին եւ ներքին քաղաքականության «քաղաքական լեյտմոտիվներ»: Հաճախ դրանք սոսկ իրական քաղաքականության արտաքին թաղանթն են: Մասնավորապես վերջին հինգ տարվա ընթացքում Հայաստանի արտաքին եւ ներքին քաղաքականության տրամաբանությամբ են թելադրված հայ-թուրքական հարաբերություններում առաջացած բնականոնացման գործընթացը, ինչպես նաեւ ռուս-վրացական պատերազմի (2008թ. օգոստոս) խորապատկերին Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների կողմից ստորագրված Մայնդորֆյան համաձայնագիրը:

Այս երկու գործընթացները ոչ այնքան իրատեսական նպատակ էին հետապնդում, որքան հանդես էին գալիս իբրեւ «արդարացում» ղեկավարության կողմից վարվող քաղաքականության: Իշխանությունների ցանկացած գործողություն շաղկապված է այդ գործընթացների ռազմավարական գաղափարի ուղեգծին: Եվ ոչ միայն իշխանությունը, այլեւ ընդդիմությունը նույնպես իր ակտիվության բնույթը հիմնավորում էր այդ զարգացումների գործոնով: Սկսած 2010թ.-ից, սակայն, նրանք կորցրին իրենց ազդեցությունը երկրի եւ տարածաշրջանի վրա՝ կապված այն բանի հետ, որ այդ գործընթացներում հայտնվեցին լճացման եզրին: Նրանց տեղը գրավեց Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշմանը վերաբերող բանավեճը: Եվ նորից «ռազմավարական վեկտորի ընտրության անհրաժեշտության» մասին առասպելը դարձավ ցանկացած որոշումների արդարացման համապարփակ մեխանիզմ: Կան բոլոր հիմքերը՝ պնդելու, որ վերջին հանգամանքը հերթական «քաղաքական լեյտմոտիվն է», որը բոլորովին չի արտացոլում իրավիճակի իրական պարամետրերը եւ թելադրում է Հայաստանի արտաքին ու ներքին քաղաքականության ռազմավարությունը: Իրավիճակն ինքնին չափազանց բարդ է, ինչին էլ անհրաժեշտ է անդրադառնալ ավելի մանրամասն:

Հայաստանի «արեւմտամետ» եւ «ռուսամետ» քաղաքականությունը. ինչ է կատարվում իրականում

Տարածաշրջանային ինտեգրացիայի այս կամ այն կենտրոնի նկատմամբ Հայաստանի կողմնորոշման հարցը հաճախ ներկայացվում է որպես Հայաստանի հիմնական արտաքին քաղաքական խնդիր: Այս հարցն իրականում դուրս չի գալիս օրակարգից: Մասնավորապես ուշադրության կենտրոնում ավելի շատ է

հայտնվում Եվրամիության ծրագրերի եւ հետխորհրդային տարածքում Եվրասիական միության ստեղծման գաղափարի փոխհարաբերության հարցը: Նշված թեման իրականում Հայաստանի քաղաքականության համակարգ ձեւավորող գործոն է, թե՞ օբյեկտիվորեն կարեւոր խնդիրները դուրս են քննարկվող երկընտրանքի շրջանակից. հարց, որը հատուկ քննարկում է պահանջում: Կան բոլոր հիմքերը ենթադրելու, որ տվյալ թեմայով խոսակցությունների հետեւում տարածաշրջանի բոլոր երկրների վրա բոլորովին այլ շարժառիթների եւ խնդիրների թելադրանքն է զգացվում:

Հետխորհրդային տարածքի երկրների՝ Եվրամիության ծրագրերին ինտեգրվելու տարիների փորձը ցույց է տալիս, որ շատ քիչ բան է փոխվել այդ պետությունների իրողությունների մեջ: Նրանց մոտ արագընթաց զարգացման զգալի ռեսուրսներ չհայտնվեցին: Միայն 2012թ. Հայաստանի համար բացվեց մշուշոտ հեռանկար զգալի ռեսուրսներ ստանալու՝ այն էլ բավական բարդ պայմաններով (որոշակի ժողովրդավարական չափանիշներին համապատասխանություն): Ինտեգրացիոն միտումների էլ ավելի համոզիչ անսկզբունքայնության ցուցադրում է ԱՊՀ-ի քսանամյա փորձը: Այդ կազմակերպությունը հաստատեց լոկ մի ճշմարտություն. ԱՊՀ-ն ստեղծված է քաղաքակիրթ ապահարզանի համար (Ռուսաստանի նախագահ Վ. Վ. Պուտինի խոսքերը): Համապատասխանաբար՝ ներկա ժամանակահատվածում նույնպես գոյություն ունեցող միությունների մեջ ինտեգրացիայի գաղափարներն ընկալվում են առաջին հերթին որպես առաջարկ կողմնորոշվելու դեպի ուժի կենտրոնների ազդեցության ոլորտներ:

Ինչ է իրենից ներկայացնում Եվրասիական միության գաղափարը: Որոշ ռուս փորձագետներ փորձում են զուգահեռներ անցկացնել Եվրամիության հետ՝ այդպիսով փարատելով շատ հետխորհրդային երկրների մտահոգությունները, որոնք այդ գաղափարի հետեւում տեսնում են Ռուսաստանի գերիշխող դերակատարմամբ նոր միութենական պետության վերածննդի ռազմավարության հենքը: Ոչ մի կոնկրետ հետազոտություն, սակայն, ենթադրվող Եվրասիական միության արժեքների, սկզբունքների եւ նպատակների մասով որեւէ մեկը մինչեւ այժմ չի ներկայացրել[2]: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Եվրամիության էությունը նրա անդամների համար համապարփակ չափանիշների համակարգը եւ հստակ արժեքային ու սկզբունքային բազան է, ապա նրա ցանկացած կրկնօրինակի ստեղծման նախաձեռնողները հետխորհրդային տարածքի վրա առաջին հերթին պետք է ցուցադրեն համանման փիլիսոփայություն: Դրանից զատ՝ Եվրամիությունը տարբերվում է իր կազմի մեջ ինքնուրույն պաշտպանական կառույցի բացակայությամբ (Եվրամիության անդամ երկրների պաշտպանության

համակարգը կապակցված է ՆԱՏՕ-ին):

Եվրասիական միության ստեղծման ռազմավարության մեջ իրականում դրսեւորվում են միայն առանձին ինտեգրացիոն միտումներ առանց սկզբունքների միասնականության եւ որեւէ արժեքի հռչակման: Ավելին՝ գոյություն ունեցող բոլոր ինտեգրացիոն նախագծերն իրենց մեջ ներառում են մասնակից երկրների տարբեր կոնտինգենտներ՝ քաղաքական համակարգերի զարգացման տարբեր աստիճանով: Նշված տարբեր ինտեգրացիոն միտումների ակնառու դրսեւորումներ են ՀԱՊԿ-ի, ԵվրԱզԷՍ-ի, Ռուսաստանի, Բելառուսի եւ Ղազախստանի Մաքսային միության՝ Մոսկվայում դեկտեմբերի 19-ին կայացած համաժողովները, ինչպես նաեւ սեպտեմբերի 15-19-ը Հայաստանում անցկացված ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի «Համագործակցություն-2012» զորավարժությունները՝ Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի եւ Տաջիկստանի ռազմական ուժերի կոնտինգենտների եւ հատուկ նշանակության կազմավորումների ու օպերատիվ խմբերի մասնակցությամբ: Այս շարքում է տեղ գրավում նաեւ դեկտեմբերի երկրորդ կեսին նախատեսվող Միութենական պետության (Ռուսաստան-Բելառուս) բարձրագույն պետխորհրդի նիստի գումարումը: Ռուսաստանի ղեկավարությունը չի թաքցնում, որ այդ համաժողովների երթի նպատակը «Նոր հիմնադիր փաստաթղթի՝ Եվրասիական տնտեսական միության պայմանագրի նախապատրաստությունը գործնական փուլ մտցնելն է, որի նախագիծն արդեն ներկայացվել է բոլոր շահագրգիռ կողմերին՝ նախապատրաստության համար»[3]:

Վերը նշված միությունների հենց միայն բնույթը մատնանշում է մի առանձնահատկություն. նրանցում բացակայում է միասնական արժեքային եւ սկզբունքային բազան: Ինտեգրացիան հենվում է տարբեր հարթություններում գտնվող միջպետական պայմանագրերի վրա՝ կախված յուրաքանչյուր միավորման նպատակից եւ գործառույթից: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ ոչ բարձրագույն նպատակներ են հայտարարվել ոչ թե ունիվերսալ չափանիշները, այլ երկկողմ եւ բազմակողմ պայմանագրերի աճող համալիրը: Ընդ որում՝ միասնական արժեքներն ու սկզբունքներն անտեսվում են: Ի սկզբանե հասկանալի է, որ առանց մեկ տերության՝ Ռուսաստանի գերիշխանության, նման ինտեգրացիոն համակարգը գործել չի կարող: Համապատասխանաբար՝ հարկ չկա խոսելու Եվրամիության մի նոր տարբերակի մասին:

Վերը բերված փաստարկները թույլ են տալիս բնորոշել ցանկացած երկրի ընտրություն, որը կանգնած է եվրաինտեգրացման կամ Եվրասիական միության շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների մեջ մտնելու խնդրի առջեւ:

Հայաստանի մասով կարելի է առանձնացնել հետեւյալ մոտեցումները.

1. Ռուսաստանի եւ ՀԱՊԿ-ի ռազմաքաղաքական ներուժի ոլորտում Հայաստանի ամբողջական ներգրավվածությունը որոշիչ հանգամանք է: Ինտեգրացիոն ռազմավարության ցանկացած ընտրություն կախված է հենց այս հանգամանքից: Հնարավոր է միայն այն ռազմավարությունը, որը հակասության մեջ չի մտնում անվտանգության ձեւավորված համակարգի հետ: Նման ռազմավարության հնարավորությունների միջակայքի ընդլայնումը հնարավոր է միայն Ռուսաստանի ջանքերի սահմանափակմանն ուղղված գործոնների ձեւավորման պարագայում:
2. Հաջորդ որոշիչ հանգամանքն այս կամ այն ինտեգրացիոն նախագծի ռազմավարական արդյունավետության գործոնն է: Նախագծերի արժեքավորությունը պայմանավորված է նրանով՝ ինչ ռեսուրսներ է տալիս Հայաստանին այդպիսի նախագծի իրականացումը: Եթե այդ տեսանկյունից դիտարկենք եվրաինտեգրացումը եւ Եվրասիական միություն մտնելու նախագիծը, ապա այս ռազմավարություններում կարելի է նշմարել լոկ ներուժային քաղաքական ռեսուրսներ: Առանձնակի տնտեսական եւ իրավական փոփոխություններ Հայաստանի համար այս միությունները խոստանալ չեն կարող:
3. Երրորդ հանգամանքը Հայաստանի անկախության աստիճանի բարձրացման հեռանկարն է: Երկրի անկախության ինտերվալի ընդլայնումը դիտվում է որպես կենսական կարեւոր նպատակ: Այս իմաստով եվրաինտեգրացիան հետաքրքրություն է ներակայացնում իբրեւ Հայաստանի անկախության աստիճանի բարձրացումն ապահովող գործոն: Սույն հանգամանքը գիտակցվում է Հայաստանի ղեկավարության կողմից: Այն գիտակցում է նաեւ Ռուսաստանի ղեկավարությունը, որը նրանում իր շահերին սպառնալիք է տեսնում Հարավկովկասյան տարածաշրջանում:

Հաշվի առնելով բերված հանգամանքերը՝ Հայաստանն ընդունել է ինտեգրացիոն ռազմավարություն, որի էությունը սեպտեմբերի 12-ին արտահայտեց վարչապետ Տիգրան Սարգսյանը[4]. «Եվրամիության հետ ինտեգրացիոն գործընթացները ոչ մի դեպքում չեն կարող հակադրվել ԱՊՀ-ի եւ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում ինտեգրացիոն գործընթացներին: Մենք դիտարկում ենք այս գործընթացները որպես փոխլրացնող»: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Հայաստանը ոչ միայն խորացնում է համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ միջազգային անվտանգության հարցերում, բայցեւ ակտիվորեն հրավիրում է այդ կազմակերպութ-

յանը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում մասնակցության, ապա Հայաստանի ռազմավարության մեջ անհրաժեշտ է նկատել անկախության ավելի բարձր աստիճանի հասնելու նպատակ: Այսինքն՝ քաղաքականության շարժիչ ուժն ունի այլ երանգներ, որոնք կապահովեն արտաքին աջակցություն՝ առանց կախվածության աստիճանի խորացման: Իրականում, սակայն, այդպիսի քաղաքականությունը ստեղծում է նոր խնդիրներ:

Ռուսաստանի հետ հակասությունները եւ նրա թելադրանքի զսպման միջոցները

Այստեղ հակասությունները Ռուսաստանի գործադրած ջանքերի հետ չեն կարող աննկատ մնալ: Նշանակալից են նաեւ Ռուսաստանի ճիգերը տվյալ ռազմավարությունից Հայաստանին ետ պահելու առումով: Ամենավառ վկայությունը ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության դեսպան Վ. Ե. Կովալենկոյի՝ սեպտեմբերի 11-ին «Նովոստի-Արմենիա» լրատվական գործակալությանը տված հարցազրույցն է, որտեղ նա հիշեցնում է. «Հենց Ռուսաստանը, ինչպես բազմիցս եղել է պատմության ընթացքում, հանդես եկավ որպես Հայաստանի անվտանգության երաշխավոր՝ պահպանելով նրա ինքնությունը եւ այսօր էլ գտնվում է իր դաշնակցի կողքին: Ռուսաստանը խոշորագույն արտասահմանյան ներդրողն է Հայաստանի տնտեսության մեջ եւ նրա հիմնական առեւտրային գործընկերը… Մեր ընկերություններն այստեղ աշխատում են գործնականապես բոլոր ոլորտներում՝ ապահովելով Հայաստանի բյուջեն, աշխատանք տալով հազարավոր մարդկանց… Մենք կանգնած ենք Հայաստանի գյուղատնտեսության մեջ ներդրումների վերաբերյալ համաձայնագրի կնքման շեմին: Նոր ատոմային բլոկի նախագծային մշակումներ են իրականացվում: Մոտակա ժամանակում Հայաստանը կվավերացնի ԱՊՀ-ի տարածքում Ազատ տնտեսական գոտիների մասին համաձայնագիրը… Ռուսաստանը հետաքրքրված է ուժեղ, մրցունակ եւ զարգացած Հայաստանով, քանի որ դա բարձրացնում է մեր դաշնակցային հարաբերությունները նոր որակական աստիճանի»[5]:

Հարցը հետեւյալն է. ունի՞ արդյոք Ռուսաստանն ընտրություն Հայաստանին եվրաինտեգրացիայից ետ պահելու առումով: Բավարա՞ր են արդյոք Հայաստանին զսպելու նրա միջոցները: Ավելի շուտ առաջանում է համընդհանուր համոզմունք, որ այդ միջոցները բավարար չեն: Ռեսուրսների այդ պակասը կարելի է լրացնել բացառապես Հայաստանի ուղղակի պարտավորություններով: Ամենեւին էլ պատահական չէ ընդունված ՀԱՊԿ անդամ երկրներում ռազմական ենթա-

կառուցվածքի օբյեկտների տեղադրման մասին Արձանագրությունը: Սեպտեմբերի 15-19-ը Հայաստանում անցկացված ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի զորավարժությունների խորապատկերին, որի դիպաշարի համաձայն՝ ՀԱՊԿ անդամ երկիրը հարկադրված է ռազմատեխնիկական օգնության խնդրանքով դիմել ՀԱՊԿ-ին, եւ նրա տարածքում տեղակայվում են արագ արձագանքման հավաքական ուժերը, նշված Արձանագրության ընդունումը վկայում է, որ Ռուսաստանը զինվում է «քաղցրաբլիթի եւ մտրակի» ռազմավարությամբ: Հայաստանի անվտանգության ապահովման գինն անշեղորեն բարձրանում է անիրավահավասար պայմանագրերի հաշվին:

Ռուսաստանի նոր ռեսուրսներից է նաեւ Ադրբեջանին լուրջ ռազմական տեխնիկա մատակարարելու քաղաքականությունը (վերջին տարիներին Ադրբեջանին վաճառվել են մարտական ուղղաթիռներ եւ C-300 համակարգեր): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանն այլ երկրներից նման կարգի զենքեր գնելու հնարավորություն չունի, Ռուսաստանի նման քաղաքականությունը ստիպում է Հայաստանին երկյուղով վերաբերվել ցանկացած քայլի, որը կսասանի Ռուսաստանի մենաշնորհային դիրքը Հայաստանի անվտանգության համակարգում. Ռուսաստանի նման քաղաքակությանը դիմագրավելու ոչ մի հնարավորություն դեռեւս չկա: Փաստացիորեն Ռուսաստանը Հայաստանի համար ստեղծել է քաղաքական ծուղակ. ուժեղացնելով նրա հակառակորդին եւ պայմաններ ստեղծելով նրա քաղաքացիների՝ դեպի Ռուսաստան արտահոսքի համար, վերջինս ստիպում է Հայաստանին ավելի մեծ հոժարակամությամբ ուժեղացնել ռուսական ռազմական ներկայությունն իր սեփական տարածքում: Ռուսաստանի այսպիսի քաղաքականության չեզոքացման համար Հայաստանն առայժմ չունի որեւէ գործուն հնարավորություն: Նրանք կարող են միայն առաջանալ տարածաշրջանում անվտանգության պայմանների կտրուկ փոփոխման դեպքում:

Զորքերի շփման գիծը Լեռնային Ղարաբաղում

Արտաքին առաջնահերթությունների ցանկացած փոփոխման դեպքում Հայաստանի քաղաքականության մշակման եւ իրագործման պայմանների թելադրող կարեւոր հանգամանքը շարունակում է մնալ Լեռնային Ղարաբաղի շուրջ կոնֆլիկտային իրադրությունը: Լեռնային Ղարաբաղում զորքերի շփման գիծը մնում է ոչ միայն հարավկովկասյան տարածաշրջանում բոլոր շահագրգիռ ատյանների, այլեւ Հայաստանի բոլոր գործողությունների առանցքային կարգավորիչը: Իր տեսակի մեջ եզակի մի իրավիճակ, երբ առանց խաղաղապահ ուժերի

ներկայության հրադադարը պահպանվում է արդեն տասնութ տարի, թելադրում է ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային գործընթացների զարգացման բնույթը: Ընդ որում՝ հակամարտ կողմերի բանակներն ավելացնում են իրենց ռազմական ներուժը՝ ավելի ու ավելի փոփոխելով ուժերի հաշվեկշռի բնույթը եւ ողջ տարածաշրջանի անվտանգության խնդիրները:

Տվյալ հանգամանքն անընդհատ վերափոխում է կոնֆլիկտային իրավիճակի նկատմամբ միջազգային հանրության վերաբերմունքը: Առաջին հերթին՝ երեւան է գալիս այն ըմբռնումը, որ հակամարտության տարածաշրջանում պատերազմի վերսկսումը դառնում է նույնքան խնդրահարույց, որքան եւ հակամարտության խաղաղ կարգավորումը: Հնարավոր պատերազմը դուրս է գալիս լոկալ տարածաշրջանային խնդիր լինելու շրջանակներից եւ ստանում պայթյունավտանգ խնդրի բնույթ ամբողջ աշխարհի համար: Վերջին հանգամանքը փոխակերպում է նաեւ Հայաստանի ղեկավարության կողմից իրականացվող քաղաքականության պայմանները:

Օրինաչափ է, որ հրադադարի պայմանակարգի ամրապնդումը դառնում է միջազգային դիվանագիտության գլխավոր խնդիր: Արդեն մեկ տարուց ավելի է՝ «հրադադարի պայմանակարգի խախտումների հետաքննության մեխանիզմի վրա կատարվող աշխատանքը» ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների գլխավոր գործառույթն է: 2012թ. մայիսի 11-14-ը տարածաշրջան կատարած վերջին այցի ժամանակ Մինսկի խմբի համանախագահները, ինչպես նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչը նորից հանդես եկան հայտարարությամբ, որում առաջին հերթին հիշեցրին Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների կողմից հունվարի 23-ին Սոչիում ընդունված պարտավորությունների՝ հրադադարի պայմանակարգի խախտումների հետաքննության մեխանիզմին առնչվող աշխատանքներ կատարելու, ինչպես նաեւ հումանիտար շփումները կարգավորելու մասին:

Զորքերի շփման գծում զինադադարի պայմանակարգի վերահսկման ուղղությամբ միջնորդների ուշադրության կենտրոնացումը նկատելիորեն ուժեղացավ սկսած 2011թ.-ից: 2011թ. մարտի 5-ին Սոչիում (Կրասնայա Պոլյանա) Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպման ժամանակ ընդունվել է համատեղ հայտարարություն, որում նշվում է կողմերի ձգտումը՝ «բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ միջոցներով եւ կողմերի մասնակցությամբ անցկացնել շփման գծի երկայնքով հնարավոր միջադեպերի հետաքննություն՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո եւ ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցչի աջակցությամբ»:

Սակայն 2011թ. հունիսի 24-ի բանակցությունների փաստացի ձախողումը Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների՝ Կազանում հաջորդ հանդիպման ժամանակ տվյալ պայմանավորվածությունն իրագործելու հնարավորություն չստեղծեց: Ավելին՝ 2011թ. դեկտեմբերին ԵԱՀԿ մշտական խորհրդում Միացյալ բյուջեի քննարկման ժամանակ Ադրբեջանը մերժեց բյուջեի մեծացման մասին ԵԱՀԿ նախագահի անձնական ներկայացուցչի առաջարկը, որպեսզի պայմանավորվածությունները, որին Սոչիի հանդիպման ընթացքում հասել էին Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները, տեղափոխվեն գործնական հարթակ, այն է՝ շփման գծի երկայնքով հրադադարի պայմանակարգի խախտման դեպքերի հետաքննության մեխանիզմների ստեղծում:

2012թ. հունվարի 23-ին՝ Սոչիում Ռուսաստանի, Հայաստանի, Ադրբեջանի նախագահների հանդիպման ընթացքում, տվյալ թեման նորից հայտնվեց ուշադրության կենտրոնում: Այդ ժամանակ Ռուսաստանի նախագահի աշխատակազմի հայտարարության մեջ նշվում էր, որ «… այժմ կարեւոր է հետաքննությունների անցկացման մեխանիզմին վերաբերող աշխատանքն ավարտել սեղմ ժամկետներում»: Նույն կարծիքին էին նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները:

Հարկ է նշել, որ հետաքննությունների անցկացման համապատասխան մեխանիզմ իրականում վաղուց արդեն մշակված է: Խոսքը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ հակամարտության երեք կողմերի (Ադրբեջան, Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն) միջեւ 1995թ. փետրվարի 6-ին ստորագրված համաձայնագրի մասին է: Փաստաթղթում մանրամասն շարադրված է գործողությունների ալգորիթմը՝ ուղղված զինված միջադեպերի կանխմանը եւ հրադադարի պայմանակարգի ամրապնդմանը: Այսինքն՝ տվյալ թեման նոր չէ. խնդիրը բոլորովին այլ է:

Ադրբեջանն այդ աշխատանքը դժկամությամբ է կատարում, քանզի շփման գծում նպատակաուղղված խախտումներն արդեն վաղուց դարձել են այդ երկրի դիվանագիտության (այսպես կոչված՝ «ռազմական դիվանագիտության», ինչի մասին հայտարարել են պաշտոնատար անձինք) բաղադրիչը: Հայաստանի եւ միջնորդների հետ հարաբերություններում նման մեխանիզմի հաստատումը կհանգեցներ բանակցություններում Ադրբեջանի դիրքերի բարդացման, որտեղ պատերազմի շանտաժը ադրբեջանական դիվանագիտության կողմից ճնշման կարեւոր բաղկացուցիչ մասն է: Հայաստանի համար հրադադարի պայմանակարգի խախտման հետաքննության մարմնի ձեւավորումը ձեռնտու է, քանի որ վերջերս Հայաստանը Ադրբեջանի կողմից յուրաքանչյուր խախտմանն ի պա-

տասխան՝ զինվել է «պատժիչ գործողություններ» կատարելու սկզբունքով: Հասկանալի է, որ Հայաստանին քաղաքական առումով ձեռնտու են խախտման յուրաքանչյուր դեպքի հետաքննությունն ու փաստաթղթավորումը:

Տվյալ հանգամանքը 2012թ. հունիսի 14-ին մանրամասն պարզաբանել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Էլմար Մամեդյարովը ԵԱՀԿ գործող նախագահ Իմոն Գիլմորի հետ Բաքվում կայացած համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ: Նրա խոսքով՝ «Ադրբեջանը տվել է իր համաձայնությունը զինված ուժերի շփման գծում միջադեպերի հետաքննության մեխանիզմ ներմուծելու եւ դիպուկահարներին հեռացնելու առումով: Այդ մեխանիզմը, սակայն, կարող է աշխատել, երբ հայկական զորքերը սկսեն հեռանալ Ադրբեջանի օկուպացված տարածքներից: Միայն այս դեպքում կարելի է մեխանիզմը գործի դնել: Եթե այս մեխանիզմը սկսենք կիրառել այժմ, ապա դա կարող է նշանակել լոկ գոյություն ունեցող ստատուս-քվոյի ամրապնդում, որն անընդունելի է»[6]:

Այսպիսով՝ հետաքննությունների անցկացման մեխանիզմի իրականացումը դեմ է առնում ոչ թե ալգորիթմի բացակայության փաստին, այլ Ադրբեջանի քաղաքական դիրքորոշմանը: Այս մեխանիզմում նկատվում է վտանգ նրա շահերին: Նշված հանգամանքի ամենաթարմ հաստատումը Ադրբեջանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Էլման Աբդուլաեւի՝ 2012թ. հունիսի 19-ի հայտարարությունն է: Մեկնաբանելով G20-ի գագաթաժողովին Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահների համատեղ հայտարարությունը[7], նա նշեց. «Ադրբեջանը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները եւ միջազգային հանրությունն ամբողջությամբ միասնական տեսակետ ունեն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում… Բաքվի դիրքորոշումն անփոփոխ է. հայկական զինված ուժերը պետք է լքեն ադրբեջանական գրավյալ տարածքները**:** Շփման գծում **դրանից հետո կդադարեն միջադեպերը»:**

Փաստորեն պաշտոնական Բաքուն չի թաքցնում, որ **միջադեպերը Հայաստանին զիջումների պարտադրելու քաղաքականության բաղկացուցիչ մասն են կազմում**: Իսկ շահագրգիռ պետությունները ճարպկորեն օգտվում են Ադրբեջանի քաղաքականությունից՝ տարածաշրջանում իրենց ներկայությունն ուժեղացնելու նպատակով: Միջնորդ տերությունների ուղեգիծը չի փոխվում: 2012թ. հունիսի 19-ին Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահները Լոս-Կաբոսում ընթացող G-20 գագաթաժողովի ժամանակ Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաբերյալ հանդես եկան համատեղ հայտարարությամբ: Նրանում ափսոսանք է հայտնվում առ այն, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները չձեռնարկեցին վճռական քայլեր, որոնք շարադրված են 2011թ. մայիսի 26-ին Դովիլում

ընդունված նրանց համատեղ հայտարարության մեջ: Ընդ որում, պետությունների ղեկավարները նորից կոչ արեցին Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներին կատարել 2012թ. հունվարի 23-ի հանդիպմանը ստանձնած իրենց պարտավորությունները: Միջնորդ երկրների նախագահներն ընդգծեցին, որ հակամարտությունը չի կարող լուծվել ռազմական ճանապարհով. «Միայն խաղաղ կարգավորումը կարող է թույլ տալ ողջ տարածաշրջանին դուրս գալ ստատուս-քվոյի շրջանակներից դեպի անվտանգ եւ ծաղկուն ապագա»:

Այդ ժամանակաշրջանում տվյալ հայտարարությունն ուշագրավ էր երկու հանգամանքի պատճառով: Առաջին՝ դա վկայում է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հետ Փարիզում հունիսի 18-ին կայացած հերթական հանդիպման ժամանակ հակամարտության կողմերին նոր առաջարկներ չեն ներկայացրել: Երկրորդ՝ նախագահներն իրենց ուշադրությունը կենտրոնացրել են զորքերի շփման գծի երկայնքով հրադադարի պայմանակարգի ռեժիմի վերահսկման հայեցակարգի (հենց դա էր Սոչիում 2012թ. հունվարի 23-ի հանդիպման պարտավորության առարկան)[8]: Այսինքն՝ համանախագահող երկրների դիրքորոշման մեջ որեւէ նոր փոփոխություն տեղի չի ունեցել:

Փարիզում նախարարների հանդիպման նկատմամբ ավելի մեծ հույսեր էին տածում՝ կապված այն բանի հետ, որ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը 2012թ. հունիսին՝ Հարավային Կովկաս իր այցի ժամանակ, հայտարարեց. «Ուժի կիրառումը չի լուծի Ղարաբաղյան հակամարտությունը… Վաշինգթոնը կշարունակի ջանքեր գործադրել եւ նոր առաջարկներ կներկայացնի»[9]: Նրա խոսքով՝ Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների փարիզյան հանդիպմանը կառաջարկվեն Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման նոր մոտեցումներ: Այդ մասին Քլինթոնը հայտարարեց հունիսի 6-ին Ադրբեջանի ԱԳՆ ղեկավար Էլմար Մամեդյարովի հետ Բաքվում կայացած համատեղ մամուլի ասուլիսում: Տառացիորեն նա ասել է հետեւյալը. «Մենք ցանկանում ենք հնարավորինս շուտ հասնել խաղաղության, փարիզյան հանդիպմանը մենք կառաջարկենք հակամարտության կարգավորման նոր մոտեցում: Խնդրի լուծումը պետք է գտնվի»:

ԱՄՆ պետքարտուղարի տվյալ խոսքերն ինտրիգ առաջացրին՝ կապված այն բանի հետ, որ հունիսի 4-ին Քլինթոնը Երեւանում հատուկ ընդգծեց, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը եւ հայ-թուրքական մերձեցումն իրարից անջատ գործընթացներ են. «Այս գործընթացների միջեւ կապ չկա…»: Անկասկած, նման հիշեցումն ունի նշանակալից իմաստ այն պատճառով, որ այդ

դիրքորոշումը չեն ընդունում Ադրբեջանն ու Թուրքիան: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի նոր առաջարկները չեն կարող չարտացոլել վերջինիս նշված դիրքորոշումը: Սակայն փաստն այն է, որ նոր առաջարկներ հակամարտության կողմերին այդպես էլ չեն ներկայացվել:

Միջնորդները ստեղծված իրավիճակի վրա իրականում չեն կարող ազդել: Համապատասխանաբար՝ կարող է կարծիք ձեւավորվել, որ ստեղծված կոնֆլիկտային իրավիճակի բոլոր պարամետրերը մնում են անսասան: Սակայն, եթե վերջիններս առճակատման գոտում անփոփոխ են, ապա այդպիսին չեն միջազգային պարամետրերը: Նախ՝ Ադրբեջանը զինվել է միջազգային ասպարեզում Հայաստանին մեկուսացնելու դիվանագիտությամբ: Գործնականապես բոլոր միջազգային հարթակներում (ՄԱԿ, ԵԽԽՎ, Եվրախորհրդարան, Իսլամական կոնֆերանս, Չմիավորման շարժում եւ այլն) նախաձեռնվում են Հայաստանին ուղղված բանաձեւեր՝ զորքերը Ադրբեջանի գրավյալ տարածքներից դուրս բերելու պահանջով: Զուգահեռաբար Հայաստանն անում է բավական հաջողված քայլեր՝ ձեւափոխելու Ադրբեջանի «ռազմական շանտաժը» սեփական դիվանագիտության բաղադրիչի: Այսպես՝ 2010թ. դեկտեմբերին Աստանայում կայացած ԵԱՀԿ վերջին գագաթաժողովի ժամանակ Հայաստանի նախագահը հանդես եկավ հայտարարությամբ, որ «Եթե Ադրբեջանը վերսկսի պատերազմը, ապա Հայաստանը կճանաչի Լեռնային Ղարաբաղի անկախությունը եւ նրան ցույց կտա ռազմական օգնություն»: Այսպիսով՝ ԼՂՀ ճանաչման գաղափարը նրբորեն դուրս եկավ ԵԱՀԿ հարթակ:

Ամեն դեպքում կարելի է ենթադրել, որ տեսանելի ապագայում կարգավորման միջազգային դիվանագիտության մեջ կմնա սոսկ կոնֆլիտային գոտու շփման գծի երկայնքով հրադադարի պայմանակարգի պահպանման թեման: Հակամարտության կողմերի բանակցություններում որեւէ առաջընթացի ակնկալումը՝ ղարաբաղյան խնդրի հանգուցալուծումը հայ-թուրքական հարաբերություններ հետ շաղկապելու՝ Թուրքիայի հավակնությունների լիակատար անտեսման պայմանով, առայժմ անհարկի է:

Պատահական չէ, որ նկարագրված ժամանակաշրջանում բարձրաձայնվել են սկզբունքնորեն նոր գաղափարներ՝ կոնֆլիկտային իրավիճակի վրա ազդելու նպատակով: Հունիսի 5-ին Վաշինգթոնի Վուդրո Վիլսոնի կենտրոնում կազմակերպված փորձագիտական քննարկումներին Արտաքին քաղաքականության ամերիկյան խորհրդի գիտական աշխատակից Ուեյն Մերին հայտարարեց, որ պատերազմը «ոչ միայն ընթանում է, այլեւ ընկալվում է իբրեւ ինչ-որ դրական բան»: Նրա խոսքով՝ ԵԱՀԿ Մինսկի խումբն ի վիճակի չէ դա կանխել: «Միջնորդ-

ները բանակցություններ չեն վարում, երկու կողմերը՝ Ադրբեջանը եւ Հայաստանը, շրջափակում են նրանց աշխատանքը, եւ եկել է ժամանակը՝ անցնելու միջնորդական առաքելությունից ուժային իրավարարության»[10]: Որքանով են կանխամտածված այսպիսի գնահատականներն ու առաջարկները՝ դժվար է ասել: Սակայն լիովին հնարավոր է, որ շփման գծում միջադեպերը պատահաբար չեն դարձվում կոնֆլիկտային իրավիճակի հիմնական կարգի հարցեր: Տվյալ գոտում ռազմական ներկայության գայթակղությունը պարզորոշ զգալ է տալիս իրեն տարբեր կողմերից:

Հնարավոր է՝ վերջին հանգամանքով է պայմանավորված Հունգարիայում հայ սպա Գուրգեն Մարգարյանին սպանած ադրբեջանական ԶՈՒ զինծառայող Ռամիլ Սաֆարովին Ադրբեջան արտահանձնելու հետ կապված աղմուկը: Արեւմտյան տերությունները եւ միջազգային կազմակերպությունները դուրս բերեցին այդ գործողությունը ուշադրության կենտրոն՝ ուժեղ վնաս հասցնելով Ադրբեջանի միջազգային վարկին: Հասկանալի է, որ Արեւմուտքի այս կոշտ մոտեցման մեջ ոչ պակաս դեր էր խաղում իրենց հետ երկխոսության ժամանակ Ադրբեջանին ավելի զիջող դարձնելու նպատակը: Նույնքան պարզ էր, որ գերակայությունը Լեռնային Ղարաբաղի շուրջ կոնֆլիկտային իրավիճակի լուծման դրդապատճառները չէին:

Հայաստանի հարեւանների նոր խնդիրները. նոր ռեսուրսներ եւ նոր սպառնալիքներ

Տարածաշրջանում արտաքին ներկայության ուժեղացման գայթակղությունը չի կարող չազդել Հայաստանի քաղաքականության վրա: Դրանից զատ, Հայաստանի քաղաքականության ձեւավորման պայմանների վրա ազդում են նոր խնդիրների առջեւ հայտնված տարածաշրջանի հարեւան երկրների փոփոխվող հարաբերությունները: Ուժեղացնելով իր բանակը՝ Ադրբեջանը սադրում է հարեւան Իրանի հետ, ինչպես նաեւ Կասպից ծովի ավազանում լարվածության մեծացումը: Կարելի է նույնիսկ պնդել, որ Ադրբեջանը նշված գոտում ձեռք է բերում «երկրորդ ճակատ»: Եթե հաշվի առնենք, որ Եվրամիությունն ավելի ու ավելի մեծ հետաքրքրություն է տածում Կասպիական էներգետիկ ռեսուրսներին, իսկ Ռուսաստանն ու Իրանը շարունակում են համարել Կասպից ծովի ավազանը սեփական շահերի ոլորտ, ապա ճնշումն Ադրբեջանի վրա նշված հարեւանների կողմից սկսում է ձեռք բերել գլոբալ իմաստ՝ ինչ-որ իմաստով նվազեցնելով Ղարաբաղյան հակամարտության կարեւորության հարցը: Հենց այսպիսի ազդեցություն է

սկսում գործել Իսրայելի հետ Ադրբեջանի աճող համագործակցությունը: Իրանը, ըստ էության, սկսում է դիտարկվել իբրեւ Ադրբեջանի անվտանգության գլխավոր սպառնալիք: Հաշվի առնելով Հայաստանի հետ այդ երկրի բարիդրացիական հարաբերությունները, Իրանի եւ Ադրբեջանի միջեւ դիմակայությունն ավելի ու ավելի մեծ նշանակություն է ձեռք է բերում Հարավային Կովկասի անվտանգության հարցերում:

Իրանի հետ Ադրբեջանի կոնֆլիկտային հարաբերությունները նոր խնդիրներ են առաջացնում իր գլխավոր դաշնակցի՝ Թուրքիայի հետ: Տարածաշրջանային առաջատար տերության դերին հավակնող ՆԱՏՕ-ի անդամ այդ երկիրը 2010թ. օգոստոսի 16-ին Ադրբեջանի հետ ստորագրեց պայմանագիր[11] ռազմավարական գործընկերության եւ փոխօգնության մասին: Կարելի է ենթադրել, թե ինչպիսի իրավիճակ կարող է Թուրքիայի համար ստեղծել Իրանի հետ Ադրբեջանի հնարավոր հակամարտությունը: Եթե հաշվի առնենք Իրանի հետ Ադրբեջանի վերոհիշյալ համագործակցությունը, ապա բավական դժվար է կանխատեսել Թուրքիայի վարքագիծն արդեն Իրան-Իսրայել հակամարտության դեպքում, եթե Ադրբեջանը մի կողմ չքաշվի այդ ընդհարման ընթացքում: Թերեւս Թուրքիայի համար կառաջանա անլուծելի խնդիր, քանզի վերջինս մեծ ռիսկի պատճառով դժվար թե գնա Իրանի հետ ուղղակի բախման:

Եթե հաշվի առնենք այն, որ Թուրքիան ավելի ու ավելի է խրվում Սիրիայի հետ հակամարտության մեջ, ապա առաջինի անվտանգության վիճակը դառնում է խնդրահարույց: Կարելի է լուրջ վերաբերվել ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենի՝ Ադրբեջանում բարձրաձայնած խոսքերին[12], թե «ՆԱՏՕ-ն պատրաստ է պաշտպանել Թուրքիային, եթե լինի դրա անհրաժեշտությունը»: Անկասկած, խոսք կարող է գնալ այդ երկրի ներքին ապակայունացման մասին: Իրադարձությունների նման զարգացումն ընդունակ է փոխել անվտանգության խնդիրների ամբողջ պատկերը տարածաշրջանում, ինչպես նաեւ՝ գլխավոր խաղացողների դերը:

Երկրների շահերի եւ դիրքորոշումների բարդ միահյուսման նկարագրված բնույթն արդեն հանգեցնում է Հարավային Կովկասը այդտեղ ծրագրվող լայնածավալ նախագծերից մեկուսացնելու նոր ալիքի: Օրինակ՝ գերմանական RWE կոնցեռնը քննարկում է NABUCCO գազատարի շինարարության կոնսորցիումից դուրս գալու հարցը, քանի որ նախապես չի հաջողվում գազի մատակարարման վերաբերյալ հաստատուն երաշխիքներ ստանալ Ադրբեջանից եւ Թուրքիայից: Այդպիսի երաշխիքներ չեն էլ կարող լինել, եթե հաշվի առնենք քաղաքական մթնոլորտը Կասպից ծովի գոտում եւ Ադրբեջանի հետ հարաբերություններում Թուրքիայի բավականաչափ ագրեսիվ դիրքորոշումը:

Թուրքիայի այս մոտեցումը բարդացնում է նաեւ Վրաստանի վիճակը: Թուրք-ադրբեջանական հաղորդակցական նախագծերի մամլիչի տակ (Կարս-Թբիլիսի-Բաքու երկաթգիծ, նավթատարներ եւ գազատարներ) սեղմված՝ այս երկիրն ավելի ու ավելի է ենթարկվում հարեւան երկու պետությունների թելադրանքին: Որպես օրինակ կարող է ծառայել Վրաստանի եւ Ադրբեջանի միջեւ ս.թ. մայիսին առաջացած տարածքային վեճը (այն բորբոքվեց Թբիլիսիի եւ Բաքվի միջեւ մենաստանային համալիրի շուրջ, որի տարածքով պետք է անցնի երկու երկրների սահմանը):

Ինչպես տեսնում ենք, տարածաշրջանից դուրս ռեսուրսներ եւ հովանավորներ փնտրելու սովորությունը լոկ հանգեցնում է տարածաշրջանի երկրների մեկուսացմանը եւ առճակատման խորացմանը բուն տարածաշրջանի ներսում: Օբյեկտիվորեն, սակայն, հենց այս միտումն է պայմաններ ձեւավորում Հայաստանի արտաքին քաղաքականության մշակման եւ վարման համար: Հայաստանի անվտանգության ապահովման եւ զարգացման համար տարածաշրջանային ռեսուրսները նույնպես բավարար չեն: Անբավարար են նաեւ ազգային ռեսուրսները անհրաժեշտ աստիճանի անկախության ապահովման համար: Հնարավոր է՝ որակական փոփոխություններ կարող են առաջանալ Մերձավոր Արեւելքում՝ կապված իսլամական գործոնի կտրուկ ուժեղացման հետ: Անկախ այն բանից՝ խթանվում է արդյոք այդ գործոնն Արեւմուտքի կողմից թե ոչ՝ այն օբյեկտիվորեն բարձրացնում է տարածաշրջանում Արեւմուտքի ուժերի ծավալման հնարավորության աստիճանը: Այս դեպքում Հայաստանի դերը Ռուսաստանի համար կտրուկ մեծանում է, ինչը կարող է բարենպաստ հիմք հանդիսանալ Հայաստանի ինքնուրույնության բարձրացման համար:

Առայժմ կարելի է արձանագրել միայն այն, որ ոչ թե կողմնորոշումը Ռուսաստան-Արեւմուտք գծապատկերով, այլ ուժերի փոփոխվող հաշվեկշռում հաշվարկված (կամ ինքնաբերաբար ձեւավորված) դերն է Հայաստանի արտաքին քաղաքականության շարժիչ ուժը: Որքանով է այս հանգամանքը գիտակցվում Հայաստանի ղեկավարության կողմից՝ միանաշանակ դժվար է ասել:

Հայաստանի քաղաքականությունը ներքին համաչափի մեջ

Նկարագրված միտումներից չկտրված է իրականացվում Հայաստանի ներքին քաղաքականությունը: 2013թ. փետրվարին կայանալիք նախագահական ընտրությունների նախաշեմին Հայաստանի իշխանությունները հայտնվեցին անսովոր ներքաղաքական իրավիճակում: Նրանց դեմ ծառացավ Հայաստանի իշխա-

նական ճամբարի կոնսոլիդացման խնդիրը: 2012թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում Հայաստանում առաջացավ ուժերի նոր դասավորություն: Իշխող Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) իր համար ապահովեց մանդատների մեծամասնություն եւ պահպանեց կառավարության նախկին կազմը: Սակայն կառավարող կոալիցիայի ազդեցիկ կուսակցություններից մեկը՝ «Բարգավաճ Հայաստանը» (ԲՀԿ), հրաժարվեց մտնել նոր իշխանական կոալիցիայի մեջ: Այս հանգամանքը հիմնարար խնդիր ստեղծեց գործող նախագահ Սերժ Սարգսյանի համար, ով պատրաստվում է իր թեկնածությունն առաջադրել 2013թ. նախագահական ընտրություններում: Նրա համար օրախնդիր դարձավ առաջիկա ընտրություններում հաղթանակի երաշխիքների ապահովման նպատակով իշխանական ճամբարը նախկին տեսքով վերականգնելու հարցը: Այս խնդիրն էլ ներկա պահին կանխորոշում է Հայաստանի իշխանությունների քաղաքականության իմաստը եւ բովանդակությունը:

Արդեն մեկ տարուց ավելի է՝ Հայաստանի քաղաքական կյանքում աչքի է զարնում երկու ակնհայտ միտում.

Ա. Ի դեմս Հայ ազգային կոնգրեսի՝ խորհրդարանական ընդդիմության փորձերը՝ իր կողմը գրավել ԲՀԿ-ին:

Բ. Իշխող ՀՀԿ-ի փորձը՝ վերականգնել 2010թ. (կոալիցիոն հուշագրի ստորագրման տարին) նմուշի կոալիցիոն ստատուս-քվոն: Հիմնական դրույթը կատարվում է երկրի ներսում «օլիգարխիկ», ինչպես նաեւ արտաքին քաղաքական ու տնտեսական ռեսուրսների վրա:

ԲՀԿ անդամները հայտարարում են, որ կոալիցիան, որի կազմում էին ԲՀԿ-ն, ՀՀԿ-ն եւ «Օրինաց երկիր» կուսակցությունը, այլեւս չի գործում նախկին ձեւաչափով, եւ, համապատասխանաբար, ուժը կորցրել է նախկին կոալիցիոն հուշագիրը, համաձայն որի՝ բոլոր քաղաքական ուժերը պարտավորվել են նախագահական ընտրություններում պաշտպանել Սերժ Սարգսյանի թեկնածությունը: Սակայն ՀՀԿ անդամները նույն համառությամբ պնդում են, որ «հուշագիրը գոյություն ունի, այնտեղ պարզ գրված է, որ կոալիցիան կպաշտպանի Սերժ Սարգսյանի թեկնածությունը»: ԲՀԿ-ն չի հայտարարել, որ ինքը հրաժարվել է դրանից: Փաստորեն ԲՀԿ-ն չի ընդունում իրեն առաջադրված պայմանները: Խոսակցությունները, թե ԲՀԿ հակընդդեմ պայմանը նրան վարչապետի պաշտոնի առաջարկումն է, չեն կորցնում իրենց հրատապությունը:

Ստեղծված իրավիճակում գլխավոր հանգամանքը հենց նույն արտաքին ռեսուրսի գործոնն է: Այն ձեւավորում է հավակնոտ հակառակորդներին «զսպելու» նպատակով Հայաստանի իշխանությունների՝ արտաքին օժանդակության

փնտրտուքով պայմանավորված քաղաքականության բնույթը: Բայցեւ արտաքին օժանդակություն ստանալը պահանջում է հարկադրանքի յուրահատուկ մեթոդ. կանգնեցնել արտաքին ատյաններին այնպիսի փաստի դեմ, որը կստիպի նրանց համակերպվել Հայաստանի ներքին իրողությունների հետ:

Հայաստանի նախագահի հիմնական հույսը Եվրամիության կողմից 2012թ. հունիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների նախօրեին խոստացված մեկուկես միլիարդ եվրո օգնություն ստանալու ակնկալիքն էր: Հունիսի 27-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Բելգիա կատարած այցի շրջանակներում հանդիպեց Եվրոպական Միության (ԵՄ) արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության բարձրագույն ներկայացուցիչ, Եվրահանձնաժողովի փոխնախագահ Քեթրին Էշթոնին: Զրուցակիցները քննարկեցին Հայաստան-ԵՄ հարաբերությունների օրակարգը: Արծարծվեցին Ասոցացման մասին, Ազատ առեւտրի խորն ու համակողմանի գոտու ստեղծման մասին համաձայնագրի եւ մարդկանց տեղաշարժի դյուրացման վերաբերյալ Հայաստանի ու Եվրամիության միջեւ բանակցությունների թեմաներ: Հունիսի 28-ին Սերժ Սարգսյանը մասնակցեց Եվրոպական ժողովրդական կուսակցության համաժողովին:

Բոլոր հնարավոր ռեւերանսներն արվեցին, սակայն այդ օրերի գլխավոր իրադարձությունը դարձավ Հայաստանին ֆինանսական օգնություն ցույց տվող դոնորների ֆորումի հետաձգումը ԵՄ-ի կողմից: Դեպքերի այսպիսի շրջադարձն անսպասելի էր Հայաստանի իշխանությունների համար: Հետընտրական շրջանում մեկուկես միլիարդի չափով պարտքի ստացումը ԵՄ-ից նրանց գլխավոր հույսն էր:

Արժեր սպասել, որ Հայաստանի իշխանությունները կփորձեն փոխհատուցել ֆինանսական օգնությունն այլ աղբյուրներից՝ գլխավորապես Ռուսաստանից: Հույսը Ռուսաստանի վրա դնելը Հայաստանի իշխանությունների համար ձեռք է բերում լուրջ իմաստ՝ նաեւ նկարագրված ներքին բարդությունների պատճառով: Նորից ու նորից պետք է ընդունել, որ ներքին քաղաքականության տրամաբանությունը բխում է «արեւմտամետություն-ռուսամետություն» կողմնորոշման գծապատկերից: Բայց սա միայն հերթական «լեյտմոտիվն» է: Իրականում Հայաստանի իշխանությունները կանգնած են Ռուսաստանի կողմից լիակատար օժանդակություն ստանալու հրամայականի առջեւ: Այժմյան պայմաններում դրան հասնելն այդքան էլ հեշտ չէ: Նկատելի է, որ Հայաստանն ընտրել է «արեւմտամետության» խաղի մարտավարությունը՝ որպես Ռուսաստանին դրդելու մեխանիզմ: Ավելին՝ նկատելի է Ռուսաստանի ղեկավարությանը Հայաստանի ներքին իրողությունների հետ հարկադրաբար հաշտվելու փաստի առջեւ կանգնեցնելու ցանկությունը:

* * *

Այսպիսով՝ անվտանգության խնդիրն արտաքին օժանդակության փնտրտուքի հրամայականի հետ Հայաստանի իշխանության գլխավոր շարժիչ ուժն է: Իրերի այսպիսի դասավորությունը միջազգային գործոնները բարձրացնում են հիմնական կարգի հանգամանքի, որոնք որոշում են Հայաստանի արտաքին եւ ներքին քաղաքականության ձեւավորման պայմանները: Ավելին՝ հենց արտաքին գործոնները եւ երեւույթներն են հերթական գծապատկեր-լեյտմոտիվի հիմքում, որոնք կոչված են արդարացնելու իշխանությունների ցանկացած գործողություն: Սրանից քիչ բանով են տարբերվում երկրի ընդդիմադիր ուժերի քաղաքականության մեթոդները: Արդյունքում՝ վարվող քաղաքականությունը խթանում է Հայաստանի արտաքին կախվածությունը՝ հանրությանը ետ մղելով երկրում գործերի վիճակի վրա ազդելու իրական մեխանիզմներից, ինչպես նաեւ պահպանելով քաղաքական եւ տնտեսական իրավիճակը մշտապես նույն որակական հարթությունում:

ՀՂՈՒՄՆԵՐ

1 Էդվարդ Նալբանդյանի ելույթի թեզիսները տես՝ http://www.1in.am/rus/armenia_apoliticsworld_22170.html

2 Միայն քննադատորեն կարելի է մոտենալ Ա.Դարագանովի կողմից Եվրասիական միության փիլիսոփայական հիմնավորման քաղաքականացված փորձին: Ա.Դարագանով, «Եվրասիական ինտեգրացիայի պատմությունը եւ եվրասիականության փիլիսոփայությունը» http://yeurasia.org/2012/10/21/%D0%B0%D0%BB%D0%B5%D0%BA%D1%81%D0%B0%D0%BD%D0%B4%D1%80-%D0%B4%D0%B0%D1%80%D0%B0%D0%B3%D0%B0%D0%BD%D0%BE%D0%B2-%D0%B8%D1%81%D1%82%D0%BE%D1%80%D0%B8%D1%8F-%D0%B5%D0%B2%D1%80%D0%B0%D0%B7%D0%B8%D0%B9/

3 http://www.vesti.ru/doc.html?id=908112

4 http://www.zham.am/index.php?lid=ru&pageName=lrahos&id=831791475

5 http://www.panorama.am/ru/economy/2012/09/11/ambassadaor-rus/

6 http://commonspace.eu/rus/links/6/id1913

7 http://www.mediamax.am/ru/news/karabakh/5262/

8 Ադրբեջանի, Հայաստանի եւ Ռուսաստանի համատեղ հայտարարության ամբողջական տեքստը տես՝ http://news.kremlin.ru/ref_notes/1135

9 http://analitika.at.ua/news/amerika_obeshhaet_predstavit_novye_predlozhenija_k_peregovoram_vokrug_karabakhskogo_uregulirovanija/2012-06-06-63193

10 http://www.noravank.am/rus/articles/security/detail.php?ELEMENT_ID=6542

11 Այս թեմայով նյութերը տես՝ http://rss.novostimira.com/n_692087.html

12 Այս թեմայով նյութերը տես՝ http://rss.novostimira.com/n_3432661.html

МАНВЕЛ САРКИСЯН

Международные условия формирования внешней и внутренней политики Армении: 2012 год

В статье делается попытка выявления международных условий, в которых вырабатывается политика Армении. С учетом сильной зависимости Армении от внешних ресурсов, данному обстоятельству придается важный смысл. Власти Армении заявляют, что Армения ведет многовекторную политику. Подобная обобщенная формулировка не позволяет выявить стратегическую линию внешней политики и содержание внешнеполитических отношений. На фоне непрекращающихся дискуссий о «прозападной и пророссийской» ориентации политических сил Армении заявление властей выглядит еще более неопределенным. Автор пытается аргументировать, что проблема безопасности вкупе с поиском внешней поддержки своего положения внутри страны являются главными мотиваторами политики руководства Армении.

MANVEL SARGSYAN

International Conditions for Formation of Armenia's Foreign and Domestic Policy: 2012

The article attempts to identify the international environment in which Armenia's policy is developed. Given the strong dependence of Armenia on external resources, the study attaches importance specifically to this circumstance. The Armenian establishment claims that the Republic pursues a multivector policy. Such a generalized statement does not make it feasible to reveal the strategic line of foreign policy and the content of foreign relations. Against the backdrop of the continuous debate on "pro-Western" and "pro-Russian" orientation of the Armenian political forces, the statement of the authorities seems to be even more uncertain. The author tries to argue that the issues of security, coupled with the efforts of Armenia's leadership to ensure its positions within the country via the search for external support, are the main motivators of the policy carried out by Armenia.

Մեծ տերության ճգնաժամը. պատճառներ եւ հետեւանքներ
Մաս 2

ԱՆԴՐԻԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Իրավագետ: Գիտական պարբերականներում եւ մամուլում հանդես է գալիս միջազգային իրավունքի տարբեր դիտանկյուններին առնչվող հոդվածներով:

1990թ. Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում եւ Մերձբալթյան հանրապետություններում բազմակուսակցական համակարգով անցկացված միութենական հանրապետությունների Գերագույն խորհուրդների ընտրությունները հնարավորություն տվեցին նորաստեղծ ազգային-ժողովրդավարական ուժերին գալու իշխանության: 1990թ. ընթացքում վեց միութենական հանրապետություններ (Հայաստան, Վրաստան, Մոլդովա, Լատվիա, Լիտվա, Էստոնիա) այս կամ այն ձեւով հայտարարեցին Խորհրդային Միության կազմից դուրս գալու իրենց մտադրության մասին, իսկ մնացած ինը միութենական երկրները, որտեղ իշխանության ղեկին մնացին հանրապետական կոմունիստական կուսակցությունները, հռչակագրեր ընդունեցին ԽՍՀՄ կազմում իրենց ինքնիշխանության մասին: 1990թ. դեկտեմբերին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների չորրորդ համագումարը որոշում ընդունեց հավանություն տալ ԽՍՀՄ դաշնության սուբյեկտների կողմից նոր միութենական պայմանագրի ստորագրման միջոցով դաշնային պետության նորացման հայեցակարգին եւ անցկացնել հանրաքվե միութենական դաշնության նորացման հարցի վերաբերյալ: Իրականում նոր դաշնային պայմանագրի ստորագրման համար ոչ մի օբյեկտիվ քաղաքական անհրաժեշտություն չկար: Միութենական հանրապետությունների լիազորությունների եւ պատասխանատվության հարցի որոշումը դաշնության կազմում կարող էր լուծվել սահմանադրական բարեփոխումների ճանապարհով: Միութենական հանրապետությունների կողմից նոր պայմանագրի կնքումը փաստորեն հնարավորություն տվեց վեց միութենական հանրապետությունների անջատումը մեկնաբանել որպես հրաժարում նոր դաշնությանը նրանց մասնակցելուց, այլ ոչ թե գոյություն ունեցող միությունից դուրս գալու գործընթաց:

1991թ. մարտի 17-ին կայացավ հանրաքվե՝ «Համաձայն եք արդյոք ԽՍՀՄ-ի պահպանմանը՝ որպես իրավահավասար, ինքնիշխան հանրապետությունների

նորացված դաշնության, որտեղ լիովին կերաշխավորվեն բոլոր ազգությունների իրավունքներն ու ազատությունները» հարցով: ԽՍՀՄ ձայնի իրավունք ունեցող 185,6 միլիոն քաղաքացիներից հանրաքվեին մասնակցեց 148,5 միլիոնը (79,5 %), որոնցից 113,5 միլիոնը (76,43 %) արտահայտվեց նորացված ԽՍՀՄ-ի պահպանման օգտին: Այսպիսով՝ ԽՍՀՄ ղեկավարության քաղաքական որոշումը՝ կնքել նոր միութենական պայմանագիր, օրենքի ուժ ստացավ:

Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի եւ Մերձբալթյան հանրապետությունների իշխանությունները սաբոտաժի ենթարկեցին համամիութենական հանրաքվեի անցկացումը: Այս գործողությունները ԽՍՀՄ ազգային օրենսդրության կոպտագույն խախտումներ ու քրեորեն պատժելի միջազգային հանցագործություններ էին: Միութենական հանրապետություններում հանրաքվեի անցկացմանը խոչընդոտող պաշտոնատար անձանց նկատմամբ ԽՍՀՄ իրավապահ մարմինների անգործությունը վկայում է խորհրդային ժողովրդի ինքնորոշման գործընթացին ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության միջամտության մասին:

Համաձայն ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների չորրորդ համագումարի կողմից հաստատված՝ նոր միութենական պայմանագրի կնքման կարգի, ՌՍՖՍՀ-ը, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ադրբեջանի, Ղազախստանի, Թուրքմենիայի, Ուզբեկստանի, Կիգիզիայի եւ Տաջիկստանի խորհրդային սոցիալիստական հանրապետությունները 1991թ. ապրիլի 23-ին Նովո-Օգորյեւոյում ձեռնամուխ եղան նոր միութենական պայմանագրի նախագծի քննարկմանը: Սա եւս հաստատում է, որ մյուս վեց հանրապետություններում հանրաքվեի վիժեցումը ծրագրված քաղաքական գործողություն էր: Այսպիսով՝ 1991թ. օգոստոսի սկզբին միութենական վեց հանրապետությունների ղեկավարությունները կանգնած էին ԽՍՀՄ կազմից դուրս գալու անխուսափելիության փաստի առջեւ:

Նոր դաշնային պայմանագրի կնքումն իր հետեւից բերում է միջազգային եւ ներքին հարաբերություններում պետության փոփոխություն, դաշնության կազմի վերաձեւում, իշխանության նոր մարմինների ձեւավորում եւ նոր Սահմանադրության ընդունում: ՌՍՖՍՀ-ի համար, որի կազմի մեջ մտնում էին ավելի քան քսան ինքնավար հանրապետություններ, այդ փոփոխությունները փլուզման եւ արդյունաբերության ու բնական հարստությունների զգալի մասի կորստյան սպառնալիք էին ստեղծում: Նոր միութենական պայմանագրի կնքման պարագայում ինքնավար հանրապետությունները նոր դաշնության կազմում կարող էին ընդգրկվել որպես ինքնուրույն սուբյեկտներ՝ միութենական հանրապետությունների հետ ունենալով հավասար իրավունքներ: Հսկայական երկրի կառավարման համակարգի ապակենտրոնացման գաղափարով հրապուրված՝ Մի-

խայիլ Գորբաչովը պաշտպանում էր պետական իշխանության բարեփոխման այս նախագիծը: Ռուսական մեծապետական ազգայնականության կողմնակիցների համար նման դաշինքի ծրագրի իրականացումը նշանակում էր ռուսական մեծապետականության վախճան: Այս կապակցությամբ իշխանական վերնախավում՝ Գորբաչովի, Կրյուչկովի, Յազովի եւ Պուգոյի միջեւ առաջացան տարաձայնություններ, որոնք հանգեցրին Անվտանգության խորհրդի հինգ անդամների կողմից Գորբաչովին ԽՍՀՄ նախագահի պաշտոնից հեռացնելու փորձին: Օգոստոսի 18-ին ԽՍՀՄ փոխնախագահ Յանաեւը հրամանագիր հրապարակեց իր կողմից ԽՍՀՄ նախագահի պարտականությունները ստանձնելու մասին՝ ելնելով այն հանգամանքից, որ առողջական վիճակի պատճառով Գորբաչովն այլեւս ի վիճակի չէ կատարել ԽՍՀՄ նախագահի պարտականությունները: Նույն օրը ԽՍՀՄ ղեկավարության անունից ԽՍՀՄ փոխնախագահ Յանաեւը, ԽՍՀՄ կառավարության ղեկավար Պավլովը եւ ԽՍՀՄ պաշտպանության խորհրդի նախագահի առաջին տեղակալ Բակլանովը հայտարարություն ընդունեցին ԽՍՀՄ առանձին վայրերում վեց ամսով արտակարգ դրություն մտցնելու մասին: Երկրի կառավարման եւ արտակարգ դրության ռեժիմի գործուն կիրարկման համար կազմվավորվեց ԽՍՀՄ արտակարգ իրավիճակի պետական կոմիտե: Բացի Անվտանգության խորհրդի հինգ անդամներից՝ Յանաեւ, Պավլով, Կրյուչկով, Յազով եւ Պուգո, Կոմիտեի կազմի մեջ մտան Բակլանովը, ԽՍՀՄ գյուղացիական միության նախագահ Ստարոդուբցեւը եւ ԽՍՀՄ պետական ձեռնարկությունների, արդյունաբերության, շինարարարության օբյեկտների, տրանսպորտի ու կապի ասոցիացիայի նախագահ Տիզյակովը: Համաձայն ԽՍՀՄ սահմանադրության՝ այս գործողություններից հետեւում էր, որ երկրում եռամսյա ժամկետում պետք է նշանակվեին ԽՍՀՄ նախագահի ընտրություններ: Դավադրությունը գլխավորում էին Կրյուչկովը, Յազովը եւ Պուգոն, ովքեր, դատելով այս հանգամանքներից, ակնհայտորեն ունեին երկու նպատակ. Գորբաչովից ստանալ պաշտոնաթողության, իսկ ՌՍՖՍՀ նախագահ Բորիս Ելցինից՝ ԽՍՀՄ նախագահի պաշտոնում իր թեկնածությունն առաջադրելու համաձայնություն:

Բորիս Ելցինը չաջակցեց ոչ ԽՍՀՄ արտակարգ իրավիճակի պետական կոմիտեին, ոչ էլ Միխայիլ Գորբաչովին: Ապավինելով ԽՍՀՄ արտակարգ իրավիճակի պետական կոմիտեին չհարած Անվտանգության խորհրդի երկու անդամների՝ Եվգենի Պրիմակովի եւ Վադիմ Բակատինի զորակցությանը՝ նա իր շուրջը հավաքեց երրորդ քաղաքական ուղու կողմնակիցներին: Նրանք հանդես եկան Ռուսաստանի Դաշնության տարածքային ամբողջականության պահպանման եւ ԽՍՀՄ-ից բոլոր միութենական հանրապետությունների անջատման օգտին:

Օգոստոսի 22-ին ՌՍՖՍՀ նախագահը նախաձեռնեց ԽՍՀՄ արտակարգ իրավիճակի պետական կոմիտեի անդամների ձերբակալությունը, օգոստոսի 23-ին իր հրամանագրով կասեցրեց ԽՍՀՄ կոմկուսի գործունեությունը, իսկ օգոստոսի 25-ին հրամանագիր ստորագրեց կուսակցության գույքի բռնագրավման մասին: Այսպիսով՝ ԽՍՀՄ կառավարող ողջ օլիգարխիան կորցրեց իր իշխանական լծակները:

1991թ. սեպտեմբերին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարը կոչ արեց միութենական հանրապետությունների ղեկավարություններին որոշում կայացնել. կնքել նոր միութենական պայմանագիր կամ սահմանադրական ճանապարհով դուրս գալ ԽՍՀՄ կազմից: Համագումարն անցումային ժամանակաշրջանի համար ընդունեց օրենք՝ համաձայն որի գործադիր իշխանությունը պատվիրակվեց ԽՍՀՄ նախագահի գլխավորած պետական Խորհրդին, որի կազմի մեջ մտնում էին միութենական հանրապետությունների գործադիր իշխանության ղեկավարները, իսկ օրենսդիր իշխանությունը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդին:

Առաջին քաղաքական որոշումը, որն ընդունեց ԽՍՀՄ պետական Խորհրդի իշխանության նոր մարմինը, 1991թ. սեպտեմբերի 6-ին Մերձբալթյան երեք հանրապետությունների անկախության ճանաչումն էր:

Բորիս Ելցինի եւ նրա կողմնակիցների քաղաքական փիլիսոփայությունն իր վերջնական արտահայտությունը գտավ Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ձեւավորման մասին պայմանագրի մեջ, որը Ռուսաստանի, Բելառուսի եւ Ուկրաինայի միջեւ կնքվեց 1991թ. դեկտեմբերի 8-ին Բելովեժյան անտառում: Այս համաձայնագրում կողմերը հռչակեցին ԽՍՀՄ-ի՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի եւ աշխարհաքաղաքական իրողության, գոյությունը դադարեցնելու մասին, ճանաչեցին համագործակցության առկա սահմանների անխախտելիությունը, միմյանց տարածքային ամբողջականությունը, պարտավորություն ստանձնեցին իրենց պաշտպանության տակ վերցնել ազգային փոքրամասնությունները եւ էթնոմշակութային տարածաշրջանները: Նրանք նաեւ որոշում ընդունեցին իրենց տարածքում նախկին ԽՍՀՄ մարմինների գործունեության դադարեցման եւ երրորդ պետությունների, այդ թվում նախկին ԽՍՀՄ սահմանադրության նորմերի կիրառումը չթույլատրելու մասին:

Եվրոպական ընկերակցության պետությունները պաշտպանեցին ԽՍՀՄ-ի եւ ՀՍՖՀ-ի (նախկին Հարավսլավիայի) փլուզման գործընթացը եւ 1991թ. դեկտեմբերի 16-ին հանդես եկան «Արեւելյան Եվրոպայի եւ Խորհրդային Միության տարածքի նոր երկրների ճանաչման ղեկավար սկզբունքների մասին» հռչակագրով:

Եվրոպական ընկերակցությունն ու նրա անդամները հավաստեցին իրենց նվիրվածությունը 1975թ. Հելսինկյան ակտին եւ 1990թ. Նոր Եվրոպայի Փարիզյան խարտիային: Ընդ որում՝ ընկերակցությունը հայտարարեց միջազգային պրակտիկայի չափորոշիչներին համապատասխանող նոր սուբյեկտների ճանաչման մասին, որոնք ստեղծվել են ժողովրդավարական հիմունքներով եւ կատարում են միջազգային պարտավորությունները: Որպես նոր պետությունների անկախության ճանաչման համար քաղաքական նախապայման՝ առաջ քաշվեցին հետեւյալ պահանջները.

- հարգել ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի եւ Փարիզյան խարտիայի դրույթներից բխող պարտավորությունները, հատկապես ժողովրդավարությանը եւ մարդու իրավունքներին առնչվող մասով;
- երաշխավորել էթնիկ եւ ազգային փոքրամասնությունների իրավունքները;
- հարգել սահմանների անձեռնմխելիության սկզբունքը, որոնք կարող են փոփոխվել խաղաղ ճանապարհով եւ փոխադարձ համաձայնության միջոցով;
- ընդունել զինաթափման եւ միջուկային զենքի չտարածման բոլոր համապատասխան պարտավորությունները՝ անվտանգության եւ տարածաշրջանային կայունության նպատակով;
- պարտավորվել իրավահաջորդության եւ տարածաշրջանային վեճերի վերաբերյալ բոլոր հարցերը լուծել համաձայնության միջոցով:

1991թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի նախկին մայրաքաղաք Ալմաթիում տասնմեկ նախկին միութենական հանրապետությունների ղեկավարները ստորագրեցին ԱՊՀ-ի ստեղծման մասին համաձայնագրին կից արձանագրություն եւ ընդունեցին հռչակագիր ԽՍՀՄ գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ (Ալմաթիի հռչակագիր): Որպես ԱՊՀ երկրների խորհրդի ղեկավարներ՝ նրանք որոշում ընդունեցին առ այն, որ Ռուսաստանի Դաշնությունը ՄԱԿ-ում եւ այլ միջազգային կազմակերպություններում կլինի ԽՍՀՄ անդամության շարունակողը: Որպես ԱՊՀ պետություններ՝ համաձայնագիր կնքեցին միջուկային զենքի նկատմամբ համատեղ միջոցառումների մասին: Ըստ արձանագրության՝ ԱՊՀ ստեղծման համաձայնագիրը յուրաքանչյուր մասնակից երկրի համար ուժի մեջ է մտնում խորհրդարանում վավերացվելուց հետո:

Եվրոպական ընկերակցության անդամ պետություններն այս որոշմանն արձագանքեցին 1991թ. դեկտեմբերի 23-ին: Իրենց հայտարարության մեջ նրանք տեղեկացրին այն մասին, որ ‹‹ի գիտություն են ընդունում, որ նախկին ԽՍՀՄ-ի միջազգային իրավունքներն ու պարտականությունները՝ ներառյալ նրանք, որոնք ստանձնվել են ՄԱԿ-ի կանոնադրությամբ, կշարունակեն իրագործվել

Ռուսաստանի կողմից››, իսկ ինչ վերաբերում է մյուս հանրապետություններին, ապա իրենք պատրաստ են նրանց ճանաչել ‹‹անմիջապես, հենց որ այդ հանրապետությունների կողմից երաշխիքներ ստանան «Արեւելյան Եվրոպայի եւ Խորհրդային Միության տարածքի նոր պետությունների ճանաչման ղեկավար սկզբունքների մասին›› հռչակագրի պահանջների կատարման պատրաստակամության մասին:

1991թ. դեկտեմբերի 25-ին Միխայիլ Գորբաչովն ամբողջ աշխարհը ցնցեց իր բացառիկ հրամանագրով: Նա ինքն իր սեփական որոշմամբ վայր դրեց ԽՍՀՄ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի լիազորությունները եւ ԽՍՀՄ միջուկային զենքի կիրառման իրավունքը փոխանցեց Ռուսաստանի Դաշնության նախագահին:

Այսպիսով՝ իշխանությունը ԽՍՀՄ-ում ամբողջովին անցավ Բորիս Ելցինին: Դրա հետ մեկտեղ նրան անցավ նաեւ միջուկային զինաթափման հետագա գործընթացի պատասխանատվությունը: Միութենական հանրապետությունները ստացան անկախություն, իսկ Ռուսաստանը՝ դառնալով միջազգային հարաբերություններում ԽՍՀՄ-ի շարունակողը, պահպանեց իր տարածքային ամբողջականությունը: Այս ամենը տեղի ունեցավ ինքնավարությունների ժողովուրդների ինքնորոշման իրավունքի բացահայտ ոտնահարման հաշվին: Զինված հակամարտությունները, որոնք հետեւանք էին ԽՍՀՄ քաղաքացիների միջազգայնորեն ճանաչված այդ իրավունքների խախտման, հարյուր հազարավոր մարդկանց կյանք խլեցին, իսկ միլիոնավոր մարդիկ դարձան փախստական:

Բորիս Ելցինի հեռացումն իշխանությունից եւ զինաթափման քաղաքականությունը

1991թ. աշնանը Բորիս Ելցինի իրականացրած անօրինական գործողությունների հետեւանքները բումերանգի պես արդեն 1993թ. վերադարձան իրեն: Նոր դաշնային պայմանագրի կնքման անհրաժեշտությունը՝ այժմ արդեն Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների միջեւ, հանգեցրեց առճակատման ՌՍՖՍՀ Գերագույն խորհրդի եւ դաշնության մի շարք սուբյեկտների ղեկավարության հետ: Ելցինը ստիպված էր գործադրել ռազմական ուժ՝ որպես Ռուսաստանի Դաշնության ներսում քաղաքական-իրավական հակամարտության հաղթահարման միջոց: Գերագույն խորհրդի արձակումը եւ Չեչնիայի հետ անհաջող պատերազմը հանգեցրին Ելցինի նկատմամբ Ռուսաստանի ժողովրդի վստահության քվեի լրիվ կորստի:

Իշխանությունը պահպանելու համար Ելցինը ստիպված եղավ զիջել երկրի նավթագազային եւ հումքային ճյուղերի վերահսկողությունը նորաթուխ քրեական օլիգարխիային: Ելցինի քաղաքական վարչակարգի կողմից Ռուսաստանի տարածքային ամբողջականության համար վճարված գինը ստացվեց շատ բարձր: 1996թ. մարտին Ռուսաստանի Պետական դուման ուժը կորցրած ճանաչեց ԱՊՀ ստեղծման համաձայնագիրը՝ ԽՍՀՄ սահմանադրության վերացման մասով: Այդ որոշման հիմք հանդիսացավ խաբեության փաստը, որ թույլ տվեցին Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի հանրապետության եւ Ուկրաինայի ղեկավարները 1922թ. Միութենական պայմանագիրը չեղյալ հայտարարելու ժամանակ: Այդ պայմանագիրը չէր կարող չեղյալ հայտարարվել, քանի որ կողմերն այն լիովին կատարել էին միութենական պետության ստեղծման պահին: Համաձայն պայմանագրի 25-րդ հոդվածի՝ հանրապետությունների միջեւ այս պայմանագրին վերաբերող հետագա հարցերի լուծման լիազորություններն անցնում էին միութենական պետության իշխանության մարմիններին, այսինքն՝ նրանք լուծվում էին ԽՍՀՄ սահմանադրության հիման վրա: Պետական դուման հանձնարարեց իր հանձնաժողովներին մշակել եւ Պետդումայի խորհրդի քննարկմանը ներկայացնել միջոցառումների համալիր ծրագիր՝ ուղղված առաջին հերթին խորհրդային քաղաքացիների նկատմամբ Խորհրդային Միության փլուզման հետեւանքների վերացմանը, ովքեր մինչեւ 1996թ. մարտի 15-ը դեռ չէին կողմնորոշվել իրենց քաղաքացիության հարցում: Այդ պահի դրությամբ Մերձբալթիկայում եւ Հարավային Կովկասում ավելի քան մեկ միլիոն խորհրդային քաղաքացիներ չունեին ճանաչված քաղաքացիություն: Պետդումայի որոշումը, սակայն, ոչ մի կերպ չազդեց այդ ժամանակաշրջանում ԱՊՀ-ի նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշման վրա: Սակայն տվեց նախագահի իմփիչմենթի գործընթացի մեկնարկը:

Բորիս Ելցինի նկատմամբ քրեական մեղադրանքների ձեւավորման հետ միասին սկսվեց ՊԱԿ-ի պահեստազորային սպա, պետերբուրգցի սակավ հայտնի քաղաքական գործիչ Վլադիմիր Պուտինի սրընթաց առաջխաղացման գործընթացը: 1998թ. գարնանը Պուտինը ստանձնեց Անվտանգության դաշնային ծառայության (ԱԴԾ) տնօրենի պաշտոնը, երբ Դումայում սկսվեց իմփիչմենթի ընթացակարգի նախապատրաստությունը: Պետդումայի հանձնաժողովը Ելցինին առաջադրեց հինգ կետից բաղկացած մեղադրանք. 1991թ. դեկտեմբերին ԽՍՀՄ փլուզում, 1993թ. օգոստոսին Ժողովրդական պատգամավորների համագումարի եւ ՌՍՖՍՀ Գերագույն խորհրդի կազմալուծում, 1994թ. դեկտեմբերին Չեչնիայում պատերազմի սանձազերծում, բանակի փլուզում եւ ռուսների ու Ռուսաստանի այլ ժողովուրդների ցեղասպանություն: 1998թ. աշնանը Դումայի

նախաձեռնած քրեական գործը վարույթ ընդունվեց Անվտանգության դաշնային ծառայության կողմից: 1999թ. ապրիլին ԱԴԾ-ն տվեց Ելցինի գործողություններն ամբողջովին արդարացնող եզրակացություն: Ելցինի իմփիչմենթը չկայացավ անհրաժեշտ ձայների քանակ չստանալու պատճառով:

Թեպետ Ելցինին հաջողվեց խուսափել քրեական պատասխանատվությունից, նա ստիպված էր 1999թ. դեկտեմբերին հրաժարական տալ՝ փոխանցելով իր պաշտոնը Վլադիմիր Պուտինին: Այսպիսով՝ ԱԴԾ ղեկավարությանը հաջողվեց օգտագործել Ելցինի դեմ ուղղված քրեական մեղադրանքն իր թեկնածուին Ռուսաստանի Դաշնության ղեկավարի պաշտոնում առաջադրելու համար:

1987թ.-ից սկսած՝ ԽՍՀՄ արտաքին քաղաքական քայլերի, ապաեւ Ռուսաստանի ներքաղաքական իրադարձությունների միջեւ կապն ակնհայտ դարձավ: Այդ փոխկապակցվածությունը ցույց է տալիս, որ ԽՍՀՄ-ի, այնուհետեւ նաեւ Ռուսաստանի յուրաքանչյուր ղեկավար բախվում է այն խնդրին, թե ինչպես համաշխարհային տերության կարգավիճակի արժեզրկման պայմաններում կառավարել ներքաղաքական ոլորտը: ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովի եւ Ռուսաստանի նախագահներ Բորիս Ելցինի ու Վլադիմիր Պուտինի ‹‹զինաթափման փաթեթների›› միջեւ գոյություն ունի բացահայտ տարբերություն: Գորբաչովի կողմից ստորագրված պայմանագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ նրա արտաքին քաղաքական քայլերը պայմանավորված են ստեղծված աշխարհաքաղաքական օբյեկտիվ իրականությամբ՝ իրենց մեջ ներառելով ԽՍՀՄ-ի համար պատճառաբանված եւ հավասարակշռված զիջումներ, որոնք հիմնավորվում են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ստալինի կողմից թույլ տրված միջազգային իրավունքի նորմերի խախտումների վերացման անհրաժեշտությամբ:

1991թ. Բորիս Ելցինը ՀՍԿ-2 պայմանագրի շրջանակներում ԱՄՆ-ին առաջարկեց զինաթափման ավելի խորը ծրագիր եւ Ռուսաստանի զինված ուժերի վրա ավելի բաց վերահսկողություն (‹‹Բաց երկնքի մասին պայմանագիր››՝ ընդունված ԵԱՀԽ-ի կողմից 1992թ. մարտի 24-ին): Ելցինի ‹‹Ամերիկյան փաթեթը›› հիմնավորված չէր աշխարհաքաղաքական անհրաժեշտությամբ: Այն ԽՍՀՄ-ում պետական հեղաշրջմանն աջակցելու ‹‹գինն›› էր: Սատարելով Ելցինին՝ ԱՄՆ-ը դարձավ միջազգային իրավունքի մեծածավալ խախտման մասնակից, որը հանգեցրեց մի ամբողջ շարք տարածաշրջանային պատերազմների: Միջազգային հարաբերությունների ամբողջ համակարգը ԽՍՀՄ-ի եւ սոցիալիստական հարավսլավիայի անօրինական տարբաժանման պատանդը դարձավ: Բորիս Ելցինը, սակայն, չկարողացավ կատարել միջուկային զինաթափման ոլորտում

ստանձնած պարտավորություններից ոչ մեկը եւ հասնել ԱՄՆ-ի հետ կնքած պայմանագրերի վավերացմանը:

Վլադիմիր Պուտինը՝ դառնալով Բորիս Ելցինի ժառանգորդը, վավերացրեց ՀՍԿ-2 եւ ‹‹Բաց երկնքի›› վերաբերյալ պայմանագրերը եւ առաջարկեց ԱՄՆ-ին ռազմավարական հարձակողական սպառազինությունների էլ ավելի խորը զինաթափում (Ռազմավարական հարձակողական պոտենցիալների կրճատման մասին պայմանագիր եւ ՀՍԿ-3): Պաշտպանական ծախսերի կրճատման հաշվին Վլադիմիր Պուտինը 2000-2008թթ. ավելացրեց սոցիալական ոլորտի ծախսերը եւ վերադարձրեց միջազգային փոխառնությունների գծով պարտքերը: Պուտինի ‹‹զինաթափման փաթեթը›› կազմվում էր երկրում իշխանության կենտրոնացման քաղաքականության եւ ԱՄՆ-ին արված արտաքին քաղաքական զիջումների հավասարակշռման օբյեկտիվ անհրաժեշտության ազդեցության պայմաններում: Այս փաթեթը ԱՄՆ-ի վարչակարգի հանդեպ Պուտինի լոյալության ‹‹գինն›› է: Նա ռուս-ամերիկյան հարաբերություններից քաղեց ամեն հնարավորը սեփական իշխանության ամրապնդման համար, սակայն երկիրը մոտեցավ այն սահմանագծին, որից հետո կարող էր լիովին կորցնել համաշխարհային պետության կարգավիճակը:

Աղյուսակ 5. ԽՍՀՄ-ի/Ռուսաստանի զինաթափման քաղաքականության ազդեցությունը ներքաղաքական իրադրության վրա

Արտաքին քաղաքական իրադարձություն	Ներքաղաքական իրադարձություն	Ներքաղաքական փոփոխություն
1987 թ. դեկտեմբերի 8 Միջին եւ փոքր հեռահարության հրթիռների ոչնչացման մասին պայմանագրի կնքում	1988-1990-ական թթ. Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում եւ Մերձբալթյան հանրապետություններում ազգային-ժողովրդավարական շարժումների ձեւավորումը եւ իշխանության գալը	1989-1990-ական թթ. 1990թ. մարտ-ապրիլ ամիսներին Վրաստանի, Հայաստանի, Մոլդովայի եւ Մերձբալթյան հանրապետությունների կողմից անկախության հռչակագրերի ընդունում ԽՍՀՄ-ում սահմանադրական փոփոխությունների իրականացում, բազմակուսակցական համակարգի ներմուծում, ԽՍՀՄ նախագահի ընտրությունների անցկացում

1991թ. հուլիսի 31 Հարձակողական սպառազինությունների կրճատման մասին (ՀՍԿ-1) պայմանագրի կնքում	1991թ. օգոստոսի 19 Պետական հեղաշրջման փորձ. Արտակարգ իրավիճակների պետական կոմիտեի ձեւավորում եւ վեց ամսով արտակարգ դրություն մտցնելու փորձ	1991թ. օգոստոսի 23-25 ՌՍՖՍՀ կոմունիստական կուսակցության գործունեության դադարեցում եւ կուսակցության սեփականության ազգայնացում 1991թ. սեպտեմբերի 6 ԽՍՀՄ-ից Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի անօրինական անջատում
———	1991թ. նոյեմբերի 6 ՌՍՖՍՀ նախագահի հրամանագիրը ՌՍՖՍՀ կոմկուսի գործունեությունը դադարեցնելու մասին 1991թ. դեկտեմբերի 8-21 Միութենական տասնմեկ հանրապետությունների միջեւ ԱՊՀ-ի ստեղծման մասին պայմանագիրը չեղյալ ճանաչելու մասին պայմանագրի կնքում	1991թ. դեկտեմբերի 26 ԽՍՀՄ նախագահի հրաժարականը եւ միջուկային զենքի վերահսկողության անօրինական փոխանցումը Ռուսաստանի նախագահին ԽՍՀՄ-ից միութենական հանրապետությունների անօրինական անջատում
1993թ. հունվարի 3 Հարձակողական սպառազինությունների հետագա կրճատման մասին (ՀՍԿ-2) պայմանագրի կնքում	ԽՍՀՄ Գերագույն խորհրդի արձակում	Նոր Սահմանադրության ընդունում: Բնակչության քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների զգալի սահմանափակում
2000թ. ապրիլի 8 Ռուսաստանի կողմից Հարձակողական սպառազինությունների հետագա կրճատման մասին (ՀՍԿ-2) պայմանագրի վավերացում 2002թ. մայիսի 24 Ռազմավարական հարձակողական պոտենցիալների կրճատման մասին պայմանագրի կնքում	2000թ. մարտ Վլադիմիր Պուտինի՝ Ռուսաստանի նախագահ ընտրվելը	Սահմանադրական փոփոխություններ՝ ուղղված քաղաքական համակարգի եւ դաշնության սուբյեկտների նկատմամբ հսկողության սահմանմանը

2010թ. ապրիլի 8 Ռազմավարական հարձակողական սպառազինությունների կրճատման մասին (ՀՍԿ-3) պայմանագրի կնքում	2011թ. սեպտեմբեր Պուտինի երրորդ առաջադրումը նախագահի պաշտոնում	2012թ. դեկտեմբեր Սահմանադրական բարեփոխումների ծրագրի առաջքաշում՝ ուղղված քաղաքական գործունեության ազատականացմանը եւ դաշնության սուբյեկտների ինքնավարության մեծացմանը

Ռուսաստանը վերջին սահմանագծի մոտ

ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի միջեւ ռազմաքաղաքական ապահավասարակշռումը մոտենում է մի վիճակի, երբ ԱՄՆ-ը կարող է դադարեցնել Ռուսաստանի ռազմական հնարավորությունների՝ որպես իր ազգային անվտանգությանը սպառնացող գործոնի, դիտարկումը: Կլիմայի փոփոխությունները, Սառուցյալ օվկիանոսի սառույցների հալոցքը մոտեցնում են Ռուսաստանի հյուսիսային սահմանին: Այս հանգամանքն արդիականացնում է ռուսական ռազմածովային նավատորմի վերածննդի խնդիրը: Պուտինյան վարչակարգն այլեւս չի կարող անտեսել երկրի ռազմավարական ներուժը վերականգնելու համար նրա պաշարամիջոցների մոբիլիզացման անհրաժեշտությունը: Ռուսաստանի ռազմական հնարավորությունների արժեզրկման խնդրին իշխանության արձագանքը պաշտոնական ծախսերի ավելացումն էր եւ հետխորհրդային տարածքի երկրներից համադաշնության ստեղծման փորձը:

Եվրասիական միության ստեղծման գաղափարը դարձավ Ռուսաստանի հարկադրված հակազդեցությունը: Մեծ տերության եւ տարածաշրջանային երկրների՝ Ղազախստանի եւ Բելառուսի միավորումը համադաշնային միության մեջ չեն կարող բարելավել մեծ տերության վիճակը:

Անհավատալի եւ հանցագործ եսակենտրոնությունը, որը ցուցադրեց ելցինյան ժամանակաշրջանի Ռուսաստանը նախկին ԽՍՀՄ ժողովուրդների նկատմամբ, մեկընդմիշտ խախտեց նրանց հավատն այդ երկրի մեծապետականության հանդեպ:

Այսօր Ռուսաստանի Դաշնությունն աշխարհի ամենամեծ ավտորիտար, օլիգարխիկ եւ կոռումպացված երկիրն է: Մարդկության պատմության տեսանելի ժամանակաշրջանում չի եղել պետություն, որը պետական իշխանության չարաշահման չափով կարելի լինի համեմատել ժամանակակից Ռուսաստանի հետ: Պետական կառավարման բարեփոխումը եւ իրավահավասար դաշնության ձեւա-

վորումը Ռուսաստանի քաղաքական դաշտի առջեւ կանգնած գլխավոր խնդիրներն են: Քաղաքական ուժերի՝ այս խնդիրների լուծումը գտնելու ունակությունից է կախված Ռուսաստանի կողմից տեսանելի ապագայում մեծ տերության կարգավիճակի պահպանման հնարավորությունը: Ռուսաստանի նոր քաղաքական մտածողությունն այսօր ձեւավորվում է քաղաքացիական հասարակության ընդերքում: Ռուսաստանի քաղաքական կուսակցությունները կանգնած են նոր մարտահրավերի առջեւ: Նրանք կամ պետք է վերափոխվեն կամ պետք է հեռանան քաղաքական թատերաբեմից նոր քաղաքական ուժերի ճնշման ներքո, որոնց հասունացման գործընթացը սկսվել է ավելի ու ավելի ընդլայնվող քաղաքական շարժման ներսում:

АНДРИАС ГУКАСЯН

Кризис великой державы: причины и следствия

Часть 2

Статья обобщает исследование взаимосвязи внешнеполитических шагов СССР, а в дальнейшем, России, в сфере ядерного разоружения с внутриполитическими событиями в этих странах. Сопоставление заключённых правительствами международных договоров, хода их ратификации с изменениями в составе правящей олигархии демонстрирует закономерности развития политических процессов. Исследование позволяет выявить причины и следствия кризиса великой державы и создаёт фундамент для прогнозирования основных направлений дальнейшего развития событий.

ANDRIAS GHOUKASYAN

The Crisis of the Great State: Causes and Effects

Part 2

The article reviews the correlation between the international steps taken by the USSR (subsequently by Russia) in regard to nuclear disarmament, and the domestic political advancements in these countries. The synthesis of the international agreements signed by the governments–along with the ratification process–and the shifts in the structure of the ruling oligarchy demonstrates that the evolvement of political processes conform to natural laws. The research provides an opportunity to reveal the causes and effects of the great state's crisis, and to lay down a foundation for forecasting the main paths of developments.

Ադրբեջանի արտաքին քաղաքականության մի քանի հարցեր՝ WIKILEAKS-ի գաղտնազերծած փաստաթղթերի լույսով

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

Ադրբեջանի արտաքին քաղաքականության վերաբերյալ կարեւոր նյութեր գաղտնազերծվեցին Ջ.Ասանժի կողմից՝ Wikileaks անունը կրող կայքերի միջոցով[1]: Այդ փաստաթղթերը, որոնք իրենցից ներկայացնում են Բաքվում ԱՄՆ-ի դեսպանի եւ այլ դիվանագետների գաղտնի գրագրությունը, վերաբերում են 2006-2010 թվականներին եւ տեղեկություններ են պարունակում այնպիսի հարցերի մասին, ինչպիսիք են Թուրքիայի, ՌԴ-ի, ԱՄՆ-ի, Վրաստանի, Իրանի եւ Իսրայելի հետ Ադրբեջանի հարաբերությունները, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման գործընթացի շուրջ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի նախագահների միջնորդավորված բանակցությունները:

Ընդհանուր առմամբ՝ գաղտնազերծվել են Բաքվի ամերիկյան դեսպանությունից ուղարկված ավելի քան 1,5 հազար նամակներ, որոնց մի զգալի մասը վերաբերում է վերոհիշյալ խնդիրներին: Կան նաեւ պարզապես տեղեկատվական նամակներ ու վերլուծություններ: Յուրաքանչյուր նամակ ավարտվում է մեկնաբանությամբ, որտեղ հեղինակը (դեսպանը) ներկայացրածից հետո տալիս է սեփական կարծիքը, որը եւս կարեւոր է իրավիճակի գնահատման համար: Փաստաթղթերի մի զգալի մասում ակնհայտ է այն իրողությունը, որ ադրբեջանցի պաշտոնյաներն այս կամ այն տեսակետն արտահայտել են գլխավորապես ԱՄՆ-ի համար ցանկալի տրամաբանության մեջ, որն ամերիկացի դիվանագետները մի քանի տող մեկնաբանությամբ վերլուծում են:

Ստորեւ քննության են առնված հիմնականում այն նյութերը, որոնք, օրակարգային լինելով Ադրբեջանի համար, մեծ կարեւորություն են ներկայացնում նաեւ ՀՀ արտաքին քաղաքականության տեսանկյունից եւ նորություն են պարունակում:

* * *

Ադրբեջանը եւ Թուրքիան: Իր դաշնակից Թուրքիայի հանդեպ 2006-2010թթ. Ադրբեջանը վարել է երկակի քաղաքականություն: Խնդիրն այն է, որ երկկողմ հարաբերությունների զարգացմանը զուգընթաց՝ երկու պետությունների շփումներում զգալի տեղատվություն նկատվեց 2007թ.-ից, երբ Ադրբեջանում սկսեցին «վտանգ զգալ» Թուրքիայում իսլամականության խորացումից, եւ 2009թ.-ից, երբ սկզբում հայտարարվեց հայ-թուրքական հարաբերությունների բարելավման գործընթացի մասին, իսկ այնուհետեւ կնքվեցին համապատասխան 2 արձանագրություններ:

Կապված Թուրքիայում իսլամականության խորացման հետ՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը ԱՄՆ դեսպանին ասել է, որ «իսլամացումը Թուրքիայում շատ վտանգավոր է մեզ (իմա՝ Ադրբեջանի-Ա.Ե.) համար: Այն ավելի վտանգավոր է, քանի նմանատիպ զարգացումներն Իրանում»: Ալիեւի ասելով՝ եթե այսօր համապատասխան քայլեր չձեռնարկվեն, 15-20 տարի անց նմանատիպ իրավիճակ կստեղծվի նաեւ Ադրբեջանում: Նա եվրոպական ինտեգրումն ու կայուն զարգացումը դիտարկում է որպես քաղաքական իսլամի դեմ պայքարի գլխավոր կռվան: Շատ «թուրքական քաղաքական գործիչներ վարկաբեկել են իրենց», «Էրդողանը հիանալի մարդ է, բայց իսլամիստ է, որը խնդիր է»,-ասել է նա[2]: Ակնհայտ է, որ Ի.Ալիեւը ոչ թե վախեցած է քաղաքական իսլամի տարածումից, այլ փորձում է օգտագործել դրա հեռանկարը սեփական «աշխարհիկ» իշխանության վարկը բարձրացնելու նպատակով:

Երբ 2009թ. ապրիլի 22-ին հայտարարվեց հայ-թուրքական հարաբերությունների բարելավման «ճանապարհային քարտեզի» մասին, Ադրբեջանում հսկայական աղմուկ բարձրացավ: Ամենաբարձր մակարդակներով անմիջապես սկսեցին խոսել այն մասին, որ Թուրքիան դավաճանել է Ադրբեջանին, նրա ղեկավարները խաբել են Ի.Ալիեւին, որ վերջինս այլեւս չի հավատում նրանց, որ նրանք պատմական սխալ են գործել եւ որ դրա պատճառով լուրջ վնասներ կկրեն անվտանգության, տնտեսության եւ էներգետիկայի բնագավառներում նրանց միջեւ գոյություն ունեցող սերտ կապերը: «Նրանք ամեն ինչ անում են ոչնչացնելու էներգետիկ համագործակցությունը»,- ասել է Ալիեւը ԱՄՆ դեսպանին: Թուրքիան իր քայլերով կկորցնի Ադրբեջանը, այնուհետեւ Կենտրոնական Ասիան, ինչպես նաեւ «թուրքական համերաշխությունը»: ԱՄՆ ներկայացուցիչ Մ.Բրայզան նրան համոզել է մեկնել Ստամբուլ, ուր ժամանելու է նաեւ ԱՄՆ պետքարտուղար Հ.Քլինթոնը, սակայն Ալիեւն ասել է, որ թուրքերը դա կդիտարկեն որպես համաձայնության նշան: Միայն այն դեպքում, երբ հայ-թուրքական սահմանի բացումը եւ ԼՂ հիմնախնդրի լուծումը դրվեն զուգահեռ հարթությունների վրա եւ դիտարկվեն մեկ

փաթեթի մեջ, որը թույլ չի տա ՀՀ ղեկավարությանը որդեգրել ոչ կառուցողական մոտեցում, Ադրբեջանը կրկին պատրաստ կլինի համագործակցության[3]: Այսինքն՝ եթե փորձենք վերլուծել այդ միտքը, կստացվի, որ շրջափակումը շարունակելը ՀՀ-ին կդարձնի ավելի կառուցողական:

Բայց կարեւորն այն է, որ այդ միտքը փորձում են «պարտադրել» ԱՄՆ-ին: Ստորեւ կտեսնենք, որ Բրայզան է Ալիեւին փոխանցել այն տեղեկությունը, որ Թուրքիան պատրաստակամ է կասեցնել հարաբերությունների բարելավման գործընթացը, եթե ՀՀ-ն ԼՂ խնդրի կարգավորման հարցում որդեգրի ոչ կառուցողական դիրքորոշում[4]: Դա կարելի է վերագրել ԱՄՆ-ի ձգտմանը՝ պահպանելու թուրք-ադրբեջանական սերտ հարաբերությունները[5], սակայն, կարելի է վստահաբար ասել, որ Ադրբեջանի պնդումները «տեղ են հասել», եւ Բրայզայի հետ զրույցից հետո Ալիեւն այդ հարցում ավելի է կոշտացնելու իր դիրքորոշումը: Պատահական չէ, որ Թուրքիայի վրա հավելյալ ճնշում գործադրելու համար անմիջապես հայտարարվեց, որ Ադրբեջանը գազի տարանցիկ փոխադրման վերաբերյալ բանակցություններ է վարում ՌԴ-ի հետ[6]:

Թուրքիայի իշխանություններն արագ արձագանքեցին Ադրբեջանի սուր հայտարարություններին: Թուրքիայի վարչապետ Էրդողանը մայիսի 13-ին մեկնեց Բաքու, որտեղ նշեց, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը՝ մասնավորապես սահմանի բացումը, եւ ԼՂ խնդրի կարգավորումը՝ մասնավորապես ՀՀ կողմից «օկուպացված» ադրբեջանական տարածքների վերադարձը, իրենք տեսնում են մեկ փաթեթի մեջ: Ընդ որում՝ ՀՀ-ն նախ պետք է այդ տարածքներից դուրս բերի իր զորքերը: Ալիեւն Էրդողանի այդ հայտարարությունը համարեց «հրաշալիորեն հստակ»[7]:

Սակայն, չնայած դրան, հայ-թուրքական հարաբերությունների բարելավման գործընթացը շարունակվեց, իսկ հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրվեցին համապատասխան արձանագրությունները: Ամերիկացի դիվանագետը հայտնում է, որ այս անգամ Ադրբեջանը բավական հանգիստ արձագանքեց այդ իրադարձությանը եւ, բացի Ղարաբաղի ազատագրման կազմակերպությունից, որը մի փոքրիկ ցույց կազմակերպեց Թուրքիայի դեսպանատան առջեւ, որեւէ էական հակազդեցություն չդրսեւորեց: Նա նշում է, որ պետության քաղաքական կյանքում չնչին դերակատարություն ունեցող խորհրդարանում քննարկում կազմակերպվեց, որտեղ բողոք արտահայտվեց ոչ միայն Թուրքիայի, այլեւ ԱՄՆ-ի դեմ, որի պետքարտուղար Հ.Քլինթոնը, ըստ քննարկման մասնակիցների, եթե կարողացավ ճնշում իրականացնել Թուրքիայի վրա, ապա ի զորու է նույնն անել նաեւ ՀՀ-ի դեպքում, որպեսզի վերջինս ազատի «ադրբեջանական տարածքնե-

ը»: Ալիեւն այդ առնչությամբ հույս է հայտնել, որ արձանագրությունները չեն վավերացվի Թուրքիայի կողմից, մինչեւ ՀՀ-ն ԼՂ խնդրի կարգավորման հարցում էական զիջումներ չանի:

Կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանում արդեն տեղյակ էին, թե ինչու է Թուրքիան ստորագրել արձանագրությունները եւ ինչ է պատրաստվում անել դրանից հետո: Ադրբեջանում կարծում են, որ ստորագրման երեք պատճառ կա. ա) Եվրամիության անդամագրման պահանջներից մեկի կատարում, բ) ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը հակազդեցություն եւ գ) ՀՀ-ն ՌԴ-ի ազդեցությունից հանելու նպատակ, որը թելադրում է ԱՄՆ-ը[8]:

Չնայած դրան, Ադրբեջանը հետագայում եւս որոշ քայլեր ձեռնարկեց՝ ճնշում գործադրելու Թուրքիայի վրա: Ըստ գաղտնազերծված փաստաթղթերից մեկի (2010թ.), Ալիեւն ասել է, որ Ադրբեջանը Թուրքիայի խորհուրդների ու ազդեցության կարիքը չունի եւ դեմ է, որ Թուրքիան, ի հաշիվ ադրբեջանական գազի, փորձում է վերածվել էներգետիկ կենտրոնի: Դրա պատճառով Ադրբեջանը նույնիսկ ցանկանում էր գազի արտահանման վերաբերյալ պայմանագիր կնքել Ռուսաստանի հետ[9]:

Այստեղ հարկ է անդրադառնալ թուրք-ադրբեջանական հարաբերություններում շահերի փոխկապակցվածությունն արտացոլող եւս 2 իրողության, որոնք հաշվի են առնվում ԱՄՆ-ի դիվանագիտության կողմից: Ինչպես 2009թ. գրում է ԱՄՆ դեսպանը, Թուրքիան Ադրբեջանը դիտարկում է նաեւ իբրեւ զենքի վաճառքի մեծ շուկա, թեպետ Ադրբեջանում դա օգտագործում են փողեր լվանալու համար[10]: Իր հերթին՝ Ադրբեջանը փորձում է օգտագործել թուրքական սփյուռքը: Թուրքական սփյուռքի հետ կապերը սերտացնելուն էր ուղղված 2008թ. մարտի 27-28-ը Բեռլինում անցկացված՝ «Աշխարհի ադրբեջանցիների եւ թուրքերի սփյուռքների խմբերի» հանդիպումը, որի առանցքում համատեղ հակահայկական գործունեության ուրվագծումն էր[11]:

Ադրբեջանը եւ ՌԴ-ն: Վերջին տարիներին ՌԴ նկատմամբ Ադրբեջանի վերաբերմունքը մեծապես կախված է եղել ՀՀ-ի հետ նրա հարաբերություններից: Ադրբեջանում հատկապես կարեւորել են Անդրկովկասում ՌԴ աշխարհաքաղաքական շահերը, այդ շահերի համատեքստում ՀՀ-ի դերակատարությունը եւ ԼՂ հարցի լուծման մեջ դրանց ազդեցությունը: Ադրբեջանում կարծում են, որ ՌԴ-ն հատուկ ուշադրություն է դարձնում հետխորհրդային պետություններին՝ ձգտելով վերջիններում տարածել իր ազդեցությունը: Մասնավորապես՝ ՌԴ-ն հենվում է խորհրդային շրջանում ձեւավորված այնպիսի ընդհանրությունների վրա, ինչպիսիք են լեզվականը, մշակութայինը եւ տնտեսականը: ՌԴ-ն Անդրկովկասում ունի

իր հենարանը՝ ի դեմս ՀՀ-ի, ինչպես նաեւ Ադրբեջանի վրա ճնշումներ բանեցնելու համար օգտագործում է ԼՂ խաղաքարտը: Նրան բոլորովին ձեռնտու չէ այդ հարցի արագ կարգավորումը, ուստի այն ձգձգում է: ՌԴ նախագահ Դ.Մեդվեդեւը փորձ կատարեց գլխավոր դեր ստանձնելու ԼՂ հարցի կարգավորման մեջ, որը նրան որոշ ժամանակ հաջողվեց: ԱՄՆ դեսպանի հետ զրույցում Ի.Ալիեւը նշել է, որ եթե ՌԴ-ն ցանկանում է հարցի կարգավորում, ապա նա բոլոր հնարավորություններն ունի ճնշելու ՀՀ-ի վրա, սակայն խուսափում է: Ավելին՝ ամրապնդելով իր ներկայությունը ՀՀ-ում եւ նրան փոխանցելով հսկայական քանակությամբ զենք ու զինամթերք, ՀՀ ղեկավարությանը դարձնում է պակաս կառուցողական: Նամակին կից մեկնաբանության մեջ ԱՄՆ դեսպանը գրում է, որ Ադրբեջանի վրա ճնշում բանեցնելու համար ՌԴ-ն ունի կարեւոր լծակներ: Մասնավորապես՝ ՌԴ-ում ապրում եւ աշխատում են 1-2 մլն ադրբեջանցի միգրանտներ, Ադրբեջանի գյուղացիներն իրենց արտադրանքի մի մասն իրացնում են ՌԴ-ում, եւ Մոսկվայում գործունեություն են ծավալում մի քանի մեծահարուստ ադրբեջանցիներ, որոնք կապեր ունեն Ադրբեջանի նախագահի հետ:

Ադրբեջանի նկատմամբ ՌԴ-ն ունի մի կարեւոր հավակնություն: Խոսքը ադրբեջանական նավթի եւ գազի արտահանման «միջանցքի» մասին է: Նավթի եւ գազի հարցում կրելով ցավալի պարտություն (ադրբեջանական նավթը սկսեց արտահանվել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղով, իսկ գազը՝ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղով), ՌԴ-ն սկսեց իր ծրագրերը կառուցել նորահայտ ադրբեջանական «Շահ Դենիզ-2» գազի հանքավայրի ռեսուրսի վրա՝ փորձելով իրականացնել վերջինիս արտահանումը սեփական տարածքով: Պահը ճիշտ էր ընտրված: Հայ-թուրքական հարաբերությունների բարելավման գործընթացը Ադրբեջանի ղեկավարությանը մղելու էր «վրեժ լուծելու» Թուրքիայի իշխանությունից, ուստի ՌԴ-ի եւ Ադրբեջանի միջեւ սկսեցին բանակցություններ «Շահ Դենիզ-2» հանքավայրի գազի արտահանման վերաբերյալ: Այդ առումով, մեկնաբանության մեջ նշում է ԱՄՆ դեսպանը, Ադրբեջանը փորձելու է նաեւ ՌԴ-ին մղել ԼՂ խնդրի ադրբեջանամետ լուծման[12]:

2008թ. վրաց-ռուսական պատերազմից հետո, ըստ Բաքվում ԱՄՆ դեսպանի, Ադրբեջանում սկսեցին ավելի ու ավելի անհանգստանալ, որ նման դիպաշար ՌԴ-ն կարող է կիրառել նաեւ իրենց նկատմամբ, մանավանդ որ, իրենք «սեղմված» են ՌԴ-ի եւ Իրանի միջեւ, որոնք երկուսն էլ չեն ցանկանում Ադրբեջանի հետագա ինտեգրումն Արեւմուտքին: ԼՂ հարցում ՌԴ-ին ձեռնտու է ներկայիս վիճակը, ուստի Ադրբեջանը պատրաստ է նույնիսկ չմիջնորդավորված, ուղիղ կապի մեջ մտնելու ՀՀ-ի հետ, չնայած վերջինս օգտվում է ՌԴ-ի նմանօրինակ

դիրքորոշումից[13]: Այդ «պատրաստակամությունը» բխում է հակամարտության՝ հնարավոր ռազմական ճանապարհով լուծման դեպքում ՌԴ-ի ուղղակի կամ անուղղակի մասնակցությունը բացառելու ցանկությունից:

2009թ. փետրվարին ԱՄՆ դեսպանը հավաստի աղբյուրներից պարզում է, որ ՌԴ-ն հատուկ ծրագիր է մշակել իր ազդեցության ներքո պահելու մոտակա հարեւաններին՝ մասնավորապես Ադրբեջանին, որի՝ Արեւմուտքին ինտեգրվելու քաղաքականությունը ՌԴ իշխանություններին դուր չի գալիս: 2008թ. Բաքվում ՌԴ դեսպանն ասել է, որ Ռուսաստանի համար այդ պահին Ադրբեջանը «առաջնային հետաքրքրություն» ներկայացնող պետություն է: ԱՄՆ դեսպանի կարծիքով՝ Ադրբեջանը ՌԴ-ում ընկալվում է որպես մի պետություն, որը կարող է խանգարել նրա «էներգետիկ դոմինանտությանը»[14]: Ըստ ԱՄՆ դեսպանի, 2009թ. սկզբին Ադրբեջանը տեղեկություն տարածեց, որ Գյումրիում տեղաբաշխված ռուսական ռազմահենակետից ՀՀ զինված ուժերին է փոխանցվել 800 մլն դոլարի ռազմամթերք, այդ թվում՝ տանկեր, զենիթահրթիռային համակարգեր եւ այլն: Նրանք Բաքվում ՌԴ դեսպանությունից հարցում կատարեցին, որը հերքեց տեղեկությունը: Կից մեկնաբանության մեջ դեսպանը գրում է, որ ինքն անհավանական է համարում նման փոխանցումը, սակայն եթե դա ճիշտ է, կարող է փոխվել ուժերի հավասարակշռությունը: Այնպես որ, ՌԴ-ի հերքմամբ պատմությունը չի ավարտվում, եւ նա՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, պետք է պարզաբանի, թե ինչ է տեղի ունեցել[15]:

Փաստորեն ԱՄՆ-ում այնքան էլ հավատ չեն ընծայում Ադրբեջանի այդօրինակ հայտարարություններին՝ կանխազգալով, որ դրանք ուղղված են դաշնակից Ադրբեջանին «կորցնելու հեռանկարի» ցուցադրմամբ ԱՄՆ-ից ինչ-ինչ զիջումներ կորզելուն:

Ադրբեջանը եւ ԱՄՆ-ը: Ամերիկացի դիվանագետների գրագրությունից պարզվում է, որ երկկողմ բանակցությունների, զրույցների եւ քննարկումների ընթացքում ադրբեջանցի պաշտոնյաները շեշտը դնում են հետեւյալի վրա.

1. Ադրբեջանն ԱՄՆ-ի դաշնակիցն է:
2. ԼՂ խնդրի կարգավորման գործում Ադրբեջանը հենվում է ԱՄՆ-ի ազդեցության վրա:
3. ԱՄՆ-ն Անդրկովկասում իր քաղաքականությունը պետք է կառուցի այն իրողության վրա, որ ՌԴ-ն օգտագործում է ամեն հնարավորություն՝ տարածաշրջանում իր ազդեցության տարածման համար:
4. ՀՀ-ն ՌԴ-ի դաշնակիցն է, ուրեմն ԱՄՆ-ի հակառակորդ ճամբարից է:
5. ԱՄՆ հայամետ կոնգրեսականները չպետք է Ադրբեջանին թշնամի դիտեն:

6. Ադրբեջանի հարցում ԱՄՆ-ը չպետք է կիրառի «վրացական մոդելը», քանի որ Ադրբեջանը այլ կարգի պետություն է:

Կարեւոր է հիշատակել Ի.Ալիեւի կողմից կիրառվող մի հնարքի մասին: ԱՄՆ «համակրանքը» շահելու համար Ադրբեջանն անընդհատ շահարկում է ՌԴ-ի գործոնը[16]: Բացի դրանից, որպես կանոն, Ալիեւը ԱՄՆ դիվանագետների հետ զրույցներում իրեն ներկայացնում է «խիստ ամերիկամետ» դիրքերից եւ ԱՄՆ-ին վախեցնում ՌԴ «ուրվականով»: Մյուս կողմից՝ նա ասում է (օրինակ՝ 2007թ.), որ Ադրբեջանում կան հակաամերիկյան ուժեր, որոնց հարում են լրագրողներ, մտավորականներ եւ քաղաքական գործիչներ: Եթե ԱՄՆ-ը Ադրբեջանին դրամաշնորհներ է տրամադրում քաղաքացիական հասարակության զարգացման համար, ապա ՌԴ-ն եւ Իրանը սեփական միջոցներն ունեն ադրբեջանական հասարակության վրա ազդեցության համար[17]: Ասել կուզի, որ եթե ԱՄՆ-ն «աջակցում» է ՀՀ-ին, դրանով ադրբեջանական որոշ շրջանակների մղում է դեպի ՌԴ եւ Իրան: Այդ ամենը որոշ ազդեցություն թողում է: Օրինակ՝ կից մեկնաբանության մեջ դեսպանը գրում է, որ Ադրբեջանի հասարակությունում աճում են ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության նկատմամբ դժգոհություններն ու զենքի ուժով ԼՂ-ն եւ հարակից շրջանները գրավելու տրամադրությունները: Դեսպանը կարծում է, որ Ադրբեջանը լուրջ տարածաշրջանային դերակատար է, եւ նրա կարծիքը կարող է ծանրակշիռ լինել: Եթե ԱՄՆ-ը ցանկանում է հակամարտության խաղաղ կարգավորում, պետք է հաշվի առնի Ադրբեջանի աճող թերահավատությունը եւ հնարավորությունները՝ պաշտպանելու սեփական շահերը[18]:

Այն, որ ԱՄՆ-ի առջեւ Ադրբեջանն իրեն ներկայացնում է որպես տարածաշրջանում ռուսական ազդեցության տարածման դեմ պայքարող պետություն, շատ բաների մասին է խոսում: Եթե Թուրքիայի քաղաքականության վրա ազդեցություն գործելու համար Ադրբեջանը գազի արտահանման բանակցություններ է վարում ՌԴ-ի հետ, ակնհայտորեն ցույց է տալիս, եւ դա ԱՄՆ-ում գիտակցում են, որ Ադրբեջանում այնքան էլ մտահոգված չեն ռուսական ազդեցության տարածմամբ եւ, առավել եւս, դրա դեմ պայքարով: Սակայն միջազգային պրակտիկայում գոյություն ունի շահերի սպասարկման բնագավառը, եւ Ադրբեջանն իրեն հենց այդ տեսանկյունից էլ «առաջարկում» է ԱՄՆ-ին՝ իհարկե, նրա շնորհիվ ինչ-ինչ հաջողություններ արձանագրելու ակնկալիքով: ԱՄՆ-ը կարողանում է դա օգտագործել, սակայն այդ քաղաքականությունն այնքան էլ վստահելի չէ: Ուստի ԱՄՆ-ը փորձում է Ադրբեջանին իր ուղեծրում պահել՝ օգտագործելով համոզման տարբեր միջոցներ: Մասնավորապես՝ թուրք-հայկական արձանագրությունների ստորագրումից եւ դրանում ԱՄՆ-ի գլխավոր դերակատար լինելու իրողությու-

նից խիստ վրդովված Ադրբեջանի ղեկավարության հետ զրույցներում ամերիկյան դիվանագետների խոսքում հանդիպում են «համոզել», «հորդորել», «խորհուրդ տալ», «վստահեցնել» եւ նմանատիպ այլ արտահայտություններ[19]:

2007թ. մեկ այլ փաստաթղթում Բաքվում ԱՄՆ դեսպանն ուղղակիորեն ներկայացնում է ԱՄՆ արտաքին քաղաքական նպատակներն Անդրկովկասում: Մասնավորապես՝ պետք է լուծվի ԼՂ հիմնահարցը, աշխուժանա Թուրքիայի գործունեությունը տարածաշրջանում, ինչին կնպաստի նաեւ ՀՀ-ի հետ հարաբերությունների բարելավումը, եւ ՌԴ-ն կկորցնի իր դերը տարածաշրջանում: Մի բան հստակորեն ասվել է Ադրբեջանի ղեկավարությանը. Ադրբեջանը եւ Վրաստանը չեն կարող լինել միակ «արեւմտամետ» պետություններն Անդրկովկասում[20]: ԱՄՆ դիվանագետներն այդպիսով ցույց են տվել, որ ՀՀ-ն եւս մտնում է իրենց ծրագրերի մեջ, եւ այդ ծրագրերը ոչ մի կերպ չեն փոխվի Վրաստանի ու Ադրբեջանի այն հավաստիացումներից, թե իրենք են Անդրկովկասում միակ «արեւմտամետ» պետությունները:

Հանդիպումներից մեկի ժամանակ ԱՄՆ դեսպանը փորձել է համոզել Ի.Ալիեւին, որ ճնշումներ չբանեցնի Թուրքիայի վրա՝ կապված ՀՀ-ի հետ սահմանների բացման հետ, քանի որ «ավելի բաց» Հայաստանը ավելի քիչ կախված կլինի ՌԴ-ից, եւ կվերանա «պաշարվածի մենթալիտետը»: Սակայն Ալիեւն ասել է, որ Թուրքիայի իշխանությունների հետ ինքն անընդհատ աշխատել է, որ Թուրքիան չբացի սահմանը: Ադրբեջանի նախագահը, այնուամենայնիվ, կարծում է, որ բացումից հետո էլ Թուրքիան գրկաբաց չի «դիմավորի» Հայաստանին: Ալիեւն ասել է նաեւ, որ 2007թ. նոյեմբերից սկսած բանակցային գործընթացը կառուցողական փուլում է, միայն Լաչինի հարցն է, որ խանգարում է: Բացի դրանից, հանրաքվեով ԼՂ հարցի լուծումը զուտ ձեւական է, քանի որ 5 կամ 10 տարի անց տարբերությունը Ադրբեջանի ու Հայաստանի միջեւ հսկայական կլինի, Ադրբեջանը կդասվի աշխարհի զարգացած պետությունների շարքը, եւ ԼՂ-ն ինքնըստինքյան կձգտի մտնել Ադրբեջանի կազմի մեջ, սակայն «արդյոք այդ ժամանակ Ադրբեջանը կցանկանա ետ ընդունել աղքատ ԼՂ-ն»[21]: Նա ԱՄՆ դեսպանին փորձում է համոզել, որ չնայած Միացյալ Նահանգների ջանքերին, թուրք-հայկական բարեկամությունը չի կայանա, նույնիսկ եթե սահմանը բացվի, քանի որ այդ հարցում էական է Ադրբեջանի դիրքորոշումը: Իսկ վերջինս կախված է ԼՂ խնդրի կարգավորումից:

Հայ-թուրքական արձանագրությունների վերաբերյալ տեղեկություններից հետո, երբ խիստ սրվեց Ադրբեջանի վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ, Բրայզան հանդիպեց Ալիեւին եւ փոխանցեց նրան, որ հայ-թուրքական հարա-

բերությունների բարելավման գործընթացը չի խանգարելու ԼՂ խնդրի կարգավորմանը, եւ որ Թուրքիան տեղեկացրել է ԱՄՆ կառավարությանը, որ կկասեցնի գործընթացը, եթե ՀՀ-ն ԼՂ խնդրի կարգավորման մեջ դառնա ոչ կառուցողական: Ալիեւը նրան ասել է, որ իր պահանջը հետեւյալն է. եթե Մադրիդյան սկզբունքների առաջին 4 կետերը կատարվեն[22], ապա Թուրքիան «կարող է» բացել սահմանը[23]:

Այսպիսով՝ Ադրբեջան-ԱՄՆ հարաբերություններում չկա միանշանակություն: Ակնհայտ է Ադրբեջանի պահանջները չափավորելու, ինչպես նաեւ նրա քաղաքականությունը սեփական գերակայություններին համապատասխանեցնելու՝ ԱՄՆ-ի ձգտումը: Ադրբեջանը փորձում է այդ գերակայությունների մեջ «տեղավորել» սեփական շահը, բայց ապարդյուն:

Ադրբեջանը եւ Վրաստանը: Վրաստանը միակ երկիրն է, որի հետ Ադրբեջանը 2006-2010թթ. չի ունեցել ԱՄՆ դիվանագետների համար հետաքրքրություն ներկայացնող խնդիր՝ Պետդեպարտամենտ տվյալներ փոխանցելու առումով: Բացառություն են կազմել 2 խնդիր, որոնք ուղղակի կապ չունեն վրաց-ադրբեջանական հարաբերությունների հետ: Առաջին՝ Ադրբեջանի պաշտոնյաները ԱՄՆ դիվանագետների առջեւ բարձրացրել են Ռուսաստանի՝ Վրաստան «ներխուժելու» հարցը՝ նշելով, որ ՌԴ-ն ներկայում վարում է նախահարձակ արտաքին քաղաքականություն հարեւան տարածաշրջաններում եւ, մասնավորապես, Անդրկովկասում: Նկատի ունենալով ադրբեջանական նավթի արտահանումը Արեւմուտք՝ ի շրջանցումն ռուսական տարածքի, ինչպես նաեւ ՌԴ-ի հիմնավոր ներկայությունը ՀՀ-ում, որի հետ Ադրբեջանն ունի լուրջ խնդիր, ՌԴ-ն սպառնալիք է դարձել Ադրբեջանի համար: Այսկերպ Ադրբեջանի ղեկավարությունը փորձում է բարձրացնել սեփական վարկը՝ օգտագործելով ռուս-վրացական հակամարտության իրողությունը: Երկրորդ՝ ԱՄՆ դիվանագետների հետ զրույցներում ադրբեջանցի պաշտոնյաները նշել են, որ իրենց երկրում չի գործի «վրացական մոդելը»[24]: Ամենայն հավանականությամբ, նրանց անհանգստացրել են ավտորիտար վարչակարգերի տապալման՝ ԱՄՆ-ի քաղաքականությունը, ինչպես նաեւ ռուսամետ վրացական իշխանությունների դեմ բարձրացած ըմբոստությանն ԱՄՆ-ի աջակցությունը, որն ավարտվեց Սահակաշվիլու թիմի հաղթանակով: Ճիշտ է, Ալիեւի վարչակարգը ռուսամետ չես անվանի, սակայն մյուս կողմից՝ ԱՄՆ-ում հասկանում են, որ չնայած այդ վարչակարգի բոլոր հավաստիացումներին, խնդիրներ լուծելու համար այն կարող է որդեգրել նաեւ ռուսամետ ընթացք: Այդ իսկ պատճառով Ադրբեջանի իշխանությանը խիստ անհանգստացնում է «վրացական մոդելը»:

Ադրբեջանը եւ Իրանը: Ադրբեջանի վերաբերմունքը հարեւան Իրանի նկատմամբ կախված է մի շարք իրողություններից՝ ա) Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշումը, բ) Իրանում բնակվող միլիոնավոր ադրբեջանցիները եւ Ադրբեջանի նկրտումները այսպես կոչված՝ «Իրանական Ադրբեջանի» նկատմամբ, գ) հայ-իրանական հարաբերությունները, դ) Անդրկովկասում Իրանի աշխարհաքաղաքական շահերը, ե) երկու երկրներում էլ իսլամի միեւնույն ուղղության առկայությունը եւ այլն:

Վաղուց ի վեր Ադրբեջանում Իրանն ընկալվում է իբրեւ հակառակորդ, ուստի պատահական չէ, որ հաճախ շրջանառվում է Իրանին հարված հասցնելու համար ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանի տարածքն օգտագործելու հնարավորությունը: Դրա հավանականությունն ավելի է սրում լարվածությունը: Իրանի հանդեպ ադրբեջանական թշնամանքը սրվում է նաեւ այն իրողության պատճառով, որ Իրանը նպաստում է ՀՀ տնտեսական զարգացմանը, նրան մատակարարում գազ, պատրաստվում մասնակցել ՀՀ-ն ու Իրանը կապող երկաթգծի շինարարությանը, կառուցում հիդրոէլեկտրակայան ՀՀ-ում եւ այլն[25]: Ադրբեջանցիները մի միֆ են հորինել, ըստ որի՝ Իրանից դուրս եկող թմրանյութերի մեծ «մայրուղին» անցնում է ՀՀ-ով[26]:

Ադրբեջանի եւ Իրանի հարաբերությունները հատկապես սրվեցին այն բանից հետո, երբ 2006թ. Իրանում ցրեցին ադրբեջանցի երիտասարդների ցույցը, որի ընթացքում սպանվեց 10 ադրբեջանցի: Այդ, ինչպես նաեւ բոլոր ադրբեջանցիների համերաշխության հարցը, որը քննարկվելու էր ադրբեջանական սփյուռքի 2006թ. խորհրդաժողովում, ամերիկացի դիվանագետների կարծիքով, ավելի էր սրելու Ադրբեջանի հանդեպ Իրանի վերաբերմունքը[27]: Ըստ ԱՄՆ դեսպանի, Ադրբեջանում վախենում են Իրանից՝ այն համարելով «անկյուն քշված վայրի կենդանի»[28] կամ «վտանգավոր, շատ վտանգավոր ու անկանխատեսելի»[29]:

Ադրբեջանի իշխանությունների համար մարտահրավեր էր, որ վերջին տարիներին Իրանն ուժեղացնում էր իր դիրքերը Նախիջեւանում, որը տնտեսական առումով ամբողջապես կախված է Իրանից[30]: Կա եւս մեկ պատճառ, որը վանում է Ադրբեջանին Իրանից: Մասնավորապես՝ Ադրբեջանում ԱՄՆ դեսպանին զգալ են տվել, որ իրենց մտահոգում են Իրան-Թուրքիա գազային բանակցությունները, եւ եթե քննարկվի «Նաբուկկո» ծրագրում Իրանին ընդգրկելու հարցը, ապա Ադրբեջանը ծրագրից կհրաժարվի: Ընդ որում՝ ցանկացած նման «հրաժարում» ներկայացվում է որպես «ընթացք դեպի ՌԴ»[31]: Պարզից էլ պարզ է, որ գազային պաշարներով ադրբեջանականին մեծապես գերազանցող Իրանի ներգրավումը նման ծրագրում Ադրբեջանը կդարձնի էներգետիկ ռեսուրսների երկրորդ կարգի մատակարար:

Այս խորապատկերին խիստ տագնապալի հնչեցին 2007թ. օգոստոսի 21-22-ը Իրանի նախագահ Մ.Ահմադինեժադի՝ Բաքու այցի ընթացքում ստորագրված համատեղ հայտարարության այն կետերը, ըստ որոնց՝ երկու երկրները պատրաստակամություն էին հայտնում զարգացնելու տնտեսական եւ քաղաքական փոխհարաբերությունները, հիմնավորում սեփական խաղաղ ատոմային ծրագիրն ունենալու Իրանի իրավունքը, հայտնում իրենց համոզմունքն առ այն, որ ԼՂ խնդիրը պետք է կարգավորվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության, ինքնիշխանության եւ սահմանների անխախտելիության հիման վրա, եւ որ ԵԱՀԿ Մինսկի խումբը պետք է ավելի գործուն ջանքեր ներդնի հակամարտության կարգավորման գործում: Կարեւոր է այն, որ ԱՄՆ դեսպանն այս հայտարարության թարգմանությանը կից որեւէ մեկնաբանություն չի արել, ինչպես սովորաբար անում է[32]: Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Ադրբեջանը եւ Իսրայելի պետությունը: Մեծ կարեւորություն են ներկայացնում Ադրբեջան-իսրայելական հարաբերությունները, քանի որ վերջին տարիներին սրվել են Ադրբեջանի հիմնական դաշնակցի՝ Թուրքիայի հետ Իսրայելի հարաբերությունները, ինչպես նաեւ հայտնի են Ադրբեջանի հարեւան Իրանի ու Իսրայելի խիստ թշնամական հարաբերությունները:

Ինչպես հաղորդում է Բաքվում ԱՄՆ դեսպանը, երբ 2008թ. տեղի ունեցան Գազայի իրադարձությունները, Բաքվում ուժեղացվեց Իսրայելի դեսպանատան անվտանգության հսկողությունը: Ասված է նաեւ, որ Իսրայելի հետ հարաբերություններում Ադրբեջանի կարեւոր խնդիրներից է որակյալ զենքի ձեռքբերումը, որը նա չի կարող ստանալ ԱՄՆ-ից եւ Եվրոպայից՝ կապված տարբեր սահմանափակումների հետ, ինչպես նաեւ հետխորհրդային տարածքում իր գլխավոր զենքի մատակարարներ Ուկրաինայից եւ Բելառուսից: 2008թ. Ադրբեջանը զենքի ձեռքբերման ընդգրկուն պայմանագիր է կնքել Իսրայելի հետ, ըստ որի՝ իսրայելական 3 ընկերություններ Ադրբեջանին մատակարարելու են ականանետեր, զինամթերք, ռեակտիվ հրետանի եւ ռադիոսարքավորումներ: Բացի դրանից, Ադրբեջանը գնում է սարքավորումներ, որոնցով արդիականացնում է եղած խորհրդային զենքերը: Խոսվում է նաեւ անօդաչու թռչող սարքեր ձեռք բերելու մասին:

Չնայած այդ ամենին, Ադրբեջանը դեսպանություն չի բացում Իսրայելում, քանի որ թեեւ ոչ կոշտ, բայց որոշ հայտարարություններ անում է Պաղեստինում Իսրայելի գործողությունների դեմ, ինչպես նաեւ չի ցանկանում «բարկացնել» Իրանին: Իսրայելի հետ սերտ հարաբերություններում Ադրբեջանի քաղաքական նպատակներից է ԱՄՆ-ի պրոիսրայելական լոբբին սեփական շահերին ծառա-

յեցնելը, ինչը երբեմն ստացվում է: Ինչ վերաբերում է իսրայելցի գործարարների կողմից Ադրբեջանում ներդրումների կատարմանը, ապա դեսպանը գրում է, որ իր աղբյուրն Իսրայելում հայտնում է, որ ավելի շահավետ է ներդրումներ կատարել կոռումպացված Ղազախստանում, որտեղ մի անգամ մեծ կաշառք ես վճարում եւ այդուհետ կարող ես ազատորեն գործել, քան Ադրբեջանում, որտեղ կաշառքի պահանջը երբեք չի դադարում: Բայց Իսրայելի համար Ադրբեջանը կարեւոր է Իրանի դեմ հնարավոր դաշինքի առումով եւ որպես զենք-զինամթերքի վաճառքի շուկա: Այդ իսկ պատճառով Իսրայելն Ադրբեջանի հետ հարաբերություններում երկրորդական հարցերով ճնշում չի բանեցնում նրա վրա, որպեսզի չվնասի առաջնային շահերը[33]:

Ադրբեջանը եւ ԼՂ խնդրի կարգավորման գործընթացը: 2006թ. կատարած մեր վերլուծություններից մեկում[34] անդրադարձել էինք ԼՂ շուրջ զարգացումներին, ԵԱՀԿ Մինսկի խմբի եւ դրա վերաբերյալ ԱՄՆ-ի կողմից համանախագահ Մ.Բրայզայի միջոցով ԼՂ խնդրի կարգավորման ներկա վիճակի բացահայտումներին ու եկել եզրակացության, որ այդ բացահայտումները (թե կարգավորման ինչ սկզբունքների շուրջ են բանակցում երկու պետությունների նախագահները) կսահմանափակեն խուսանավելու հնարավորությունները, Ադրբեջանի նախագահն այլեւս չի կարողանալու սեփական ժողովրդին «կերակրել» կեղծ տեղեկություններով, փորձ կկատարի հակամարտության կարգավորումը տեղափոխել այլ կազմակերպություն, հրաժարվել սեղանի վրա դրված եւ բացահայտված սկզբունքներից, կսրվի իրավիճակը տարածաշրջանում եւ էլ ավելի կուժեղացվեն ՌԴ դիրքերը ՀՀ-ում: Բացի դրանից, ԱՄՆ-ը կփորձի կենտրոնական դեր ստանձնել հակամարտության կարգավորման մեջ: Խնդիրն այն է, որ Բրայզայի միջոցով կատարած գաղտնազերծումների հետեւանքը եւ տարածաշրջանային զարգացումներն ուղղակի մատնանշում էին այդ ամենը: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ նման եզրահանգումները կառուցված են իրական հիմքի վրա:

ԼՂ խնդրի կարգավորման գործընթացում Ադրբեջանի դիրքորոշումն աստիճանաբար դարձել է մաքսիմալիստական: Մոտեցումը հետեւյալն է. փուլային, թե այլ տարբերակով հայկական զորքերը պետք է հեռանան «ադրբեջանական» տարածքներից, իսկ ԼՂ կարգավիճակը պետք է որոշվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում: Ադրբեջանը վերջին տարիներին խնդրի լուծման բնագավառում փորձում է ներմուծել 2 մոտեցում. առաջին՝ հակամարտությունն ընթանում է ոչ թե Ադրբեջանի ու ԼՂՀ-ի, այլ Ադրբեջանի ու ՀՀ-ի միջեւ, այսինքն՝ փորձելով այդկերպ շրջանցել ԼՂ հայության ինքնորոշումը: Երկրորդ՝ եթե խնդիրը չլուծվի խաղաղ ճանապարհով, ապա Ադրբեջանը պատրաստ է այն լուծել զենքի ուժով:

Դատելով Ադրբեջանի մաքսիմալիստական մոտեցումից՝ կարելի է եզրահանգել, որ պատերազմը նրա համար օրակարգային է խնդրի կարգավորման յուրաքանչյուր ձեւաչափի պայմաններում, բացառությամբ, եթե կատարվեն նրա բոլոր պահանջները: Ըստ այդմ՝ բանակցությունները դառնում են փակուղային, ինչը երեւում է Ադրբեջանի խուսանավումներից, որոնք տեղի են ունենում խնդրի կարգավորմանն ուղղված յուրաքանչյուր բանակցության ընթացքում: Նրանք ՀՀ-ն ներկայացնում են որպես ագրեսոր, որը գրավել է Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը: Ավելին՝ հայերն, իբր, իրագործել են, այսպես կոչված, «Խոջալուի ցեղասպանությունը», ինչին ԱՄՆ դեսպանը 2006թ. նամակում կասկածանքով է վերաբերվում՝ նշելով, որ այն ներմուծվել է հակահայկական քարոզչությունը սաստկացնելու նպատակով:

Ըստ դեսպանի տեղեկությունների, Ադրբեջանում 2005թ. կազմել են 72 հայերի ցուցակ, որոնք իբր մեղավոր են այդ իրադարձության համար, եւ այդ ցուցակը ներկայացնելու են Ինտերպոլ: Նրանք նպատակ ունեն նաեւ դիմելու միջազգային հանրությանը, որպեսզի վերջինս աջակցի ադրբեջանցիներին՝ ճանաչելով բոլոր այն հանցագործությունները, որ հայերը գործել են ադրբեջանցիների նկատմամբ վերջին 200 տարում: Նրանք խստորեն հրահանգել են իրենց սփյուռքին ամենուր բարձրացնել այդ հարցերը՝ համագործակցելով թուրքական սփյուռքի հետ: Դեսպանը նշում է, որ «Խոջալուի դեպքերի» հետ կապված 2006թ. միջոցառումներն ակնհայտորեն միջազգայնացնելու միտում կա, սակայն, նրա կարծիքով, այն էլ ավելի է մեծացնելու հայերի ու ադրբեջանցիների միջեւ գոյություն ունեցող անջրպետը, ինչպես նաեւ անխուսափելիորեն դժվարացնելու է հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը[35]: Ակնհայտ է, որ ԱՄՆ դեսպանը իրատեսորեն է գնահատում Ադրբեջանի քաղաքականությունը եւ այն, թե ինչ հետեւանքներ է այն ունենալու:

Հակամարտության կարգավորման գործընթացում ԼՂՀ-ի ներկայացուցչի ընդգրկման մասին հայկական կողմի պահանջի հետ կապված՝ դեսպանությունից հայտնում են, որ Ադրբեջանի ԱԳ նախարար Է.Մամեդյարովն ասել է, որ իրենք կհամաձայնեն ԼՂ հայկական համայնքի մասնակցությանը, եթե վերջինս ընդունի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, Բաքուն համարի իր մայրաքաղաքը, ընդունի Ադրբեջանի քաղաքացիություն եւ ապրի Ադրբեջանի Սահմանադրության ներքո: Նա հավելել է, որ ինքը չի կարծում, թե ՀՀ իշխանությունը համաձայն է ԼՂ հայկական համայնքի մասնակցությանը գործընթացին[36]: Մի շարք կարեւոր մտքեր կան այս խոսքում, որ ԱՄՆ դիվանագետները կամ չեն նկատել, կամ էլ կարեւորություն չեն տվել դրանց: Եթե ՀՀ-ն պահան-

ջում է ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցությունը բանակցություններին, ապա Ադրբեջանի պաշտոնյաները փորձում են դա բացառել եւ, բացի դրանից, նրանք չեն խոսում ԼՂՀ մասնակցության մասին, այլ՝ ԼՂ «հայկական համայնքի», այն էլ միայն այն դեպքում, եթե վերջինս մտնի Ադրբեջանի կազմի մեջ: Այսինքն՝ միայն Ադրբեջանին ձեռնտու կարգավորման դեպքում[37]:

Երբ Հունգարիայում դատապարտում էին հայ սպա Գուրգեն Մարգարյանին դաժանորեն սպանած Ռ.Սաֆարովին, ԱՄՆ դեսպանության տվյալներով՝ այդ գործընթացն Ադրբեջանում ցուցադրում էին պետական հեռուստատեսությամբ, սակայն դեսպանը նշում է, որ դրա դեմ բողոքն Ադրբեջանում «փոքր» է եղել: Ակցիաներ կազմակերպել են Ղարաբաղի ազատագրության կազմակերպությունը եւ մի ընդդիմադիր երիտասարդական կազմակերպություն: Ադրբեջանի նախագահի աշխատակազմից հայտնել են, որ իրենք փորձելու են իրականացնել Ռ.Սաֆարովի արտահանձնումը դատավճռից հետո, եւ խորհրդարանի Մարդու իրավունքների հանձնաժողովն ուսումնասիրելու է այդ հարցը: Դրան զուգահեռ՝ ԱՄՆ դեսպանության համար պարզ է դարձել, թե նման իրավիճակում ինչքան է դժվարանալու Ադրբեջանի խնդիրը ԼՂ հարցի կարգավորման գործընթացում: Ազգայնականության աճի պայմաններում ԱՄՆ դեսպանության աշխատակիցներն այն կարծիքն են հայտնում, որ ադրբեջանցիները քիչ են պատրաստ հակամարտության խաղաղ կարգավորմանը: Իրենք դեռ շարունակելու են «մղել» Ադրբեջանի իշխանություններին՝ կարգավորման գործընթացը «հասու դարձնել» ժողովրդին, սակայն դա լինելու է խիստ դժվարին աշխատանք[38]:

2006թ. ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Մ.Բրայզան հանդիպել է Ի.Ալիեւին: Վերջինս նրան ասել է, որ եթե հայերն անմիջապես վերադարձնեն «ադրբեջանական 5 շրջանները» եւ ընդունեն մյուս 2-ի վերադարձի ժամկետները, ապա Ադրբեջանը կհամաձայնի կարգավորման մնացյալ սկզբունքներին: Ալիեւն ասել է, թե իբր ինքը Բուդապեշտի հանդիպման ժամանակ հայտնել է, որ Ադրբեջանը համաձայնության ստորագրման դեպքում պատրաստ է 100 մլն եւ ավելի տնտեսական եւ սոցիալական օգնություն տրամադրել ԼՂ տարածաշրջանին[39]: Նման միտք նա նախկինում եւս արտահայտել էր: ԱՄՆ դեսպանի փոխանցմամբ՝ Ալիեւն ասել է, որ «գրավված տարածքների» վերադարձից հետո իրենք կզարգացնեն տեղի ենթակառուցվածքները[40]: Ըստ նրա, հայերի հետ հանդիպումը Բուդապեշտում շատ ավելի արդյունավետ էր, քան Ռամբույեում, չնայած ՀՀ նախագահն ասել է, որ համաձայնագիրն այդ տեսքով չի ստորագրի[41]: Այդուհանդերձ՝ ամերիկացի դիվանագետները գտնում են, որ ադրբեջան-

ցիները պատրաստ չեն համաձայնագրի նախագծով նախատեսված ԼՂ հանրաքվեի գաղափարն ընդունելուն, ավելին՝ հստակորեն դեմ են դրան[42]:

Այդ նույն ժամանակ Ադրբեջանի պաշտպանության նախարար Ս.Աբիեւը Բրայզային ասել է, որ իրենք բավարարված են ԵԱՀԿ Մինսկի խմբում ԱՄՆ իշխանության ներդրումից, բայց սպասում են ավելի գործուն քայլերի: Քանի դեռ ՌԴ-ն ԼՂ խնդրի կարգավորման հարցում մնում է հանգուցային դերակատար, Ադրբեջանը չի կարող «կտրվել» նրանից: Իսկ Բրայզան ասել է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը հակված է այն մտքին, որ «հինգ շրջաններն» Ադրբեջանին վերադարձվեն անմիջապես, մնացյալ երկուսը՝ աստիճանաբար: Իսկ ինչ վերաբերում է ԼՂ կարգավիճակի հարցին, ապա խմբի ռազմավարությունն է՝ այն թողնել «երկիմաստ՝ հնարավորինս երկար»[43]: Պարզից էլ պարզ է, որ Բրայզայի նման մտքերը պետք է գոտեպնդեին Ադրբեջանի իշխանություններին: Սակայն պարզ չէ, թե արդյոք նա արտահայտել է ԱՄՆ պաշտոնական տեսակետը, թե իր անձնական կարծիքը, քանի որ այն հակասում է ԱՄՆ հայտարարություններին եւ Բաքվի ամերիկյան դեսպանության տեսակետին:

2007թ. մի նամակում ԱՄՆ դեսպանատնից տեղեկացնում են, որ կարծես Ալիեւն արդեն հեռացել է Քելբաջարի ու Լաչինի «հատուկ կարգավիճակի» ձեւաչափից եւ հակված է այն պահանջին, որ բոլոր 7 շրջանները վերադարձվեն Ադրբեջանին: Նշված է, որ Ալիեւը խոսում է միայն տարածքային ամբողջականության սկզբունքի մասին, այլ ոչ թե ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ այդ եւ ինքնորոշման իրավունքի համադրության տեսակետից: Նա պնդում է, որ ԼՂ կարգավիճակը կարող է որոշվել միայն այն բանից հետո, երբ ադրբեջանցիները վերադառնան, եւ միմիայն Ադրբեջանի «տարածքային ամբողջականության» շրջանակներում: Դրա պատճառներից մեկը, ըստ դեսպանության, այն է, որ ժողովուրդն այնքան էլ չի հետաքրքրվում Ալիեւի խոսքերով, մինչդեռ քաղաքական շրջանակները նրա լեգիտիմությունն ուղղակիորեն կապում են ԼՂ խնդրում նրա դիրքորոշման հետ: Դա ստիպել է Ալիեւին Ադրբեջանի հասարակությանը ներկայացնել ԼՂ կարգավորման գործընթացի այդ փուլում քննարկվող հարցերը եւ հայտարարել, որ դրանք իր համար ընդունելի չեն: 7 շրջանները պետք է «վերադարձվեն» Ադրբեջանին փուլային տարբերակով, սակայն փուլերը չպետք է երկար տեւեն: Նամակի հեղինակը նշում է, որ նման հայտարարությունները Ալիեւի կողմից պատրաստվում են ներքին օգտագործման համար: Սակայն ներքին լսարանի մեծ մասը լուռ է արձագանքում, իսկ մնացյալը՝ ծայրահեղ տրամադրված հատվածը, մշտապես դժգոհ է Ալիեւի եւ Մամեդյարովի քաղաքականությունից, քանի որ նրանք խոսում են նաեւ «Ադրբեջանի կազմում ԼՂ-ի բարձր ինքնավարության մասին»[44]:

2006թ.-ից Ադրբեջանն աստիճանաբար սկսեց ներմուծել նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափում հակամարտության կարգավորման անարդյունավետությունը: Թեեւ այդ խմբի մեջ է մտնում նաեւ ԱՄՆ ներկայացուցիչը, սակայն Ադրբեջանը մնացյալ երկու համանախագահներին ժամանակ առ ժամանակ մեղադրում է հայամետության մեջ:

2007թ. ԱՄՆ դիվանագետների հետ զրույցներում Ադրբեջանի պաշտոնյաները փորձել են նրանց հավատացնել, թե իրենց հույսը կարգավորման հարցում դնում են ԱՄՆ-ի վրա, քանի որ Ֆրանսիան ակնհայտ հայամետ է, իսկ ՌԴ-ն ձգձգում եւ սառեցնում է այդ գործընթացը: ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափն անօգուտ է, եւ ԱՄՆ-ը պետք է իր ձեռքը վերցնի հակամարտության կարգավորման գործընթացը: ՌԴ ԱԳ նախարար Ս.Լավրովն ասել է, որ ՌԴ-ն, հավանաբար, ճանաչելու է Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախությունը, եթե ճանաչվի Կոսովոյի անկախությունը, եւ Ալիեւը հույս ունի, որ այդ գործընթացը չի տարածվի նաեւ ԼՂ-ի վրա: Նա ավելացրել է, որ իրենք պատրաստակամ են եղել Ս.Պետերբուրգի հանդիպման ժամանակ առաջընթաց արձանագրել, սակայն ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանն իբր ասել է, թե ինքը նման պատասխանատվություն չի ստանձնի: «Ինչու՞ պետք է ես անեմ դա, թողեք դա մյուս նախագահին»,- իբր ասել է Ռ.Քոչարյանը: Ալիեւը մտավախություն է հայտնել այն բանի հետ կապված, որ Քոչարյանը սպասում է Կոսովոյի հարցի լուծմանը, որպեսզի ԼՂ հարցի նմանատիպ կարգավորում պահանջի ԱՄՆ-ից, որը Կոսովոյի դեպքում կողմ է անկախությանը: Կոսովոյի անկախացումը եւ դրա միջազգային ճանաչումը կարող են լուծման ձեւաչափ դառնալ Անդրկովկասի հակամարտությունների համար, ուստի Ադրբեջանը դեմ է Կոսովոյի անկախացմանը: ԱՄՆ դեսպանը նրան պատասխանել է, որ իրենց դիրքորոշումը երկու հարցերում տարբեր է, քանի որ մի դեպքում Հարավսլավիա պետությունը փլուզվել է, եւ Կոսովոն անկախանում է նրա փլատակների վրա, մինչդեռ Անդրկովկասում նման իրավիճակ գոյություն չունի[45]:

Արդեն 2008թ. Ադրբեջանը հայտարարեց, որ Կոսովոյի անկախությունը միջազգային իրավունքի խախտում է, եւ երբեք այդ անկախությունը չի ճանաչվի իր կողմից: Նամակի մեկնաբանության մեջ ԱՄՆ դեսպանը գրում է, որ իրենք հասկանում են, որ Ադրբեջանը դեմ է Կոսովոյի անկախությանը, քանի որ վախենում է, թե դա կբերի նաեւ ԼՂՀ-ի միջազգային ճանաչմանը, չնայած դեսպանությունը Ադրբեջանի իշխանություններին ասում է, որ այդ երկուսը միմյանց հետ կապ չունեն եւ տարբեր են: Ադրբեջանը սպասում է, թե քանի պետություն կճանաչի Կոսովոն, որպեսզի հասկանա, թե ինչպիսին կլինի պետությունների վերաբերմունքը ԼՂՀ-ի անկախությանը[46]:

Կապված ԼՂ խնդրի կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափի փոփոխության ցանկության հետ՝ հարկ է նշել, որ Ադրբեջանի կողմից 2008թ. մարտի 14-ին ՄԱԿ-ում մի բանաձեւ է անցկացվել «Իրավիճակն Ադրբեջանի գրավյալ տարածքներում» անվամբ, որին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ներկայացուցիչները դեմ են քվեարկել, ավելին՝ հանդես են եկել հայտարարությամբ, որ այդ բանաձեւն արտահայտում է միայն հակամարտության մեկ կողմի շահերը: Դա խիստ զայրացրել է Ադրբեջանին: Մասնավորապես՝ Ադրբեջանի ԱԳՆ փոխնախարար Ա.Ազիմովը հայտարարել է, որ իրենք կշարունակեն աշխատել համանախագահների հետ, սակայն իրենց դիրքորոշումն արմատապես կփոխվի: Նա ասել է, որ իրենք կցանկանային, որպեսզի համանախագահների մեջ մտնեին նաեւ Թուրքիայի եւ Գերմանիայի ներկայացուցիչներ, թեեւ հետո Գերմանիան բացասաբար արձագանքեց այդ գաղափարին:

Ադրբեջանի մի շարք պաշտոնյաներ հանդես եկան ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափի փոփոխության նախաձեռնությամբ: Բաքվում ԱՄՆ դեսպանն այս ամենից հետո սեփական մեկնաբանության մեջ կարծիք է հայտնում, որ իրենք դեռեւս տեսնելու են Ադրբեջանի փորձերը՝ դուրս գալու ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափից, որը կոչված է «ստիպելու» ԱՄՆ-ին՝ հանգելու նրան, որ «ԱՄՆ-ը կարող է անել ավելին, եթե մտքին դնի»[47]: Կապված վերոհիշյալ բանաձեւի հետ՝ Բրայզան Ալիեւին ասել է, որ ինքը՝ իբրեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, դեմ է այդ բանաձեւին, քանի որ այն միակողմանի է, իսկ որպես ԱՄՆ պաշտոնատար՝ կողմ է, քանի որ այն կարող է ամրապնդել ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունները: Ալիեւը նշել է նաեւ, որ 2008թ. մարտի 4-ի սահմանային միջադեպն իրենք չեն հրահրել, քանի որ դրանով կարող էին միայն նպաստել «տարանջատված» եւ «սեփական արյան մեջ խեղդվող» հայերի միավորմանն ու հզորացմանը[48]:

Ա.Ազիմովը՝ բանաձեւին դեմ քվեարկելու հարցը քննարկելով Ֆրանսիայի գործերի հավատարմատարի հետ, իրեն այդ ընթացքում խիստ անշնորհք է պահել՝ խախտելով դիվանագիտական էթիկայի բոլոր կանոնները, եւ անցել ուղղակի մեղադրանքների ու վիրավորանքի: Ֆրանսիացին նրան ասել է, որ իրենք չէին կարող պաշտպանել ՄԱԿ-ում Ադրբեջանի առաջ քաշած բանաձեւը, քանի որ դա կլիներ չեզոքության խախտում: «Ադրբեջանը պյուռոսյան հաղթանակ է տարել այդ բանաձեւով»,- ասել է նա: Դրանից հետո ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Բ.Ֆասյեն զանգահարել է Մամեդյարովին եւ պահանջել, որ բանակցությունների համար գործուղի այլ դիվանագետ[49]: ԱՄՆ դեսպանը տեղեկացնում է, որ Ադրբեջանի ԱԳ փոխնախարար Ա.Ազիմովն օգտագործվում է՝ Ադրբեջանի մաքսիմալիստական նպատակներն արտահայտելու համար[50]:

Արդեն 2009թ. թվագրված նամակում ԱՄՆ դեսպանը տեղեկացնում է, որ Ադրբեջանը ցանկանում է փոփոխել ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափը, քանի որ այն նրան զգալի անհարմարություններ է պատճառում: Նույն Ազիմովը Եվրամիության ներկայացուցչին ասել է, որ իրենց դուր չի գալիս Մադրիդյան փաստաթուղթը, եւ իրենք երբեք այն չեն ստորագրի: Ադրբեջանում զարմանում են, թե ինչու ԱՄՆ-ը չի աջակցում իրենց, քանի որ իրենք ուզում են, որ կարգավորման գործընթացում առաջնային դերը տրվի ԱՄՆ-ին, եւ ինչու ԱՄՆ-ը հայտարարություն չի տարածում ի պաշտպանություն Ադրբեջանի տարածքային ամբողջականության, ինչպես դա արել է Վրաստանի պարագայում՝ կապված Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հետ: Ըստ նրանց, ԱՄՆ հայկական լոբբին արել է ամեն ինչ, որպեսզի ՌԴ ձեռքում կենտրոնանան «բոլոր խաղաքարտերը»: Ըստ Ադրբեջանի պաշտոնյաների, ՌԴ-ն այդ ամենն օգտագործում է, որպեսզի ստիպի Ադրբեջանին՝ կնքելու գազի արտահանման պայմանագիր, համաձայնելու Գաբալայի ռադիոտեղորոշման կայանի շահագործմանը, ինչպես նաեւ տարածաշրջանում ռուսական խաղաղապահ ուժեր տեղաբաշխելու գաղափարին: Գազի հետ կապված, եթե ՌԴ-ն հասնի իր ուզածին, դա կարող է բերել տարածաշրջանում ԱՄՆ դիրքերի թուլացմանը, ի չիք դարձնել էներգետիկ ռեսուրսների «Հարավային միջանցքը» եւ վնասել Վրաստանի ինքնիշխանությանը: Բացի դրանից, Ադրբեջանի իշխանությունները վախենում են, որ Թուրքիան կբացի ՀՀ-ի հետ սահմանը, որով հնարավորություն կտա ՀՀ-ին կորցնելու հակամարտության լուծման շահագրգռվածությունը[51]:

Ներկայացված նյութերը ցույց են տալիս, որ Ադրբեջանն իր քաղաքականությունը զգալի չափով հիմնում է ԱՄՆ-ՌԴ շահերի «բախման» վրա, փորձում ապահովել ԱՄՆ-ի՝ բացարձակ ադրբեջանամետ դիրքորոշում եւ չի խորշում ակնհայտ շանտաժից:

Ամփոփելով նյութի քննությունը՝ կարող ենք արձանագրել հետեւյալը.

1. Թուրք-ադրբեջանական հարաբերություններում հակասություններն առաջանում են ոչ միայն թուրք-հայկական հարաբերությունների բարելավման հեռանկարի, այլ նաեւ ուրիշ պատճառներով, որոնք կարող են օգտագործվել ՀՀ դիվանագիտության կողմից:
2. ԱՄՆ-ում հասկանում են, որ, չնայած հավաստիացումներին, Ադրբեջանը հավատարիմ դաշնակից չէ այն պարզ պատճառով, որ կարող է արագորեն սերտացնել հարաբերությունները ՌԴ-ի հետ, որից նա կախված է այնտեղ

գտնվող ադրբեջանցի հարյուր հազարավոր միգրանտների, ազդեցիկ մի քանի գործարարների եւ տնտեսական համագործակցության պատճառով:

3. ՌԴ-ի հետ հարաբերություններում Ադրբեջանը չունի հստակ ուղեգիծ, քանի որ դա կախված է ՀՀ-ի հետ ՌԴ-ի ունեցած հարաբերություններից:
4. ՌԴ-ի հետ էներգետիկ համագործակցության «ուրվականը» Ադրբեջանն օգտագործում է «ճնշում գործադրելու» ինչպես Թուրքիայի, այնպես էլ ԱՄՆ-ի վրա:
5. ԱՄՆ-ում հասկանում են, որ Ադրբեջանն իրականում այնքան էլ մտահոգված չէ «ռուսական ազդեցության տարածումից» եւ փորձում է դա շահարկել ԱՄՆ-ից «շահավետ դիրքորոշում» կորզելու համար:
6. Չնայած վերոհիշյալին, ԱՄՆ գործիչներն ադրբեջանական իշխանություններ-ի նկատմամբ դրսեւորում են «համբերատար» վերաբերմունք, նրանց հետ շփումներում օգտագործում «համոզման» տարբեր միջոցներ: Այս իրողությունը պետք է գտնվի ՀՀ դիվանագիտության ուշադրության կենտրոնում:
7. Թուրքիայի հետ ՀՀ-ի հարաբերությունների բարելավումն ԱՄՆ կողմից դիտարկվում է որպես ՀՀ-ն ռուսական ազդեցությունից հեռացնելու կարեւոր միջոց, սակայն Ադրբեջանը հստակորեն ցույց է տալիս, որ իրեն դա չի հետաքրքրում, ավելին՝ հստակորեն դեմ է արտահայտվում դրան:
8. Ադրբեջանը շարունակում է սերտ համագործակցությունն Իսրայելի հետ, չնայած նրա գլխավոր դաշնակից Թուրքիան խզել է հարաբերություններն այդ պետության հետ:
9. Մ.Բրայզան ընդգծված ադրբեջանամետ եւ թուրքամետ գործիչ է, որը մշտապես պետք է գտնվի ՀՀ դիվանագետների ուշադրության ներքո: Նա անում է արտահայտություններ, որոնք հայտնի չէ, թե ինչ չափով են համապատասխանում ԱՄՆ պաշտոնական դիրքորոշմանը:
10. Ադրբեջանում վախենում են ավտորիտար վարչակարգերի տապալման՝ ԱՄՆ-ի ձգտումներից, քանի որ մի օր Ի.Ալիեւի վարչակարգը կարող է հայտնվել «սեւ ցուցակում»:
11. Իրանի հետ Ադրբեջանի հարաբերությունները լարված են, բայց կայուն: Դրանք կարելի է համարել անլուծելի եւ ըստ այդմ՝ օգտագործելի ՀՀ-ի դիվանագիտության կողմից:
12. ԱՄՆ-ում գիտակցում են, որ հակահայկական քարոզչությունն Ադրբեջանում գրեթե անհնար է դարձնում ԼՂ խնդրի խաղաղ կարգավորումը: Բացի դրանից, ադրբեջանական իշխանությունները սեփական բնակչությունից թաքցնում են խնդրի կարգավորման ներկա փուլի սկզբունքները՝ դրանք քողար-

կելով հակահայկական քարոզչությամբ, ուստի ԱՄՆ դիվանագետները փորձում են «ստիպել» նրանց՝ գործընթացին հասու դարձնելու բնակչությանը:

13. Հակահայկական քարոզչությունն Ադրբեջանում եւ ԼՂ խնդրի լուծման վերաբերյալ հոխորտալից հայտարարությունները ԱՄՆ-ում ընկալվում են իբրեւ գլխավորապես ներքին լսարանին ուղղված ազդակներ:
14. Ադրբեջանը դեմ է ԼՂ կարգավիճակի՝ հանրաքվեով լուծմանը, որը կասկածի տակ է դնում խաղաղ կարգավորման գործընթացն ընդհանրապես: Եվ այդ մասին ԱՄՆ-ում գիտեն: Գիտեն նաեւ, որ Ադրբեջանն անընդհատ հրաժարվում է ԼՂ կարգավորման գործընթացում նախկինում ձեռք բերված համաձայնություններից, որը հանգեցնում է այդ գործընթացի ձգձգմանն ու բարդացմանը:
15. Ադրբեջանում բնակչությունը քիչ է հետաքրքրված եւ հավատում ԼՂ խնդրի կարգավորման վերաբերյալ Ի.Ալիեւի հայտարարություններին: Ադրբեջանի որոշ քաղաքական ուժեր օգտագործում են այդ հայտարարությունները՝ նրա լեգիտիմությունը կասկածի տակ դնելու համար:
16. Ադրբեջանը հետեւում է ինքնորոշման իրավունքի իրացման դեպքերին աշխարհում եւ կասկածում, որ դրանք ձեւաչափային կարող են դառնալ ԼՂ պարագայում:
17. ՀՀ դիվանագիտական շրջանակները՝ նկատի ունենալով վերոշարադրյալը, «ստանում» են գործունեության հսկայական դաշտ:

ՀՂՈՒՄՆԵՐ

1 2012թ. սեպտեմբերին “The Sydney Morning Herald” ավստրալական թերթի միջոցով հայտնի դարձավ, որ ԱՄՆ-ը Ջ.Ասանժին ճանաչել է որպես պետության թշնամի, իսկ Wikileaks-ը՝ որպես վտանգ ազգային անվտանգության համար: Փաստորեն, Ասանժը եւ Wikileaks-ը ԱՄՆ-ի տեսանկյունից գտնվում են Ալ-Քայիդա եւ Թալիբան ահաբեկչական կազմակերպությունների հետ միեւնույն հարթության վրա (http://www.smh.com.au/opinion/political-news/us-calls-assange-enemy-of-state-20120927-26m7s.html#ixzz27cjH9qSk): Այդ մասին խոսվում է նաեւ ամերիկյան «Ստրատֆոր» հետախուզական-վերլուծական կենտրոնի գաղտնազերծած նամակներից մեկում (տես նաեւ՝ http://wikileaks.org/Stratfor-Emails-US-Has-Issued.html):

2 http://www.wikileaks.ch/cable/2007/06/07BAKU689.html

3 http://www.wikileaks.ch/cable/2009/04/09BAKU270.html

4 http://www.wikileaks.ch/cable/2009/04/09BAKU270.html

5 http://www.wikileaks.ch/cable/2009/04/09BAKU269.html

6 http://www.wikileaks.ch/cable/2008/07/08BAKU624.html

7 http://www.wikileaks.ch/cable/2009/05/09BAKU392.html

8 http://www.wikileaks.ch/cable/2009/10/09BAKU820.html, http://www.wikileaks.ch/cable/2009/10/09BAKU829.html

9 http://www.wikileaks.ch/cable/2009/10/09BAKU820.html

10 http://www.wikileaks.ch/cable/2009/03/09BAKU201.html

11 http://www.wikileaks.ch/cable/2008/04/08BAKU309.html

12 http://www.wikileaks.ch/cable/2008/07/08BAKU624.html

13 http://www.wikileaks.ch/cable/2008/10/08BAKU945.html

14 http://www.wikileaks.ch/cable/2009/02/09BAKU109.html

15 http://www.wikileaks.ch/cable/2009/01/09BAKU73.html

16 http://www.wikileaks.ch/cable/2008/03/08BAKU185.html

17 http://www.wikileaks.ch/cable/2007/09/07BAKU1099.html

18 Նույն տեղում:

19 http://www.wikileaks.ch/cable/2009/10/09BAKU850.html

20 http://www.wikileaks.ch/cable/2007/11/07BAKU1357.html

21 http://www.wikileaks.ch/cable/2007/11/07BAKU1365.html

22 Քանի որ Մադրիդյան սկզբունքներն ամբողջությամբ բացահայտված չեն, կարող ենք միայն նշել, որ Ադրբեջանի նշած առաջին չորս կետերը, ամենայն հավանականությամբ, ներառում են հայկական ուժերի դուրսբերում ԼՂ շրջակա տարածքներից, ընդ որում՝ 5 շրջաններից անմիջապես եւ 2-ից աստիճանաբար՝ ըստ համաձայնագրով ճշտված ժամանակացույցի, փախստականների վերադարձը եւ խաղաղապահ ուժերի ներկայության ապահովումը:

23 http://www.wikileaks.ch/cable/2009/04/09BAKU270.html

24 http://www.wikileaks.ch/cable/2009/02/09BAKU109.html

25 http://www.wikileaks.ch/cable/2006/10/06BAKU1525.html

26 http://www.wikileaks.ch/cable/2008/09/08BAKU917.html

27 http://www.wikileaks.ch/cable/2006/05/06BAKU758.html

28 http://www.wikileaks.ch/cable/2007/02/07BAKU224.html

29 http://www.wikileaks.ch/cable/2007/06/07BAKU689.html

30 http://www.wikileaks.ch/cable/2006/10/06BAKU1471.html

31 http://www.wikileaks.ch/cable/2007/07/07BAKU917.html

32 http://www.wikileaks.ch/cable/2007/08/07BAKU1074.html

33 http://www.wikileaks.ch/cable/2009/01/09BAKU20.html

34 Տես՝ Ա.Եղիազարյան, Հայ-ադրբեջանական հարաբերությունները, ղարաբաղյան հիմնահարցը եւ պատերազմի հավանականությունը (2006թ. առաջին կիսամյակի կտրվածքով),-“Еркрамас”, газета армян России, 2006, стр. 7.

35 http://www.wikileaks.ch/cable/2006/03/06BAKU342.html

36 http://www.wikileaks.ch/cable/2006/04/06BAKU517.html

37 http://www.wikileaks.ch/cable/2006/04/06BAKU517.html

38 http://www.wikileaks.ch/cable/2006/04/06BAKU631.html

39 http://www.wikileaks.ch/cable/2006/06/06BAKU858.html

40 http://www.wikileaks.ch/cable/2006/03/06BAKU455.html

41 http://www.wikileaks.ch/cable/2006/06/06BAKU858.html

42 http://www.wikileaks.ch/cable/2006/08/06BAKU1279.html

43 http://www.wikileaks.ch/cable/2006/10/06BAKU1525.html

44 http://www.wikileaks.ch/cable/2007/05/07BAKU599.html

45 http://www.wikileaks.ch/cable/2007/06/07BAKU753.html

46 http://www.wikileaks.ch/cable/2008/02/08BAKU150.html

47 http://www.wikileaks.ch/cable/2008/03/08BAKU275.html

48 http://www.wikileaks.ch/cable/2008/03/08BAKU277.html. Հայտնի է, որ 2008թ. մարտի 4-ին տեղի ունեցավ սահմանային միջադեպ ԼՂՀ Մարտակերտի հատվածում, որից հետո Ի.Ալիեւը Մ.Բրայզային ասել է, որ ՀՀ-ում նախագահական ընտրություններից հետո խառնակ իրավիճակ է եւ եթե իրենք նման բան անեին, դա կօգներ հայերին միավորվել եւ չէր օգնի Ադրբեջանին: Դա կազմակերպել են հայերը, իսկ իրենք միայն պատասխանել են, սակայն ինքը հրամայել է դադարեցնել կրակը (http://www.wikileaks.ch/cable/2008/03/08BAKU196.html)

49 http://www.wikileaks.ch/cable/2008/04/08BAKU404.html

50 http://www.wikileaks.ch/cable/2009/04/09BAKU302.html

51 http://www.wikileaks.ch/cable/2009/01/09BAKU22.html

АРМАН ЕГИАЗАРЯН

Некоторые вопросы внешней политики Азербайджана в свете секретных материалов, опубликованных сайтом WikiLeaks

Несколько лет назад социальная сеть WikiLeaks опубликовала секретную корреспонденцию американских дипломатов. Она включала письма, посланные дипломатами США в Азербайджане, которые содержали некоторые важные дискуссии, касающиеся Армении и Азербайджана. Особенно интересным представляется корреспонденция 2006-2010гг., где американские дипломаты обсуждают важные вопросы, относящиеся к приоритетам внешней политики Азербайджана. В статье рассматриваются те письма, которые касаются отношениям Азербайджана с Турцией, США, Россией, Израилем и Ираном, а также имеют отношение к Карабахскому конфликту. Выявлена информация, которая может быть ценной для формирования внешней политики Армении.

ARMAN YEGHIAZARYAN

Some Issues of Azerbaijan's Foreign Policy in Light of the Documents Released by WikiLeaks

A few years ago the international social networking site WikiLeaks published the American diplomats' secret correspondence. It included letters on several important discussions concerning Armenia and Azerbaijan, which were sent by the members of the US diplomatic community in Azerbaijan. Communication records that date back from 2006 to 2010 are of particular interest, with the US diplomats having reflected on important issues of Azerbaijan's foreign policy priorities. The article studies the messages that refer to the relations of Azerbaijan with Turkey, the USA, Russia, Israel and Iran, and those that are related to the Karabagh conflict. The findings of the research may add voice to Armenia's foreign policy formulation.

Արեւմտյան Հայաստան. առասպե՞լ, թե՞ իրականություն

ՍԱՐՈ ՍԱՐՈՅԱՆ

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) փորձագետ: Վերլուծական հրապարակումներով ու հոդվածաշարերով հանդես է գալիս պարբերական մամուլում եւ էլեկտրոնային լրատվամիջոցներում:

Արդեն մեկ հարյուրամյակ հայ քաղաքական միտքը ծանրացած է ազգային խնդիրների լուծման մի բանաձեւի շուրջ, որը կոչվում է «Արեւմտյան Հայաստան»: Այս եզրույթը լսելիս հայերի մեջ չի առաջանում որեւէ անորոշություն, թվում է՝ ամեն ինչ պարզ է ու ընկալելի: Սակայն արդյո՞ք ամեն ինչ այդքան հստակ է, որքան մեզ թույլ է տալիս ենթադրել քաղաքական այս պարադիգման: Ի՞նչ է այն՝ աշխարհագրական տարածք, վարչատարածքային միավո՞ր, պետական կազմավորո՞ւմ, ազգային ու պետական խնդիրների լուծման քաղաքական գլխավոր նպատակակե՞տ, թե՞ երազանք, որը համախմբում է հայերին վիրտուալ կամ իրական հակառակորդի դեմ պայքարում: Տողերիս հեղինակի համար նշված հարցադրումներն առավել արժեւորվեցին հատկապես այն ժամանակ, երբ «Արեւմտյան Հայաստանի» փաստական իրավիճակի հետ առիթ ստեղծվեց առերեսվել 2012թ. սեպտեմբերի 4-ից մինչեւ 10-ը դեպի Թուրքիայի արեւելյան շրջաններ ուղեւորության ընթացքում: Այդ ժամանակ կատարված գործնական եզրահանգումներն էլ կազմում են սույն հոդվածի առանցքը:

Հայկական Սովետական Հանրագիտարանը «Արեւմտյան Հայաստան» եզրույթը մեկնաբանում է պարզագույն ձեւով՝ «Հայաստանի արեւմտյան հատվածը»[1]: Անշուշտ, այդ հասկացության նման մեկնաբանությունը չի արտահայտում վերջին հարյուրամյակում հայության շրջանում «Արեւմտյան Հայաստան» բառակապակցության ձեռք բերած քաղաքագիտական կարեւորությունը: Հետաքրքիր է, որ այս եզրույթի շուրջ առաջին լուրջ բանավեճը եղավ միայն վերջերս, երբ առաջ քաշվեց իրար հակադիր երկու հարցադրում՝ «Արեւմտյան Հայաստանը» աշխարհագրական հասկացությո՞ւն է, թե՞ վարչատարածքային միավոր[2]: Բանավեճի առարկայի շուրջ խորքային մեկնաբանությունները, ինչպես եւ կարելի էր ենթադրել, խնդիրը բերեցին միջազգային հարաբերությունների եւ իրավունքի ոլորտ: Հիմնվելով այդ եւ մասնագիտական մյուս մեկնությունների վրա, այստեղ կարելի է փաստել հետեւյալ եզրահանգումը: Բոլորի կողմից անառարկելիորեն ընդունվում է, որ

առաջին անգամ XIXդ. 70-ական թթ. դիվանագիտական պրակտիկայում է ի հայտ եկել «Հայկական հարցը»՝ որպես «Արեւելյան հարցի» բաղկացուցիչ: Միջազգային հարաբերություններում հենց «Հայկական հարցի» գործածումն է պատճառ հանդիսացել, որ նախնական «Թուրքահայաստան» կամ «Տաճկահայաստան» եզրույթը՝ իբրեւ այդ հարցի տարածական մարմնացում, հայության շրջանում հետագայում վերափոխվի «Արեւմտյան Հայաստան» եզրույթի:

Այստեղ հարկ ենք համարում համառոտ ներկայացնել միջազգային իրավական ակտերի այն հատվածները, որոնք, մասնավորապես, վերաբերում են «Հայկական հարցի» մարմնացում տարածական միջավայրին:

- 1878թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների միջեւ ստորագրված Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածում նշված է. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված **Հայաստանի**՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների եւ բարդությունների, որոնք երկու պետությունների լավ հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել **հայաբնակ մարզերի** տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ ու բարենորոգություններ եւ զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»[3]:

- 1878թ. մայիսի 18-ին (մայիսի 30-ին) Ռուսաստանի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ Սան Ստեֆանոյի պայմանագիրը փոփոխելու մասին համաձայնագրի 7-րդ հոդվածում նշված է. «Սան Ստեֆանոյի նախնական պայմանագրի մեջ **Հայաստանի** վերաբերյալ պարունակվող խոստումները պետք է տրվեն ոչ թե բացառապես Ռուսաստանի, այլ նաեւ Անգլիայի անունից»: Իսկ 10-րդ հոդվածում նաեւ ասված է. «Համաձայնելով չառարկել Ռուսական կայսրի՝ Բաթում նավահանգիստը ձեռք բերելու եւ իր նվաճումները **Հայաստանում** պահպանելու ցանկությանը...»[4]:

- 1878թ. հուլիսի 1-ին (հուլիսի 13-ին) ստորագրված Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածում նշված է. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել **հայաբնակ մարզերում** տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները եւ ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից»[5]:

- 1918թ. հոկտեմբերի 30-ին Դաշնակիցների եւ Թուրքիայի միջեւ կնքված Մուդրոսի զինադադարի փաստաթղթի 24-րդ հոդվածում նշված է. «**Հայկական վիլայեթներից** (որեւէ) մեկում անկարգություններ ծագելու դեպքում դաշնակիցներն իրենց վերապահում են նրա մի մասը գրավելու իրավունքը»[6]:

- 1920թ. օգոստոսի 10-ին կնքված Սեւրի դաշնագրի 89-րդ հոդվածում ասված է. «Թուրքիան եւ **Հայաստանը**, ինչպես նաեւ Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի եւ **Հայաստանի** միջեւ սահմանազատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը եւ ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես եւ այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել **Հայաստանին** դեպի ծով ելք տալու եւ հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ»: Իսկ 90-րդ հոդվածում նաեւ ասված էր. «Այն դեպքում, եթե 89-րդ հոդվածի համաձայն սահմանագիծը որոշելիս հիշյալ վիլայեթների ամբողջ տարածքը կամ նրա մի մասը հանձնվի **Հայաստանին**, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում է հանձնված տարածքի նկատմամբ բոլոր իրավունքներից եւ իրավահիմունքներից»[7]:

- 1920թ. նոյեմբերի 22-ին ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի կայացրած իրավարար վճռի ամբողջական անվանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի եւ **Հայաստանի** միջեւ սահմանի, **Հայաստանի՝** դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերեալ»[8]:

1877-1878թթ. եւ 1914-1921թթ. ռազմաքաղաքական գործընթացների արդյունքում ծնված եւ վերեւում վկայակոչված միջազգային իրավական ակտերից բացի՝ բազում են նաեւ այլ ժամանակահատվածների տարաբնույթ քաղաքական հայտարարությունները, դիվանագիտական գրագրությունները, նոտաները, արձանագրությունները, քննարկումները, որտեղ նմանապես արծարծվում են Թուրքահայաստանի, Թուրքիայի հայաբնակ մարզերի կամ վիլայեթների, Թուրքիայում «Հայկական օջախի» ստեղծման վերաբերյալ խնդիրները: Միջազգային հարաբերությունների տեսանկյունից հատկապես երկու պատմական նման ժամանակահատվածներ լեցուն են «Հայկական հարցի» շուրջ ծավալված քաղաքական գործընթացներով: Նախ՝ դա վերաբերում է 1895-1896թթ. Թուրքիայում հայոց քաղաքական շրջանակների հեղափոխական (ազատագրական, ապստամբական) գործունեության եւ օսմանյան վարչակարգի վայրագ արձագանքի կապակցությամբ միջազգային հարաբերություններում բարձրացված «Հայկական մարզերում» բարենորոգումների խնդրին[9]: Իսկ մյուսը՝ 1922-1923թթ. Լոզանի կոնֆերանսում ու դրա շուրջ ծավալվող դիվանագիտական փոխհարաբերություններում «Հայկական օջախի» ստեղծման հետ կապված հարցի արծարծմանը[10]:

Ներկայացված պատկերը երկու հարցադրում է առաջ բերում՝ ինչ է իրենից ներկայացնում «Հայկական հարցը» քաղաքագիտության տեսանկյունից եւ ինչ տեղ ունի Արեւմտյան Հայաստանն այդ հարցի շրջանակում:

«Հայկական հարցի» բանաձեւված բացատրությունը տալիս է Հայկական Սովետական Հանրագիտարանը՝ «թուրքական լծից արեւմտահայության ազատագրման, հայ ժողովրդի ինքնորոշման ու սեփական պետականություն ստեղծելու համար մղված պայքարի անվանումը դիվանագիտության պատմության մեջ»[11]: Սակայն կարեւոր է անդրադառնալ նաեւ գիտական ավելի լայն ձեւակերպումների հարցին, ինչպիսին է օրինակ՝ Ա.Կիրակոսյանի գիտական մեկնաբանությունը: Ըստ նրա, «Հայկական հարց» հասկացությունը «ժամանակակից քաղաքական հայագիտությունն օգտագործում է որպես Արեւմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործման, ինքնավարության ստեղծման, օտարերկրյա տիրապետությունից Հայաստանի ազատագրման, նրա երկու հատվածների միավորման, Հայկական լեռնաշխարհում ինքնուրույն հայկական պետականության վերականգնման, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի եւ համախմբման, ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման հիմնահարցերի ամբողջություն»[12]:

Ինչպես տեսնում ենք, «Հայկական հարցն» առաջին հերթին դիտարկվում է «Հայաստանի արեւմտյան հատվածում» բնակված հայերի ազատագրման տեսանկյունից: Ըստ էության, դրանից ածանցյալ է համարված հայ ժողովրդի ինքնորոշման եւ սեփական պետականություն հիմնելու հարցը: Այստեղից էլ գալիս է այն տրամաբանությունը, որ նախկինում թրքահայության շուրջ ընթացած միջազգային քաղաքական տեղաշարժերը պետք է մեկնաբանվեն առավելաբար որպես հայության ընդհանրական ազատագրության համար տեղ գտած իրադարձություններ: Այն դեպքում, որ միջազգային քաղաքական գործընթացներում՝ Օսմանյան կայսրության մասնատման եւ նրա կտորներին տիրանալու համար մեծ տերությունների մղած պայքարում, որտեղ հայությունը բոլորովին էլ սուբյեկտի կարգավիճակ չուներ, ինչպես նաեւ չուներ հավաքական կամք՝ ձեռք բերելու նման կարգավիճակ, «Հայկական հարցը» ծառայեցվում էր այդ տերությունների աշխարհաքաղաքական շահերին: Այդ գործում թրքահայությունը, որքան էլ որ գնահատելի լինի սուբյեկտ դառնալու նրա հնարավորությունը, օբյեկտ էր վարվող քաղաքականության համար, ինչն էլ, ի վերջո, սրանից մեկ դար առաջ ավարտվեց Հայոց ցեղասպանությամբ:

Կարելի է նշել, որ մեր ուսումնասիրության առարկան մինչեւ Առաջին աշխարհամարտը, քաղաքական նպատակներին ծառայեցված պատմաաշխարհագրա-

կան հասկացություն է եղել՝ զուրկ պետական-քաղաքական սուբյեկտայնությունից: Այստեղից էլ կարելի է բխեցնել «Հայկական հարցի» էության՝ մինչեւ Հայոց ցեղասպանությունն ընկած ժամանակաշրջանի մեկնաբանությունը: Եթե զուտ գիտական բացատրություն փորձենք տալ, ապա «Հայկական հարցը» պետք է մեկնաբանենք որպես հոգեվարքի մեջ եւ մասնատման գործընթացում գտնվող Օսմանյան կայսրության նկատմամբ մեծ տերությունների ռազմաքաղաքական այն ծրագրերի եւ հիմնահարցերի ամբողջությունը, որոնք ուղղված էին առավելապես հոծ բնակվող թրքահայության վիճակի բարելավմանը, ազատագրմանը կամ ինքնորոշմանը:

«Հայկական հարցի» նման մեկնաբանությունը թույլ է տալիս պնդել նաեւ, որ «Արեւմտյան Հայաստան» եզրը միջազգայնորեն ճանաչված պետական-քաղաքական սուբյեկտայնություն ձեռք է բերել միայն Սեւրի պայմանագրով եւ Վիլսոնի իրավարար վճռով Հայաստանի արեւմտյան սահմանների հստակեցումից ու Թուրքահայաստանի եւ Ռուսահայաստանի (Կարսի մարզ, Սուրմալուի գավառ) որոշակի վիլայեթների ու շրջանների՝ Հայաստանի Հանրապետությանը (ՀԽՍՀ-ին) չմիավորվելուց հետո միայն, դառնալով միջազգայնորեն երաշխավորված հայոց պահանջատիրական իրավունքի անբաժան մասը: Սակայն, այնուամենայնիվ, պետք է նշել նաեւ, որ 20-րդ դարում առավելապես հայկական քաղաքական մտքի սպառմանը ծառայեցված հասկացություն է եղել նաեւ իրավաքաղաքական կոնկրետությունից զուրկ եւ պատմաաշխարհագրական փաստարկման հիմքի վրա խարսխված ավելի լայն «Արեւմտյան Հայաստանի» տարածքների վկայակոչումը:

Քանի որ վերեւում կատարված քննությունը վերաբերում էր հարցի տեսական մասին, ստորեւ հարկ ենք համարում անդրադառնալ նաեւ այսօր Արեւմտյան Հայաստանում փաստացի ստեղծված իրավիճակի եւ այդ տարածքների նկատմամբ հայության ունեցած հետաքրքրությունների խնդիրներին:

Արեւմտյան Հայաստան. Հյուսիսի եւ հարավի իրականությունը

Արդեն երկուսուկես հազարամյակ Հայկական լեռնաշխարհի տարածքում տեղ գտած միջազգային քաղաքական գործընթացների ողջ ծավալը պտտվել է քաղաքակրթական երկու հակադիր հարթությունների հակադրությունների կամ երկխոսության շրջանակում: Խոսքը գիտական գրականության մեջ բավական ուսումնասիրված «Արեւելքի» եւ «Արեւմուտքի» քաղաքակրթությունների մասին է: Նման տարաբաժանումն իր հերթին պարտադրել է, որ Մերձավոր Արեւելքում,

այդ թվում՝ Հայկական լեռնաշխարհում ռազմաքաղաքական տեղաշարժերն աշխարհագրորեն կատարվեն մեծամասամբ նույնանուն ուղղություններով՝ դեպի «արեւելք» եւ «արեւմուտք» ծավալվելու միջոցով: Սա էլ իր հերթին հանգեցրել է նրան, որ Հայկական լեռնաշխարհում երբեւէ գործունեություն ծավալած կայսրությունների ու նրանցից կախում ունեցած պետական կազմավորումների միջեւ եղած քաղաքական, տնտեսական, մշակութային սահմանազատումները կատարվեն գլխավորապես հենց այդ ուղղություններով: Այդ են վկայում, մասնավորապես, մի կողմից մարապարսկական կայսրության, մյուս կողմից՝ լիդիական պետության, իսկ ապա նաեւ՝ հունամակեդոնական աշխարհի, Հռոմի եւ Իրանի, Բյուզանդիայի եւ Արաբական խալիֆայության, Բյուզանդիայի եւ սելջուկյան տարբեր ամիրայությունների, «խաչակիրների» եւ մահմեդական տարբեր ամիրայությունների ու սուլթանությունների, Թուրքիայի եւ Իրանի, Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ եղած տարածական քաղաքական փոխհարաբերություններն ու ձեւավորված սահմանագծերը[13]:

Սակայն քսաներորդ դարում Մերձավոր Արեւելքում աշխարհաքաղաքական մեծ տեղաշարժերի բերած ժողովրդագրական պատկերի փոփոխության արդյունքում այժմ արդեն Հայկական լեռնաշխարհում ճամբարաբաժանումներ են ընդգծվում ոչ թե «արեւմուտքի» եւ «արեւելքի», այլ՝ «հյուսիսի» եւ «հարավի» միջեւ: Ներկայում պատմական Արեւմտյան Հայաստանը, հիմքում ունենալով մեծամասամբ ժողովրդագրական առկա վիճակը, բաժանված է երկու մասի՝ թուրքական եւ քրդական հատվածների: Մեծ է հավանականությունը, որ երբեւէ նման իրավիճակը կարող է հանգեցնել նաեւ քաղաքական բաժանման, քանի որ հիմնվելով էթնիկ խնդիրների առաջացրած սոցիալ-հոգեբանական տարբերությունների վրա՝ Արեւմտյան Հայաստանի «Հյուսիսում» ու «Հարավում» զգալ են տալիս նաեւ գյուղատնտեսության եւ այլ ոլորտներում եղած տարբերությունները, ինչը ընդհանուր առմամբ բերում է մշակութային արդեն նշմարելի տարաբաժանման:

Ընդհանուր առմամբ, ողջ Արեւմտյան Հայաստանում կապիտալ շինարարության մեջ պետության ներգրավվածությունն ակնառու է ամեն քայլափոխի: Այստեղ բոլոր պետական նշանակության ճանապարհները գտնվում են բարվոք վիճակում եւ պարբերաբար հիմանորոգվում են: Քաղաքներում իրականացվում են հսկայական բնակարանաշինական ծրագրեր: Տարեցտարի ավելանում են քաղաքաշինական հստակ ծրագրավորմամբ թաղամասերը՝ ներկայացված տիպային նախագծերով կառուցված շենքերով: Նման շինարարական տեմպերի ապահովման համար տեղում աշխատում է շինարարական ենթակառուցվածք-

ների գրեթե ողջ համալիրը: Այն Թուրքիայի արեւելյան շրջաններում սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման կարեւոր պայման է դարձել: Բոլոր մեծ քաղաքներում (Էրզրում, Բիթլիս, Կարս եւ այլն) համալսարաններ հիմնելու ճանապարհով զարկ է տրված բարձրագույն բազմապրոֆիլ կրթության ապահովմանը: Այդ քաղաքները, միաժամանակ, տրանսպորտային կարեւոր հանգույցներ են դարձել: Էրզրումում, Կարսում, Մուշում, Աղրիում եւ Վանում գործում են նաեւ քաղաքացիական օդանավակայաններ:

Պատմական Արեւմտյան Հայաստանի հյուսիսում, մասնավորապես Կարսում, Էրզրումում, շատ ուժեղ է թուրքական իշխանությունների ազդեցությունը: Պետական քաղաքականությունն ուղղված է նրան, որպեսզի խթանվի Իգդիրի բնակեցումը ադրբեջանցիներով: Ի հակակշիռ քրդերի, որպես աջակցություն թուրքական տարրին՝ չնայած ավելի փոքր ծավալի, ադրբեջանցիներով է բնակեցվում նաեւ Կարսի շրջանը: «Հյուսիսում» շատ նոսր է տարածության մեջ գյուղերի խտությունը, ինչպես նաեւ գյուղական բնակչությունը: Այստեղ գյուղերը գյուղակներ են հիշեցնում: Սակայն յուրաքանչյուր գյուղակում աչքի է զարնում մինարեների եւ մզկիթների առկայությունը, որը պետական հոգածության ցուցադրությունն է: Գյուղական տների մեծամասնությունը շատ քիչ առաջընթաց է ապրել եւ հյուղակների են նման: «Հյուսիսում» գյուղատնտեսությունը հիմնված է անասնապահության եւ հացահատիկային մշակաբույսերի մշակման վրա, սակայն անհատ տնտեսություններում իսպառ բացակայում է հողագործությունը:

«Հարավում»՝ Վանի, Մուշի, Բիթլիսի եւ մյուս իլերում փաստացի քրդական իշխանություն է: Այստեղ ոչ բոլոր գյուղերում կան մինարեներ ու մզկիթներ: Մշո դաշտում, Վանի ավազանում գյուղերի խտությունը շատ մեծ է, իսկ տներն աչքի են ընկնում խոշորությամբ եւ իրենց կառուցապատմամբ տարբերվում են «Հյուսիսի» տներից: «Հարավում» շատ են քրդական բնակավայրերը, իսկ խառը բնակչությամբ բնակավայրերում քրդական տարրը էապես գերակշռում է: Անասնապահությունից բացի, բնակչությունը զբաղվում է նաեւ այգեգործությամբ, քանի որ բավական զարգացած է հողագործությունը:

Թուրք-քրդական հակամարտություն

Ժամանակակից Թուրքիայի առաջընթացի եւ արտաքին քաղաքական նորանոր դիրքերի նվաճմանն ուղղված քաղաքականության խորապատկերին պաշտոնական Անկարայի ամենաարդիական հարցերից մեկը շարունակում է մնալ քրդականը: Այն, ինչպես ցանկացած ազգային հարց, իրենից ներկայացնում է

խնդիրների մի տարրապատկեր: Սակայն տիտղոսային ազգի լեզվական, մշակութային, տնտեսական խտրական քաղաքականությանը վերջ դնելուց զատ՝ քրդերի պայքարի հիմքում վաղուց արդեն ընկած են քաղաքական արմատական պահանջներ: Քրդերի շրջանում առաջնային են սեփական պետության կամ ինքնավարության գաղափարները, որոնք հանգեցրել են պարտիզանական պայքարի ծավալմանը Թուրքիայի հարավ-արեւելյան քրդաբնակ շրջաններում: Արդեն գրեթե 30 տարի Քրդստանի աշխատավորական կուսակցությունը (PKK) քաղաքական պահանջների իրագործման համար լեռներում զենքը ձեռքին պայքար է մղում թուրքական կանոնավոր բանակի եւ ոստիկանական ուժերի դեմ: Լեռներից դեպի քաղաքներ ուղղընթացով շարժվելիս փոխվում են պայքարի ձեւերը, բայց ոչ՝ բովանդակությունը:

Արեւմտյան Հայաստանի «Հարավում», որտեղ քրդական տարրը ներկայում անհամեմատ մեծ կշիռ ունի եւ կենսագործունեության տարաբնույթ հնարավորություններ, բնակչության շրջանում շարունակում են մեծ ծավալներով բազմացվել ազգայնական հայացքները: Այստեղ թուրքական իշխանությունները՝ խոչընդոտելու համար ազգայնականության ծավալումը, փորձում են զսպաշապիկ հագցնել քրդերին՝ քաղաքներում հատուկ այդ նպատակով բլոկպոստեր ստեղծելով: Հոծ բնակչությամբ քրդական մեծ քաղաքներն, այդպիսով, ռազմականացված միջավայրեր են դարձել, քանզի մեծ է վախը, որ քրդական քաղաքային դասը կարող է ոտքի կանգնել եւ հրապարակային քաղաքական խնդիրներ առաջ քաշելով, համընդհանուր ապստամբության գնալ: Այդ իսկ պատճառով քաղաքներում նկատելի է թուրքական ավտոմատավոր ժանդարմերիայի ներկայությունը: Քրդական հասարակությանը բռի մեջ պահելու՝ պաշտոնական Անկարայի քաղաքականությունը երբեմն ցույց է տալիս նաեւ իր անարդյունավետությունը: Մեծամասամբ քրդերը կարողանում են հարավում դիմագրավել իշխանություններին: Նրանց չեն վախեցնում այնպիսի գործողությունները, ինչպիսին էր, օրինակ, Վանի ազգությամբ քուրդ քաղաքապետի ձերբակալությունը:

Հայերի դերի ու տեղի մասին

Առհասարակ քաղաքականացված քրդերի մեծամասնությունը հայերի մեջ տեսնում է դաշնակիցների: Եվ դրա հիմքում ընկած են մի քանի պատճառներ:

Զինված պայքարի կողմնակից քրդերի շրջանում բավական տարածված է այն կարծիքը, որ իրենց կենդանի լեգենդ Օջալանի սերնդաբանության մի ճյուղը հայկական ծագում ունի: Դրա հետ մեկտեղ թուրքական պաշտոնական քա-

ոոզչությունը քրդական անկախական շարժումը վիժեցնելու եւ քրդերի շրջանում երկպառակություններ սերմանելու համար երբեւէ տարածել է նաեւ այն թեզը, որ Քրդական աշխատավորական կուսակցության մարտիկների մեջ գերակշռում են ազգությամբ հայերը եւ որ Օջալանի հիմնած քրդական պայքարը իրականում ծառայում է հայերին եւ նպատակ ունի հայերի վրեժը լուծել թուրքերից եւ որ այդ պայքարում քրդերը գործիք են: Հետաքրքիր է, որ այս թեզը քրդերի շրջանում որոշակի մի փուլում առավել համակրանք է առաջացրել հայերի նկատմամբ:

Բացի վերոհիշյալ հանգամանքից, Մուշում, Արճեշում, Վանում քրդերի հետ տողերիս հեղինակի անձնական շփումները բերեցին այն համոզման, որ տեղի քրդերի շրջանում որեւէ կասկած չկա այդ տարածքների պատկանելիության հարցում: Անգամ թեթեւակի ներկայանալը որպես հայ՝ քրդերին հիմք էր տալիս տեղի հայկական քիլիսեները, գյուղատեղիները, հնավայրերը վկայակոչելու կամ ներկայացնելու ցանկություն ցուցաբերել: Սերնդեսերունդ այդ վայրերի հետ ժողովրդի առերեսումը, տեղային պատմությունները՝ հիմնված ավագների հիշողությունների վրա, եւ Հայոց ցեղասպանության վերաբերյալ լրահոսում վերջին տարիներին քննարկումների մեծ թափը ներկա բնակչության շրջանում պատրանքներ չեն թողել այն հարցում, որ Թուրքիայի արեւելյան շրջանները պատկանում են հենց հայերին: Քրդերի՝ առանց կաշկանդվելու «սա ձեր հողերն են» արտահայտությունը թույլ էր տալիս մտածել, որ նրանց շրջանում չկա վախ այդ տարածքները կորցնելու հարցում:

Ըստ էության, քրդական քաղաքական շրջանակների կողմից ժողովրդի մեջ հիմնականում չի սերմանվել այդ տարածքները կորցնելու վախ: Նման քաղաքական գիծը կարող է բացատրվել այն հանգամանքով, որ քրդերը, ընդհանուր առմամբ, հայերին չեն տեսնում ուղղակի սպառնալիք իրենց ազգային-ազատագրական պայքարում՝ այդ թվում այն տարածքների նկատմամբ հավակնություններում, որոնք երբեւէ եղել են առավելապես հայերով բնակեցված ու իրենց կողմից ներկայում էլ ընդունվում են որպես պատմական Հայաստան: Նման դիրքորոշման հիմքում, ըստ էության, հաշվի են առնված տարածաշրջանում հայերի ունեցած ժողովրդագրական, ռազմաքաղաքական, տնտեսական հաշվեկշռի առկա իրողությունները:

Որոշ բնակավայրերում քրդերն ու թուրքերը գիտեն իրենց շրջապատում առանձին ընտանիքների ու գերդաստանների հայկական պատկանելության մասին, սակայն չեն բարձրաձայնում, քանի որ այդ մարդկանց վիրավորում է իրենց հայ լինելու հանգամանքի մատնանշումը: Նման երեւույթը հայկական արմատներ ունեցող թուրքերի ու քրդերի, ինչպես նաեւ ծպտյալ հայերի համար ինքնապաշտ-

պանական մեխանիզմ է պարունակում եւ կապված է տասնամյակներ շարունակ պաշտոնական Անկարայի կողմից խրախուսված եւ Թուրքիայի հասարակական շրջանակներում հայերի հանդեպ բացասական կերպարի արմատացման հետ: Ըստ այդ կերպարի՝ հայերը սոցիալական աստիճանակարգությունում երկրորդական դերակատարություն ունեցող ազգություն են: Հայերի բացասական կերպարը երբեմն նաեւ պայմանավորված է որպես թշնամի տեսնելու հանգամանքի հետ եւ ունի զուտ քաղաքական նախատրամադրվածություն:

Հայկական համայնք, այսինքն՝ որպես նախապես մշակված ծրագրերով ու գործառույթներով առաջնորդվող կառույց, Արեւմտյան Հայաստանում չի գործում, սակայն հայերի մի մասը՝ հատկապես Մուշում եւ Սասունում, զարթոնք է ապրում եւ համախմբվելու միտում ունի: Միաժամանակ Մուշի եւ Սասունի հայության շրջանում մեծ վակուում գոյություն ունի ինքնությունը վերագտնելու նրանց մղումները բավարարելու հարցում: Մեծ աշխատանքի կարիք կա, որպեսզի կապ հաստատվի նրանց եւ հայրենիքի ու հայության տարբեր շերտերի միջեւ: Շատ ծպտյալ հայեր բացահայտել ու շարունակում են բացահայտել իրենց ազգային ինքնությունը, չնայած որ իսլամադավան են, հայերեն չգիտեն ու խոսում են քրդերեն եւ թուրքերեն[14]: Որոշ հայաստանյան կազմակերպություններ փորձում են աջակցություն ցուցաբերել արեւմտահայերին՝ ինքնակազմակերպման, ազգային եւ մշակութային ինքնության պահպանման գործում: Բայցեւայնպես, այդ ուղղությամբ աշխատանքները մեծ ջանքեր ու միջոցներ են պահանջում:

Հետաքրքիր է կանգ առնել նաեւ թուրքական իշխանությունների կողմից հայկական եկեղեցիները վերականգնելու դեպքերի վրա: Կարծես թե գործ ունենք թուրքական քաղաքական նկատառումների հետ, քանզի մի կողմից իրար մեջ խնդիրներ ունեցող երկրների ու ժողովուրդների շրջանում թշնամանքն անհաղթահարելի է թվում, բայց մյուս կողմից Թուրքիայի պետական շահը բոլորովին այլ ուղղությամբ է տանում հայկական ժառանգության պահպանման խնդիրը: Այսօր թուրքական իշխանությունների համար շատ ավելի հրատապ են քրդական խնդիրը, ապագա Մեծ Քրդստանի տեսլականը եւ դրա դեմ պայքարելու մեխանիզմները: Փաստացի, հայկական տարրի եւ նրա նյութական ժառանգության նկատմամբ նման նոր մոտեցումը հենց այդ մեխանիզմի գործադրումներից մեկն է դարձել: Մի կողմից թուրքական իշխանությունների դեպքում գործ ունենք սիրաշահելու քաղաքականության հետ, մանավանդ որ, քրդերը եւս փորձում են նման մոտեցումներ դրսեւորել: Մյուս կողմից չպետք է անտեսել, որ նման քաղաքականության համատեքստում ընկած է նաեւ «հին ու նոր Թուրքիաների» հակադրություն ստեղծելու միջոցով հայկական քաղաքական համախմբվածությու-

նը երկփեղկելու՝ պաշտոնական Անկարայի մտադրությունը: Հատկապես՝ երբ հաշվի ենք առնում, որ Թուրքիայի ԱԳ նախարար Դավութօղլուի՝ Հայաստանի ու հայության նկատմամբ քաղաքական մշակումներն իրենց մեջ ներառում են Հայաստանը Սփյուռքից տարանջատելու եւ ազգային խնդիրներում միմյանց միջեւ սեպ խրելու ռազմավարություն:

Արեւմտյան Հայաստան. առասպել

Վերը համառոտ ներկայացված իրավիճակը մեզ հուշում է մի քանի հարցադրումներ: Այն է՝ որո՞նք են հայության տարբեր շերտերի իրատեսական նպատակները հայ ժողովրդի պատմական ժառանգությունը վերագտնելու գործում եւ դրանից ելնելով արդյո՞ք կարող է լինել այդ խնդրում Հայաստանի Հանրապետության կողմից մշակված ռազմավարություն: Այս հարցադրումներն արդիական են, քանզի ոչ վաղ անցյալում՝ 2008-2009թթ. ՀՀ պետական մեքենայի կողմից գործարկված «ֆուտբոլային դիվանագիտության» եւ «Ցյուրիխյան» արձանագրությունների ստորագրման արդյունքում հայությունը բաժանվել էր երկու տարբեր ճամբարների: Հատկապես հիշատակելի են մի կողմից իշխող վարչախմբի պարտադրանքով տարբեր կոլեկտիվների քննարկումներն ու դրանց արդյունքում կայացված ի պաշտպանություն «Ցյուրիխյան» արձանագրությունների ներկայացումները Հայաստանի Հանրապետությունում, եւ մյուս կողմից՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հայահոծ երկրներ շրջագայությունների ժամանակ հրապարակային կազմակերպված դժգոհությունները սփյուռքահայ կազմակերպությունների կողմից:

Փորձենք համադրել հետեւյալ ակնհայտ չափումները: Հայերի թվաքանակն աշխարհում մոտ երեք անգամ զիջում է քրդերին եւ մոտ վեց անգամ թուրքերին: Հայերի բնական աճը նույնպես մի քանի անգամ զիջում է թուրքերի եւ քրդերի բնական աճին: ՀՀ բնակչությունը միայն 2012թ. դրությամբ պակասել է ավելի քան 100 հազարով, այն դեպքում, որ Թուրքիայի բնակչությունն ամեն տարի ավելանում է 100 հազարներով: Արեւմտյան Հայաստանի «Հյուսիսում»՝ Հայաստանի Հանրապետությանը սահմանամերձ շրջաններում, ի հակակշիռ քրդական տարրի, Թուրքիան վարում է թյուրքալեզու բնակչությամբ բնակեցնելու պետական քաղաքականություն, իսկ «Հարավում» քրդերը յուրացնում են նորանոր տարածքներ ու իրավունքներ, այն դեպքում, որ ղարաբաղյան պատերազմում ազատագրված եւ հայության կենսագործունեության համար անհրաժեշտ տարածքների բնակեցման գործը մնում է մի քանի անհատների ու խմբերի գործը:

Վերը նշված հարցադրումներին ի պատասխան ներկայացված փաստերը «Արեւմտյան Հայաստանի» խնդիրը բերում են փիլիսոփայական հարթություն: Կարելի է հիմնավոր կասկած հայտնել առ այն, որ Արեւմտյան Հայաստանն իսկապես հայության ռացիոնալ քաղաքական գերնպատակն է երբեւէ Միացյալ Հայաստան կերտելու գործում, առավելեւս, որ բուն Արեւմտյան Հայաստանում հայությունը գրեթե ներկայացված չէ, իսկ քաղաքական գործընթացներն ընթանում են թուրք-քրդական հակամարտության համատեքստում: Միաժամանակ պետք է նորանոր հարցադրումներ առաջ քաշվեն՝ իսկ արդյո՞ք Արեւմտյան Հայաստանը չի վերածվել «Կորուսյալ երկրի» մասին մի առասպելի, որի շուրջ համախմբվում է հայությունը՝ չկորցնելու համար իր նույնականացումը: Ի՞նչ է այն գաղթականի ժառանգ սփյուռքահայի համար. աշխարհում ցեղասպանության խնդիրը հրատապ պահելուն միտված տարածքային պահանջատիրություն, թե՞ հակառակը՝ պատմական տարածքների վերանվաճմանը ծառայեցվող հասկացություն, որի ուղին նախանշված է Հայոց ցեղասպանությունը պետությունների կողմից ճանաչելու միջոցով: Ի՞նչ է այն ՀՀ բնակչության համար՝ ինդուստրիալ նպատակներով հաջող ընտրված բրե՞նդ, առօրյա խնդիրներից ձերբազատվելու համար անցյալով ապրելու մոլո՞ւցք, արտաքին աշխարհի հետ հարաբերվելու քաղաքական գործի՞ք, սեփական «մենքի» վեհացմանը ծառայեցվող անհաջող ընտրված վիրտուալ գաղափա՞ր, երբեւէ հայի անզորությունը հիմնավորելու համար շատ արդյունավետ գործող մտածողությո՞ւն, թե՞ գործելու հնարավորություններ ստեղծող հզոր մոտիվացիա:

Եվ վերջապես, ի՞նչ է այն ՀՀ պետական իշխանության համար. արտաքին աշխարհի հետ հարաբերվելիս առեւտրի առարկա՞, Թուրքիային ճնշելու միջո՞ց, Արեւմուտքից ֆինանսներ խնդրելու (մուրալու) համար զոհի կերպա՞ր, հանրությանը մոլորեցնելու համար իշխանության ղեկին գտնվողների համար աթոռը պահելուն ծառայող արտաքին դեկորացիայի բաղկացուցի՞չ, թե՞ տարածաշրջանում սեփական քաղաքական կշիռը պահպանելուն միտված պետական քաղաքականության հանգուցակետ:

Այս բոլոր հարցադրումներն առայժմ միայն խորհելու տեղիք են տալիս, քանզի չունեն միանշանակ պատասխաններ: Այնուամենայնիվ, ակնհայտ է մի բան, որ թուրքական պետական քաղաքականությունն ուղղված է նրան, որ Հայաստանի Հանրապետության հետ կնքի հայկական կողմին պարտավորեցնող մի փաստաթուղթ որով կչեզոքացվեն անցյալի ազդեցությունները, այդ թվում նաեւ՝ հայության ազգային խնդիրների լուծմանը ծառայեցվող «Արեւմտյան Հայաստան» քաղաքական բանաձեւը: Դա հստակ ի հայտ եկավ հատկապես «Ցյուրիխյան»

արձանագրությունների շուրջ ծավալվող թուրքական դիվանագիտական ու քաղաքական գործողություններում: Այստեղ հարկ է նկատել, որ թուրքական կողմի համար որքանով ձեռնտու է մինչ օրս գործող Կարսի պայմանագիրը, այնքանով այն նաեւ մեծ վտանգներ է պարունակում: Պաշտոնական Անկարան վախենում է, որ մի օր՝ տերությունների եւ ՀՀ շահերի համընկնման դեպքում, Կարսի պայմանագիրը կարող է կորցնել իր խախուտ իրավական ուժը եւ մտադիր է, որքան հնարավոր է, շուտ իրավական նոր, առավել անխոցելի պատնեշներ ստեղծելով՝ Հայաստանի Հանրապետությանը պահի կաղապարների մեջ: Հենց այդտեղ էլ կավարտվի տարածաշրջանում առկա real politik-ի շրջանակում ընթացած Արեւմտյան Հայաստանի հարյուրամյա պատմությունը:

ՀՂՈՒՄՆԵՐ

1 Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 2, Երեւան, 1976, էջ 41:
2 Արա Պապյան. «Արեւմտյան Հայաստանի խորհուրդ, կառավարություն. այս անունները չափից ավելի հավակնոտ են հնչում», 21.11.2011, http://www.yerkramas.org/am/archives/160, Արեւմտյան Հայաստան. աշխարհագրական հասկացությունն, թե վարչատարածքային միավոր, 23.11.2011, http://www.yerkramas.org/am/archives/166:
3 Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երեւան, 1972, էջ 92:
4 Նշվ. աշխ., էջ 100-102:
5 Նշվ. աշխ., էջ 128:
6 Նշվ. աշխ., էջ 539:
7 Նշվ. աշխ., էջ 676:
8 Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson, Prepared with an introduction by Ara Papian, Yerevan, 2011, p. 51.
9 История Дипломатии, том 2, Дипломатия в Новое время (1872-1919гг.), под редакцией академика В. П. Потемкина, Москва-Ленинград, 1945, ст. 118-120.
10 История Дипломатии, том 3, Дипломатия в период подготовки второй мировой войны (1919-1939гг.), под редакцией академика В. П. Потемкина, Москва-Ленинград, 1945, ст. 231.
11 Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 6, Երեւան, 1980, էջ 185:
12 Կիրակոսյան Ա. Ջ., Բրիտանական դիվանագիտությունը եւ արեւմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914թ.), Երեւան, 1999, էջ 5:
13 Սարոյան Ս., Հայաստանը քաղաքակրթական սահմանաբաժանին, «Առաջին ապառնի» արմատական մտքի հանդես, թիվ 1, 2012, էջ 105-112:
14 Տեղի հայերի խոսքերով՝ իրենք իսլամը ստիպողաբար չեն ընդունել: Զրույցների ընթացքում նրանք նշում էին, որ գուցե իրենց պապերը մահմեդականություն ընդունել են բռնի կերպով՝ իսլամն իրենց պարտադրելու պատճառով, բայց իրենք այն ընդունում են գիտակցված ու կամավոր:

САРО САРОЯН

Западная Армения: миф или реальность?

В статье предпринята попытка переосмысления основ и границ восприятия укоренившегося в обществе термина “Западная Армения” и с этой точки зрения его связь с “Армянским вопросом”. Наблюдения, сделанные автором статьи во время путешествия по землям Исторической Армении, стали основой для того, чтобы представить реалии Западной Армении и выдвинуть ряд существенных вопросов, важных с точки зрения раскрытия истинных отношений и ожиданий армянства по отношению к этим территориям.

SARO SAROYAN

Western Armenia: Myth or Reality?

The author makes an attempt to reconsider the grounds and extent of the perception of the term “Western Armenia” deeply rooted in the society, and in this regard, its relation to “Armenian Question.” The observations that were made during the cognitive visit paid by the author to the lands of Historic Armenia serve as the basis for presenting the realities of Western Armenia, and for putting forward a number of substantial issues that are of importance in terms of revealing the true attitudes and expectations of the Armenian people in respect to these territories.

Կտրուկ ժողովրդավարացում. համաշխարհային փորձ

ԷԴԳԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) փորձագետ: Միաժամանակ դասավանդում է քաղաքական գիտություններ, մամուլում հանդես է գալիս փորձագիտական-վերլուծական հոդվածներով: Ունի քաղաքագիտության մագիստրոսի աստիճան:

Մի շարք երկրներում, այդ թվում Հայաստանում, տարածված է այն կարծիքը, որ ժողովրդավարացումը տասնյակ եւ նույնիսկ հարյուրավոր տարիների գործ է: Շատերը համոզված են, որ երկիրն իրեն ժողովրդավար հռչակելուց հետո չի կարող միանգամից այդպիսին դառնալ, այլ միայն քայլ առ քայլ՝ փոխելով ավանդույթները, գերիշխող մշակույթը, մի քանի սերնդափոխությամբ է հնարավոր հասնել ժողովրդավարության հաստատման: Սակայն ժամանակակից աշխարհում տեղի ունեցած «ժողովրդավարացման ալիքները», կարծես թե, հերքում են վերոնշյալ թեզը:

Ինչ խոսք, դժվար թե, ասենք, քաղաքակրթությունից կտրված ջունգլիներում ապրող ցեղերը կամ աշխարհի առջեւ փակ արեւելյան բռնակալության հպատակները շատ արագ փոխարինեն իրենց համայնական տոհմացեղային, հպատակային կացութաձեւը ժողովրդավարական համակարգով՝ պատմության մեջ, կարծես թե, նման օրինակներ չկան: Ըստ երեւույթին, պատճառն այն է, որ նման հանրությունները նույնիսկ ծանոթ չեն պետության տարրական ատրիբուտներին եւ, կտրված լինելով քաղաքակրթությունից, զերծ են մնում արտաքին ազդեցությունից:

Սակայն արդի աշխարհի գրեթե բոլոր ոչ ժողովրդավարական քաղաքական համակարգերում այս կամ այն չափով առկա են ժողովրդավարության առանձին տարրեր: Այդպիսի համակարգերը, գոնե նվազագույն չափով, շփումներ ունեն ժողովրդավարական երկրների հետ եւ չեն կարող գոնե որոշակիորեն չազդվել դրանցից: Երեւի նաեւ այս գործոնների առկայությունն է, որ ժամանակակից աշխարհում հնարավոր է դարձնում կտրուկ ժողովրդավարացումը:

Ստացվում է, որ ժամանակակից աշխարհում առնվազն ժողովուրդների մեծ մասը պատրաստ է ժողովրդավարության, սահմանադրական պետության հա-

մար: Սակայն, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, համեմատաբար դեռ քչերն են հաջողությամբ կարողանում կտրուկ անցում կատարել դեպի ժողովրդավարություն:

Սույն հոդվածում՝ հիմնվելով Freedom house միջազգային կազմակերպության[1] գնահատականների վերլուծության վրա, ներկայացվում են կարճ ժամանակահատվածում քաղաքական ազատությունների առումով զգալի բարելավում արձանագրած երկրները եւ տվյալների փոփոխման վերլուծությունը: Իհարկե, մեկ կազմակերպության՝ թեկուզ այնպիսի հեղինակավոր, ինչպիսին է Freedom House-ը, հետազոտությունների եւ գնահատականների հիման վրա հնարավոր չէ իրականացնել համապարփակ, սուբյեկտիվիզմից զերծ հետազոտություն: Այդ իսկ պատճառով սույն հոդվածը կարող է ծառայել ընդամենը, որպես ելակետային, ուղղորդող վերլուծություն՝ հետագայում ավելի բազմատեսակ, խորքային ուսումնասիրություն կատարելու համար:

Նշենք, որ Freedom house-ը՝ սկսած 1972-ից, կատարել է աշխարհի բոլոր երկրների քաղաքական իրավունքների եւ քաղաքացիական ազատությունների մակարդակի գնահատում՝ յոթ բալանոց սանդղակով, որտեղ 7-ը առավելագույն վատ ցուցանիշն է, 1-ը՝ նվազագույն լավը: Ընդ որում, պետք է նշել, որ կազմակերպությունը սահմանել է ռեժիմի երեք հիմնական տեսակ՝ ազատ, կիսաազատ եւ անազատ երկրներ: «Ազատ» է համարվում այն երկիրը, որի քաղաքական իրավունքներ/քաղաքացիական ազատություններ հատկանիշներով ստացած ընդհանուր միջին ցուցանիշը 1.0-ից 2.5 է: «Կիսաազատ» երկրներն են 3.0 - 5.0, իսկ «անազատ» երկրները՝ 5.5 -ից 7.0 միավոր ունեցողները[2]:

Այս աշխատանքի մեջ մեր կազմած աղյուսակով առանձնացվել են այն երկրները, որոնք մեկ-երկու տարվա ընթացքում «անազատ», կամ «կիսաազատ» կարգավիճակից անցում են կատարել «ազատ» երկրի կարգավիճակին եւ այն պարագայում, եթե անցումն իրականացվել է առնվազն ընդհանուր երկու միավորով ցուցանիշների բարելավման արդյունքում: Նման մոտեցման հիմքում է միայն կտրուկ փոփոխություններ գրանցած երկրներն առանձնացնելու ցանկությունը: Իհարկե, «ազատ» երկրի կարգավիճակին կարելի է անցնել քայլ առ քայլ՝ երկար ժամանակահատվածում աստիճանաբար բարելավելով ցուցանիշները: Եվ պետք է նկատել, որ քիչ չեն այդպիսի երկրները, որոնք տեղ չեն գտել աղյուսակում: Այստեղ չեն դիտարկվում նաեւ «անազատ», կամ «կիսաազատ» երկրների ցուցանիշների բարելավման բազմաթիվ օրինակները, երբ երկիրը բարելավել է իր դրությունը, սակայն՝ ոչ այնքան, որպեսզի անցում կատարեր «ազատ» երկրի կարգավիճակին:

Ներկայացված աղյուսակից երեւում է, որ, Freedom house-ի կողմից հետազոտված ժամանակահատվածում (1972-2011) **47 երկրում** արձանագրվել է կարգավիճակի այնպիսի կտրուկ փոփոխություն, երբ մեկ կամ երկու տարվա ընթացքում պետությունը ստացել է «ազատ» երկրի կարգավիճակ:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ արագ ժողովրդավարացման փորձ ունենալը դեռեւս չի նշանակում, որ այն չի կարող հետընթաց արձանագրել: Կան օրինակներ, երբ «ազատ» երկրի կարգավիճակ ստանալու արդեն հաջորդ տարում պետությունը կորցրել է այն: Այդպիսի պետություններից են Արգենտինան (1972թ.- 2/2 «ազատ». 1973թ.- 2/4 «կիսաազատ»), Գանան (1980թ.- 2/3 «ազատ», 1981թ.- 6/5 «անազատ»), Էստոնիան (1991թ.- 2/3 «ազատ», 1992թ.- 3/3 «կիսաազատ»), Թաիլանդը (1975թ.- 2/3 «ազատ», 1976թ.- 6/6 «անազատ»), Հոնդուրասը (1981թ. հունվար-1982 թ. օգոստոս- 2/3 «ազատ», 1983թ. օգոստոս-նոյեմբեր- 3/3 «կիսաազատ»), Սուրինամը (1987թ. նոյեմբեր -1988թ. նոյեմբեր – 3/2 «ազատ». 1989թ.- 3/3 «կիսաազատ»), Ֆիջի (1999թ.- 2/3 »ազատ», 2000թ. - 6/3 «կիսաազատ»): Վերոնշյալ երեւույթը վկայում է այն մասին, որ կտրուկ ժողովրդավարացումն ինքնին չի ենթադրում, որ պետությունում կայացել են ժողովրդավարական ինստիտուտները եւ համապատասխան քաղաքական մշակույթը:

Ընդհանուր առմամբ՝ կան միայն **27 երկրներ**, որոնք ստանալով «ազատ» երկրի կարգավիճակ, առանց հետընթացների մինչեւ այսօր չեն կորցրել այն, եւ այդ իսկ պատճառով ներկայիս դրությամբ կարող են համարվել կտրուկ ժողովրդավարացման հաջողված օրինակներ: Այդ երկրներն են *Արգենտինան, Բենինը, Բուլղարիան, Գրենադան, Թայվանը, Ինդոնեզիան, Իսպանիան, Լեհաստանը, Կապո Վերդեն, Կիպրոսը, Հարավային Աֆրիկան, Հարավային Կորեան, Հունաստանը, Հունգարիան, Մալթան, Մոնղոլիան, Նամիբիան, Չիլին, Պերուն, Պորտուգալիան, Ռումինիան, Սամոան, Սան Տոմե եւ Պրինսիպին, Սլովակիան, Սլովենիան, Սուրինամը, Ուրուգվայը:*

Իսկ *Գանան, Գայանան, Դոմինիկյան Հանրապետությունը, Էստոնիան, Մալին*, թեեւ այսօր «ազատ» երկրներ են եւ ունեն կտրուկ կերպով «ազատ» կարգավիճակ ձեռք բերելու փորձ, սակայն այդ կարգավիճակը ստանալուց հետո արձանագրել են հետընթաց եւ հետո քայլ առ քայլ նորից վերադարձել «ազատ» կարգավիճակին:

Հետաքրքրական փաստ է, որ 1 տարվա ընթացքում «ազատ» կարգավիճակ են ձեռք բերել մեծամասամբ «կիսաազատ» կարգավիճակ ունեցող երկրները, եւ մեր աղյուսակում միայն երեք պետություն գոյություն ունի, որոնց անցումը կա-

տարվել է միանգամից «անազատ» կարգավիճակից: Այդ երկրներն են *Հունաստանը, Մալավին եւ Չեխոսլովակիան:* Ինչպես երեւում է, կոշտ բռնապետական վարչակարգերից միանգամից ժողովրդավարության անցում կատարելն ավելի բարդ է, քան որոշակի ազատություններ ունեցող պետությունից:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ չկա որեւէ երկրիր, որ ամենաբարձր ցուցանիշներ՝ 1/1 արձանագրելուց հետո կորցրել է «ազատ» երկրի կարգավիճակը: Սա խոսում է այն մասին, որ կայացած ժողովրդավարական երկրների ապաժողովրդավարացումը առնվազն քիչ հավանական է:

Պետք է նշել նաեւ մեկ այլ հետաքրքիր երեւույթի մասին. կան օրինակներ, երբ «ազատ» երկրի կարգավիճակի նվազագույն ցուցանիշներ ստանալուց հետո երկիրը, թեեւ չի կորցրել իր կարգավիճակը, սակայն այդպես էլ լրջորեն չի բարելավել ցուցանիշները (կամ բարելավելուց հետո կրկին վատթարացրել է): Այդպիսի երկրներն են *Արգենտինան, Բենինը, Բուլղարիան, Գայանան, Դոմինիկյան հանրապետությունը, Ինդոնեզիան, Հարավային Աֆրիկան, Սերբիան, Հունաստանը, Մալին, Մոնղոլիան, Նամիբիան, Պերուն, Ռումինիան, Սամոան, Սան Տոմե եւ Պրինսիպին, Սուրինամը:* Պետք է նկատել, որ այս ցանկում Ինդոնեզիան ամենավերջինն է ստացել «ազատ» երկրի կարգավիճակ՝ 2005թ., իսկ ամենաառաջինն այդ կարգավիճակը ստացել է Հունաստանը՝ 1974 թվականին: Սա վկայում է այն մասին, որ կտրուկ ժողովրդավարացումից հետո նույնիսկ երկար ժամանակ անց պետությունը կարող է այդպես էլ չդառնալ կայացած ժողովրդավարությամբ երկիր:

Մեր աղյուսակից երեւում է, որ կա ընդամենը **12 երկիր**, որոնք կտրուկ ժողովրդավարացումից հետո այսօրվա դրությամբ ունեն ամենաբարձր՝ 1/1 ցուցանիշը: Դրանք են *Էստոնիան, Իսպանիան, Լեհաստանը, Կապո Վերդեն, Կիպրոսը, Մալթան, Չեխիան, Չիլին, Պորտուգալիան, Սլովակիան, Սլովենիան, Ուրուգվայը:*

Եթե դիտարկենք վերոնշյալ պետություններն իրենց գրաված աշխարհագրական դիրքի կտրվածքով, ապա կունենանք հետեւյալ պատկերը. պետություններից երկուսը՝ *Չիլին եւ Ուրուգվայը,* հարավամերիկյան երկրներ են, կա երկու արեւմտաեվրոպական երկիր՝ *Իսպանիան եւ Պորտուգալիան*, Հարավային Եվրոպայի երկու երկիր՝ *Կիպրոսը եւ Մալթան*: Պետություններից չորսը նախկին սոցիալիստական, արեւելյան եւ կենտրոնական Եվրոպայի պետություններ են՝ *Լեհաստանը, Չեխիան, Սլովակիան եւ Սլովենիան*, եւ կա մեկ պետություն՝ *Կապո Վերդեն*, որը գտնվում է Ատլանտյան օվկիանոսում: Հետաքրքական է, որ այս ցուցակում չկա ասիական եւ աֆրիկյան ոչ մի երկիր:

Նշենք նաեւ այն երկրները, որոնք, ըստ վերջին՝ 2011թ. գնահատականների, քաղաքական իրավունքներ/քաղաքացիական ազատություններ ցուցանիշներից մեկով ունեն 1 բալ, մյուսով՝ 2: Դրանք են *Գանան, Գրենադան, Թայվանը, Հարավային Կորեան, Հունգարիան*: Ուշադրության արժանի է այն, որ աշխարհագրական դիրքի առումով այստեղ արդեն կան երկրներ, ինչպես Աֆրիկայից *Գանան*, այնպես էլ Ասիայից՝ *Թայվանն ու Հարավային Կորեան*: Փաստորեն, կարելի է ենթադրել, որ աֆրիկյան եւ ասիական երկրներում ժողովրդավարացման գործընթացում քաղաքական ազատությունների բարձրագույն մակարդակի հասնելը համեմատաբար ավելի դյուրին է, քան՝ քաղաքացիական ազատությունների բարձրագույն մակարդակի: Հնարավոր է, որ այս առումով որոշակի խոչընդոտող դեր են խաղում այդ երկրներում պահպանվող աֆրիկյան-ասիական-արեւելյան մշակույթին բնորոշ որոշակի տարրեր, որոնցից ամբողջովին ձերբազատվելը, համենայն դեպս, կարճ ժամանակահատվածում, չափազանց դժվար է, եթե չասել՝ անհնար:

Հարկ է նշել, որ նոր հազարամյակում, ըստ սույն հոդվածում նշված չափանիշների, այսինքն՝ մեկ-երկու տարում, առնվազն երկու միավորի բարելավմամբ «ազատ» երկրի կարգավիճակ են ստացել միայն 7 պետություն՝ *Արգենտինան (2003), Ինդոնեզիան (2005), Լեսոթոն (2002) Սերբիան (2002), Պերուն (2001), Սուրինամը (2000) եւ Ուկրաինան (2005): Ընդ որում, 2011-ի դրությամբ միայն Արգենտինան, Ինդոնեզիան, Սերբիան, Պերուն եւ Սուրինամն են ստացել «ազատ» երկրի կարգավիճակ: Լեսոթոն եւ Ուկրաինան կորցրել են իրենց կարգավիճակը:*

Եվ վերջում եւս մեկ դիտարկում. աղյուսակից երեւում է, որ, 2000-ականներին տեղի ունեցած «գունավոր հեղափոխությունները» ԱՊՀ տարածքում եւ «արաբական գարունը» արաբական աշխարհում, ըստ Freedom house-ի, դեռեւս որեւէ երկիր չի դարձրել «ազատ» (բացառություն է միայն Ուկրաինան, որը, սակայն, կորցրել է «ազատ» կարգավիճակը): Գրանցվել են միայն առանձին երկրների ցուցանիշների կտրուկ բարելավումներ, որոշ դեպքերում՝ զգալի բարելավում, օրինակ՝ *Թունիսում*[3]:

Աղյուսակ. «Ազատ» երկրի կարգավիճակ ստացած երկրները

#	ԵՐԿԻՐԸ	Փոփոխության տարեթիվը[4]	Կտրուկ փոփոխություններին նախորդող տարվա ցուցանիշները *(Քաղ.իր/քաղաքաց. ազատ.կարգավիճակ)*	Փոփոխություններից հետո ստացված առաջին տարվա ցուցանիշները *(Քաղ.իր/քաղաքաց. ազատ.կարգավիճակ)*	Փոփոխություններից հետո ստացված երկրորդ տարվա ցուցանիշները *(Քաղ.իր/քաղաքաց. ազատ. կարգավիճակ)*	2011թ. ցուցանիշները *(Քաղ.իր/ քաղաքաց.ազատ. կարգավիճակ)*
1	Արգենտինա	1972	6/3 Կիսաազատ	2/2 Ազատ	2/4 Կիսաազատ	2/2 Ազատ
		1983 նոյեմբ. - 84 նոյեմբ.	6/5 Անազատ	3/3 Կիսաազատ	2/2 Ազատ	
		2003	3/3 Կիսաազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ	
2	Բանգլադեշ	1991	5/5 Կիսաազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	3/4 Կիսաազատ
3	Բենին	1991	6/4 Կիսաազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	2/2 Ազատ
4	Բոլիվիա	1982 օգոստ. - 1983 նոյեմբ.	7/4 Կիսաազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	3/3 Կիսաազատ
5	Բուլղարիա	1991	7/7 Անազատ, 3/4, Կիսաազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	2/2 Ազատ
6	Բուրկինա Ֆասո	1978	5/4 Կիսաազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	5/3 Կիսաազատ
7	Գանա	1980	4/4 Կիսաազատ	2/3 Ազատ	6/5 Անազատ	1/2 Ազատ
8	Գայանա	1993	3/3 Կիսաազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ	2/3 Ազատ
9	Գրենադա	1984 նոյեմ. - 1985 նոյեմ.	5/3 Կիսաազատ	2/3 Ազատ	2/2 Ազատ	1/2 Ազատ
10	Դոմինիկյան Հանրապետություն	1978	4/2 Կիսաազատ	2/2 Ազատ	2/3 Ազատ	2/2 Ազատ
11	Զամբիա	1991	6/5 Կիսաազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	3/4 Կիսաազատ
12	Էկվադոր	1979	5/4 Կիսաազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ	3/3 Կիսաազատ
13	Էստոնիա	1991		2/3 Ազատ	3/3 Կիսաազատ	1/1 Ազատ

14	Թայվան	1996	3/3 Կիսաազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ	1/2 Ազատ
15	Թաիլանդ	1975	5/3 Կիսաազատ	2/3 Ազատ	6/6 Անազատ	4/4 Կիսաազատ
16	Ինդոնեզիա	2005	¾ Կիսաազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ
17	Իսպանիա	1977	5/3 Կիսաազատ	2/3 Ազատ	2/2 Ազատ	1/1 Ազատ
18	Լեհաստան	1990	4/3 Կիսաազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ	1/1 Ազատ
19	Լեսոթո	2002	4/4 Կիսաազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	3/3 Ազատ
20	Կապո Վերդե	1991	5/5 Կիսաազատ	2/3 Ազատ	1/2 Ազատ	1/1 Ազատ
21	Կիպրոս	1981 հուն. - 1982 օգոստ.	3/3 Կիսաազատ	1/2 Ազատ	1/2 Ազատ	1/1 Ազատ
22	Հարավային Աֆրիկա	1994	5/4 Կիսաազատ	2/3 Ազատ	1/2 Ազատ	2/2 Ազատ
23	Հարավային Կորեա	1987 նոյեմ. – 1988 նոյեմ.	4/4 Կիսաազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	1/2 Ազատ
24	Հարավսլավիա[5] (Սերբիա եւ Մոնտենեգրո)	2002	4/4 Կիսաազատ 3/3 Կիսաազատ	3/2 Ազատ	3/2 Ազատ	2/2 Ազատ
25	Հոնդուրաս	1981 հուն. - 1982 օգոստ.	4/3 Կիսաազատ	2/3 Ազատ	3/3 Կիսաազատ	4/4 Կիսաազատ
26	Հունաստան	1974	7/5 Անազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ
27	Հունգարիա	1990	4/3 Կիսաազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ	1/2 Ազատ
28	Մալավի	1994	6/5 Անազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	3/4 Կիսաազատ
29	Մալի	1992	6/4 Կիսաազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ
30	Մալթա	1985 նոյեմ. - 1986 նոյեմ.	2/4 Կիսաազատ	1/2 Ազատ	1/2 Ազատ	1/1 Ազատ
31	Մոնղոլիա	1991	4/4 Կիսաազատ	2/3 Ազատ	3/2 Ազատ	2/2 Ազատ
32	Նամիբիա	1988 նոյեմ. - 1989 դեկ.	4/3 Կիսաազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	2/2 Ազատ
33	Նեպալ	1991	4/4 Կիսաազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	4/4 Կիսաազատ

34	Նիգերիա	1979	5/3 Կիսազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	4/4 Կիսազատ
35	Չիլի	1990	4/3 Կիսազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ	1/1 Ազատ
36	Չեխոսլովակիա[6]	1990	6/6 Անազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ	1/1 Ազատ
37	Պերու	1980	5/4 Կիսազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ
		2001	3/4 Կիսազատ	1/3 Ազատ	2/3 Ազատ	
38	Պորտուգալիա	1976	5/3 Կիսազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ	1/1 Ազատ
39	Ռումինիա	1996	4/3 Կիսազատ	2/3 Ազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ
40	Սամոա	1988 նոյեմ. – 1989 դեկ.	4/3 Կիսազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ
41	Սան Տոմե եւ Պրինսիպի	1991	5/5 Կիսազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	2/2 Ազատ
42	Սլովակիա	1994	3/4 Կիսազատ	2/3 Ազատ	2/3 Ազատ	1/1 Ազատ
43	Սլովենիա (նախկինում Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետության մասն էր)	1991		2/3 Ազատ	2/2 Ազատ	1/1 Ազատ
44	Սուրինամ	1987 նոյեմ. - 1988 նոյեմ. եւ 2000	4/4 Կիսազատ եւ 3/3 Կիսազատ	3/2 Ազատ եւ 1/2 Ազատ	3/3 Կիսազատ եւ 1/2 Ազատ	2/2 Ազատ
45	Ուկրաինա	2005	4/3 Կիսազատ	3/2 Ազատ	3/2 Ազատ	4/3 Կիսազատ
46	Ուրուգվայ	1984 նոյեմ. - 1985 նոյեմ.	5/4 Կիսազատ	2/2 Ազատ	2/2 Ազատ	1/1 Ազատ
47	Ֆիջի	1999	4/3 Կիսազատ	2/3 Ազատ	6/3 Ազատ	6/4 Կիսազատ

ՀՂՈՒՄՆԵՐ

1 Freedom House-ը միջազգային, ոչ կառավարական, հետազոտական կազմակերպություն է, որը առավելապես հայտնի է երկրների քաղաքական իրավունքների եւ քաղաքացիական ազատությունների վիճակի հետազոտություններով: Մանրամասն կազմակերպության, նրա կողմից իրականացվող հետազոտությունների, մեթոդոլոգիայի վերաբերյալ տես՝ կազմակերպության պաշտոնական կայքը՝ www.freedomhouse.org

2 Freedom house-ի մեթոդոլոգիայի մասին ավելի մանրամասն տես՝ http://www.freedomhouse.org/report/freedom-world-2011/methodology

3 Տես՝ http://www.freedomhouse.org/report/freedom-world/2012/tunisia-0

4 Մեկ երկրի համար նշված փոփոխության տարեթիվը կարող է լինել մեկից ավելին, ինչը պայմանավորված է կոնկրետ երկրում մեկից ավելի անգամ տեղի ունեցած կտրուկ փոփոխություններով

5 Հարավսլավիան դադարեց գոյություն ունենալ 2003թ. փետրվարի 4-ին, երբ հիմնադրվեց Սերբիայի եւ Չերնոգորիայի պետական միությունը: 2006թ. հունիսի 5-ին այդ միությունը փլուզվեց, որի հիման վրա ստեղծվեցին Սերբիան եւ Մոնտենեգրոն: Աղյուսակում Հարավսլավիային վերաբերող տողում նշված 2011-ի ցուցանիշները վերաբերում են Սերբիային:

6 1993թ. հունվարի 1-ին Չեխոսլովակիան բաժանվեց Չեխիայի եւ Սլովակիայի: Աղյուսակում Չեխոսլովակիային վերաբերող տողում նշված 2011-ի ցուցանիշները վերաբերում են Չեխիային, իսկ Սլովակիային վերաբերող ցուցանիշները տրված են առանձին տողով:

ЭДГАР ВАРДАНЯН

Резкая демократизация: мировой опыт

В статье, на основе изучения оценок международной исследовательской организации «Фридом Хауз», составлена таблица стран, совершивших скачкообразный переход к демократии на период с 1972-2011гг. Выявлена динамика процесса резкой демократизации. Указаны страны как с удавшейся, так и с провалившейся демократизацией. В работе, в региональном разрезе, отдельно показаны осуществившие демократический транзит страны с наилучшими показателями по части политических прав и гражданских свобод. Кратко прокомментированы различные нюансы, связанные с опытом улучшения/ухудшения показателей.

EDGAR VARDANYAN

Fast Track Democratization: International Experience

Based on the studies of international watchdog organization Freedom House, the article includes a table of countries that made an abrupt transition to democracy in the period from 1972 to 2011. The analysis elicits the dynamics of the process of fast track democratization. The list of both succeeded and failed democracies is presented. On the regional level, the research separately elucidates the countries with the best performance on political rights and civil liberties. The author briefly comments various nuances associated with the improvement or decline of scores.

Տոտալիտար եւ ավտորիտար մտածողության հետեւանքները հայաստանյան հասարակական-քաղաքական դաշտում

ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) փորձագետ: Մասնագիտությամբ հոգեբան է: Վերլուծական հրապարակումներով ու հոդվածաշարերով հանդես է գալիս պարբերական մամուլում եւ էլեկտրոնային լրատվամիջոցներում:

Քսան տարի առաջ հայ ժողովուրդը՝ օգտվելով ԽՍՀՄ-ում խմորվող ներքաղաքական գործընթացներից, ձեռնամուխ եղավ իրեն վերաբերող ազգային, սոցիալական, տնտեսական խնդիրների լուծման գործին, որի տրամաբանական արդյունքը դարձավ օրինականորեն (հանրաքվեով) անկախ պետականության ստեղծումը: Դա շարժում էր, զարթոնք, որը նպատակ ուներ ստեղծելու երկրի բոլոր քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները երաշխավորող պետություն. ազատ ընտրություններով ձեւավորեց իր իշխանությունները, սատար կանգնեց արցախահայության պայքարին: Տարիներ անց՝ 2008-ին, կրկին ըմբոստացավ ժողովուրդը, համենայն դեպս՝ նրա որոշակի հատվածը: Առիթը նախագահական ընտրություններն էին, որոնք հերթական անգամ անցնում էին կեղծիքի ու բռնության մթնոլորտում, իսկ պատճառները՝ երկրում տիրող տնտեսական, սոցիալական, հոգեբանական վատ իրավիճակը: Այս անգամվա պայքարը, երբ ըմբոստ հատվածը ղեկավարվում էր ընդդիմադիր առաջնորդի կողմից՝ տանուլ տրվեց, իսկ կառույցը, որը Հայաստանում ներկայացնում է ընդդիմության մեծ թեւը եւ կոչվում է Հայ ազգային կոնգրես, մինչեւ այժմ՝ 2012 եւ գալիք նոր նախագահական ընտրությունների նախաշեմ, գրեթե փլուզված է եւ անդեմ: Հինգ տարիների պայքարում թե՛ մեծ ընդդիմությունը, թե՛ մյուս ընդդիմությունները եւ թե՛ քաղաքացիական ակտիվ հասարակությունը՝ դեմ լինելով նախագահին, նրա թեկնածությանը, իշխող վարչակարգին, միեւնույն է, չկարողացան փոխել իրավիճակը: Ավելին՝ այս պահին համակարգն իր թեկնածուով շատ լուրջ մրցակից է «ամբողջ հասարակությանը»: Ինչո՞ւ ամբողջ հասարակությանը: **Թերեւս՝ սույն դիտարկման վարկածը հենց դա է. այսօրվա Հայաստանում տիրող իրավիճակը, կառավարման բնույթը եւ ոճը, ընտրված նախագահը (կարեւոր չէ՝ կեղծիքներով կամ ոչ), ընդդիմության որակը եւ, բնականաբար, ժողովրդի**

կյանքում հաստատված որոշակի օրինաչափությունները ոչ միայն իշխողների ամբողջատիրական ու ավտորիտար կառավարման ոճի, այլեւ ժողովրդի, հասարակության, ընդդիմադիրների, մարդկանց ավտորիտար մտածողության հետեւանքն են:

Խորհրդային գաղափարականացված պետության մեջ, ինչպես հատուկ է տոտալիտար վարչակարգին (որն իր բովանդակությամբ շարունակում է գոյություն ունենալ մինչեւ օրս, թեեւ ձեւով ավտորիտար է), իշխանությունը կուռ հիերարխիկ կառույց էր՝ բուրգ, որի ամենավերեւում իշխանության ղեկավարն էր: Բուրգի կառուցվածքում կային դիրքեր, կարգավիճակներ եւ դրանց միջեւ գոյություն ունեցող կապեր: Խորհրդային գաղափարախոսությունը աստիճանակարգով իջնում եւ վարչահրամայական եղանակներով տարածվում էր բոլոր օղակների վրա:

«ԽՍՀՄ ազատականացումը եւ նույնիսկ կուսակցություն-պետության կազմաքանդումը, որը սկսվեց 80-ականների վերջերին՝ կոմունիզմի յոթանասուն տարիներից հետո, չէին կարող դառնալ բառի արեւմտյան իմաստով քաղաքացիական հասարակության արագ առաջացման պատճառ: Չափազանց շատ կառույցներ ու ավանդույթներ, որ կարողացել էին գոյատեւել արտաքին կայսրությունների կազմում, ոչնչացվել կամ այնպես էին այլափոխվել ԽՍՀՄ-ում (օրինակ՝ ուղղափառ եկեղեցին), որ հսկայական ջանքեր էին պահանջվում դրանք վերականգնելու համար: Ամբողջատիրության երեսունհինգ տարիները լիովին սոցիալականացված տնտեսության հետ մեկտեղ ձեւավորում էին բոլոր քաղաքացիների կյանքը: Գործնականում բոլոր նրանք, ովքեր սոցիալական կարեւորություն ունեցող պաշտոններ էին զբաղեցնում 1980-ականների սկզբում, հավաքագրվել, վերապատրաստվել ու ձեւավորվել էին այս համակարգում: Հսկայական Խորհրդային Միության միայն մի քանի քաղաքային կենտրոններում այլախոհների փոքր խմբեր էին «ոչ խորհրդային» մշակույթ զարգացնում: Նույնիսկ գաղափարախոսությունը հերքելիս, մերժելիս կամ մեղադրելիս առկա էր համակարգի կողմից ձեւավորված առանձնահատուկ խորհրդային մի մտածելակերպ:

Սա օգնում է հասկանալ խորհրդային հասարակարգում հայտնվող նոր վերնախավի ազատական եւ ժողովրդավարական մտածելակերպի թերությունները»[1]:

Վերեւից եկող հարաբերությունների ձեւավորմամբ, յուրաքանչյուր օղակում դրանց ընդօրինակմամբ, իրենց սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով «խորհրդային հասարակության» մեջ կար «հաստատուն» միջանձնային, միջխմբային եւ միջհասարակական հարաբերությունների «կայուն մշակույթ»: Հատկապես այդ ժամանակաշրջանից ամրապնդված բուրգի աստիճանական կառուցվածքում յուրաքանչյուր օղակ ընդօրինակման եւ նույնականացման

խնդիր ուներ իր անմիջական վերադասի հետ, նույնականացման ձգտման համար ստորադասը գիտակցորեն կամ ենթագիտակցորեն ընդօրինակում էր իր անմիջական վերադասին: Այսինքն՝ այդ իսկ հարաբերությունները, որպես հարաբերությունների շղթայի մի մաս, նույնությամբ ածանցվում էին (եւ են) մյուս օղակներում: Մեկ օղակի նկարագրությունը բավարար էր շղթայում գոյություն ունեցող բարոյահոգեբանական մթնոլորտի նկարագրության համար: Ընդօրինակման միջոցով լուծում էին մի շարք կարեւոր խնդիրներ. օրինակ՝ վերադասի համար իր ստորադաս օղակի նույնատիպ վարքագիծը «հասկանալի» եւ ընդունելի էր, այդպիսով պահպանվում էին «սիմբիոտիկ միասնականությունը» եւ վերահսկելիությունը: Ամենամեծ խնդիրը եւ պահանջը հենց վերահսկողությունն էր, որն էլ իրականացվում էր յուրաքանչյուր օղակում: Այդպես ձեւավորված գոյություն ուներ միատոն մշակույթ, որի խորապատկերում արտասովոր եւ անընկալելի էին այլատիպությունը, վարքագծի այլ դրսեւորում եւ այլակարծություն: Այսօր արտաքուստ թվում է՝ կան մեծ փոփոխություններ, եւ մարդը մեծամասամբ ազատ է իր դրսեւորումներում, ճաշակում: Այն, որ ինքնատիպ ճաշակն էլ «թելադրվում» է կամ ենթագիտակցաբար համաձայնեցված է հասարակության հետ, դեռեւս Ֆրոմն է ասել, կամ հենց միայն մենակ չմնալու գաղափարը շատ հզոր ու մոտիվացնող է մարդկանց որոշումներում եւ վարքում:

Սոցիալիզացիայի հիմնական փուլերի ժամանակ ձեւավորվում են անձի սոցիալական բնավորության հիմնական ուղղվածությունը, բարդույթները, անձնային առանձնահատկությունները: Գործունեության տարբեր տեսակներ պահանջում են ամբողջովին տարբեր բնավորություններ եւ առաջացնում են տարբեր վերաբերմունք շրջապատի նկատմամբ: Մարդու անձը նախ ձեւավորվում է ըստ կյանքի որոշակի ոճի, որովհետեւ ընտանիքը միշտ կրում է հասարակության եւ դասի բնորոշ հատկանիշները, հետագայում մասնագիտության բնագավառում ձեւավորվում է մասնագիտական բնավորություն, որն ամենօրյա սովորույթների կրկնության արդյունքում ինքնաբերաբար դառնում է անձի կայուն կառուցվածք:

Խորհրդային ավտորիտար մտածողությունը դեռեւս ներցիայով գոյություն ունենալով՝ սոցիալիզացիայի միջոցով, կամա թե ակամա, փոխանցվում է սերնդեսերունդ՝ վարքի մեջ դրսեւորված, ամրապնդված եւ դարձած բնավորություն: Այդ բնավորությունը սերունդներին փոխանցում են որպես «ճիշտ փորձ», որպես ընդունված բարոյաէթիկական նորմեր, դասավանդման ու վերաբերմունքի «աշխատող» ոճ՝ անկախ բնագավառներից եւ ոլորտներից: Այսինքն՝ այսօր մտածողության եւ վարքագծի առանձնահատկությունների որոշակի անփոփոխելիության, նման սոցիալ-հոգեբանական հարաբերությունների գոյության պատճառը

հոգեկան գործընթացների, սոցիալական ամրապնդված նորմերի ու հարաբերությունների իներցիան է:

Անձի «կառույցում» պաշտպանական մի հզոր մեխանիզմ կա, որը հոգեկանի գլխավոր առանձնահատկությունն է: Դա հոգեկանի իներցիան է՝ մտածողության, հույզերի, վարքագծի, որի շնորհիվ անձը երկար ժամանակ հաստատուն է մնում իր համոզմունքներին, դիրքորոշումներին՝ որպես հիմնական գիտելիքի: Առհասարակ՝ ընկալման եւ մտածողության իներցիան սովորաբար դրսեւորվում է անճկունության եւ կարծրատիպացման ձեւով: Անձը չի ցանկանում եւ անկարող է կատարվող իրադարձությունների վերաբերյալ փոխելու հայացքների համակարգն ու նոր եզրահանգումներ անելու դրանցից, փոխելու ուղղությունը եւ բնույթը՝ հրաժարվելով արդեն ընդունած որոշումներից, որոշումներ ընդունելու ձեւերից:

Մտածողության իներցիան՝ կապված իր անճկունության հետ, տոտալիտարիզմի հատկանիշներից մեկն է, ինչպես նրա սոցիալ-քաղաքական (քաղաքական որոշումների մենաշնորհացումը), այնպես էլ քաղաքական-հոգեբանական (տոտալիտար ու ավտորիտար հասարակություններում ձեւավորվող անձի հատուկ տիպ, ըստ մտածողության ձեւի եւ գիտակցության առանձնահատկության) արտահայտվածություններում: Խորհրդային մտածողության բնութագրիչ տարրերից են տոտալիտար մտածողությունը, միակ ճշմարտության գոյությունը, մեկ ճշմարտության գիտակցությունը, մշտապես թշնամու կերպարի փնտրտուքը, ստեղծումը, որպեսզի անպատճառ օրակարգում թիրախ դարձվի այն եւ դրա միջոցով պահպանվի հասարակության միահամուռություն ու նպատակային վերահսկելի թշնամությունը՝ իշխանության ուզած հունով ուղղորդելու համար: Խորհրդային ամբողջատիրական մտածողության առանձնահատկություններից է նաեւ մարտնչող աթեիզմը, քանի որ քրիստոնեությունը մարտահրավեր է իրենց ունեցած միակ ճշմարտությանը:

1. Հայաստանյան իշխող վերնախավը ավտորիտար մտածողության կրող է:

Հայաստանյան քաղաքական դաշտի ավտորիտարիզմը, մենաշնորհային քաղաքականությունը, իշխանության կառչածությունը կառավարման այս ոճից՝ ակնհայտ է եւ ապացուցման կարիք չունի: Ամենապարզ ապացույցը ընտրական մեխանիզմների չգոյությունն է, որի պատճառով արդեն երկար տարիներ իշխանությունը վերարտադրվում է, ինքն իր լծակներով՝ վերընտրվում: Սա՝ մեկ, որ հայաստանյան իշխող վերնախավը գիտակցված եւ ենթագիտակցորեն ավտորիտար մտածողության կրող է:

Սակայն հարց է առաջանում. մի ամբողջ ժողովրդի փոքր մաս հանդիսացող բուրգի գագաթը կարո՞ղ է աշխատեցնել այն նույն կեղծարարական համակարգը՝ առանց հասարակության մասնակցության:

2. Հայաստանյան ընդդիմադիր մեծ հատվածը ավտորիտար մտածողության կրող է:

Երբ դիտարկում ենք հայաստանյան քաղաքական դաշտում կատարվող իրադարձություններին հանրության արձագանքների առանձնահատկությունները, տեսնում ենք երկակի մոտեցումների ողջ պատկերը: Եթե ակտիվ քաղաքականությամբ զբաղվողը ձեռնպահ չի մնում երկակի կամ բազմակի չափանիշների գործածումից, ապա ուշագրավ է, որ ակտիվ ընդդիմադիր քաղաքացին էլ չի կարողանում զերծ մնալ երկակի չափանիշներից: Այսպես՝ հասարակական քաղաքական դաշտը 2008-ից սկսած բազմաթեմա քննարկումների մեջ է: Ընդդիմադիրների ազատության, ժողովրդավարության մասին վերլուծականներից մինչեւ հակիրճ արտահայտված կարծիքների նշանակալի մասը ավտորիտար ոճ ու մոտեցում են պարունակում, մեկ ճշմարտություն եւ գրեթե մեծամասամբ կառուցված որեւէ կերպարի դեմ, ինչպես դա բնորոշ է համակարգի մտածելակերպին, ոչ թե «շուրջ» կամ «մասին», այլ՝ դեմ: Նման մոտեցումները ժողովրդավարության ջատագովների ու ավտորիտարիզմը «քանդելու», ջախջախելու կամավորների կողմից առավել անսքող եւ ցցուն էին ներընդդիմադիր քննարկումների ու ընդդիմության մենաշնորհի համար պայքարի ժամանակ: Օղակն այստեղ էլ փակվեց. պայքար մի բանի դեմ, ինչի կրողը նաեւ դու ես, նույն գաղափարը, ընդդիմության մենաշնորհ՝ ամբողջատիրական մտածողություն, միակի գաղափարն է, որն օրակարգ հանելուց հետո զբաղվում են ոչ թե այդ գաղափարն ապրեցնելով, այլ ուրիշինը «ոչնչացնելով»: Այսինքն՝ քաղաքական ուժի կողմից առաջարկված կերպարին, թեկնածուին ուժ տալը պետք է նշված «քայքայիչ» ճանապարհով ընթանա: Ուշագրավ է նաեւ այն, որ տոտալիտար հասարակարգից ոչ միայն գաղափարներ կամ մտածելակերպի ձեւ են ժառանգվում, այլեւ կոնկրետ զգացմունք, հույզ հակառակ կարծիքն ունեցողի նկատմամբ. դա ատելությունն է եւ նրա դրսեւորման տարատեսակ ձեւերը: Նույն աշխատանքը, նույն գաղափարախոսությունը եւ լրատվամիջոցների նույն աշխատանքը, սակայն երկու տարբեր բեւեռներից՝ այս ամենը իշխանության եւ ընդդիմության դաշտի ընդհանրությունն էր: Ընդդիմությունը հաջողություն ունենալու համար պետք է մարդկանց, հասարակությանը ոչ միայն նոր մոտեցում, համակարգային

նորություններ առաջարկեր, այլ նաեւ պետք է այլ տեսակի մեջ լիներ, տարբերվեր իշխանության թե՛ խաղերից, թե՛ մոտեցումներից, թե՛ մանիպուլյացիաներից, թե՛ հոգեբանական գրոհների որակներից: Սակայն արմատական պատկերացումներն ամբողջապես մի ընդհանուր դաշտ են՝ լինի կամ լիներ իշխանություն, թե ընդդիմություն: Ուրեմն, կարծես թե, հնարավոր չէր փոփոխություններ կատարել Հայաստանում՝ ոչ համակարգային, ոչ իշխանությունների, քանի որ նույն փոփոխություններ կատարողները՝ հասկանալով դիմացինի ավտորիտար մտածողության մասին, չեն նկատում իրենց մեջ նույն մտածողության առկայությունը: Այլընտրանք ներկայացվող քաղաքական ուժն ու կազմը, որն առավել «պայթյունավտանգ» էր իշխանության համար 2008-ին, նույն իշխանությունն էր՝ հայելային արտացոլմամբ, որտեղ միայն անձինք էին տարբեր: Ի վերջո, մեծ ընդդիմությունը թուլացավ ու տանուլ տվեց, քանի որ նույն տեսակն էր՝ ինչ իշխանությունը, իսկ նույն տեսակների միջեւ պայքարում իշխանությունը միանշանակ հաղթում է՝ ունենալով ողջ լծակներն իր ձեռքին: Հիմա էլ քաղաքական դաշտում փորձում են այլընտրանք ստեղծել այն մարդկանցով, որոնք իրականում ոչ մի տեսակի այլընտրանքային կողմեր չունեն: Այսպես՝ սա էլ երկրորդ փաստարկը, որ ընդդիմությունը եւս, կամա թե ակամա, ավտորիտար մտածողության կրող է:

3. Հայաստանյան ժողովուրդը, հասարակությունը ավտորիտար մտածողության կրող են:

Ժողովուրդը, հասարակությունը երկար տարիներ մշակված կանոններով եւ սովորություններով, քաղաքական դաշտի մասին առանձնահատուկ վերապահումներով սերնդեսերունդ փոխանցել են այդ կանոնները, վերաբերմունքի ու վարքի ձեւերը, ինչպես նաեւ հոգեբանական ինտրոցիայով՝ մտածողության ձեւը: «Մտածողության ինտրոցիան քաղաքական հոգեբանության մեջ դիտարկվում է որպես ցանկացած, այսպես կոչված, «հին» քաղաքական մտածողության հիմնական դետերմինանտներից մեկը»[2]: Ոչ միայն մտածելակերպի ժառանգությունն ենք ստացել սոցիալական նորմերի ինտրոցիայով, այլ նաեւ հասարակական հակազդող վարքն է նույն ազդակին ինտրոցիոն գոյությամբ «թույլատրել» դեպքի կրկնությանն ու ամրապնդմանը: Երբ շատ իրավիճակներ պահպանված են, մարդու հակազդող վարքը եւս համապատասխան տրվելով այդ ազդակին, ստացվում է՝ ինչպես առաջ: Այսպես՝ խորհրդային մտածողության առանձնահատկություններն այս մեխանիզմի օգնությամբ պաշտպանվում եւ խորանում են ժամանակի մեջ: Որքան ավելի է շարունակվում սխալական ուղղությունը,

այնքան ավելի դժվարանում է արմատական փոփոխությունը, քանի որ դրա իրականացման համար ստեղծված են ինչպես օբյեկտիվ, կազմակերպչական, այնպես էլ սուբյեկտիվ, հոգեբանական պայմաններ. փոխված են քաղաքական կազմակերպման միջոցները, ձեւավորված է մարդկանց գիտակցությունը: Սա է ժողովրդի մեծամասնության բնութագիրը: Բանն այն է, որ խորհրդային կառավարման տարիներին ստեղծված վերաբերմունքը կառավարման ոլորտին, կուսակցական պաշտոնյաներին՝ անմատչելիությունն էր: Այն իրականությունն էր ստեղծվել, մարդկանց համար մշակվել, որ ընտրյալներն են զբաղվում քաղաքականությամբ եւ նրանք կմտածեն ձեր մասին, ձեր փոխարեն: Խորհրդային ժամանակաշրջանում այդ բուրգի միահեծան ղեկավարի շնորհիվ ստեղծվեց նաեւ «հոր կուռքը», որի գործերն անքննելի էին, իսկ անձը՝ գրեթե կիսաստված: Հերոսը նման կառույցներից է «ծնվում», որտեղ կան աստիճանակարգություն եւ հարաբերությունների մեջ գործունեություն, համեմատություն: «Հայր» Ստալինի վերաբերյալ զանգվածը համոզված էր, որ դա հենց այն առաջնորդն է, որն իրեն պետք էր: Գործում էր ամենափրկչի գաղափարը, իրեն ներկայացնում էր որպես «ամենայն» հերոս, համապատասխան որակներ էր «ցուցադրում»: «Հայրը» վաստակել էր հրամայելու անքակտելի իրավունքը, որին մնում էր միայն լռակյաց ենթարկվել՝ հաշվի առնելով նաեւ ենթարկեցնելու մեխանիզմները: Ըստ Ֆրեյդի, նման հարաբերությունների վառ օրինակ են եկեղեցին եւ բանակը, որոնք արհեստական զանգվածներ են, որոնցում անհրաժեշտ են ստիպողականությունն ու ճնշումը՝ դրանք փլուզումից եւ կառուցվածքային փոփոխություններից պահպանելու համար: Սակայն այս բնորոշումը եւ մեխանիզմը նաեւ ավտորիտար համակարգի բնութագրիչներից է: «Եկեղեցում, ինչպես նաեւ բանակում, որքան էլ նրանք տարբեր լինեն՝ պաշտամունքային է նույն խաբուսիկ, կեղծ պատկերացումը, թե գոյություն ունի բարձրագույն իշխող մեկը՝ տիրակալը (կաթոլիկ եկեղեցում՝ Քրիստոսը, բանակում՝ հրամանատարը), ով զանգվածի յուրաքանչյուր անդամին սիրում է հավասարապես: Այդ պատրանքի վրա հիմնվում է ամեն ինչ, եւ պահպանվում են այդ երկու զանգվածները, եթե այն հանենք, անմիջապես կքանդվի ամեն բան: Ոչ մի կասկած չկա, որ Քրիստոսի հետ եկեղեցու յուրաքանչյուր անդամի կապը միաժամանակ զանգվածի անդամների միջեւ կապերի պատճառ է համարվում: Նույնը վերաբերում է նաեւ բանակին՝ հրամանատարը հայր է, ով միատեսակ սիրում է իր բոլոր զինվորներին, եւ դրա համար նրանք ընկերներ են»[3]: Այս սոսնձող գաղափարը մեծ նշանակությամբ է իր գործառույթը կատարում նաեւ աշխարհիկ բռնատիրական իշխանության մեջ: Վերից վար անցնում են վերահսկման եւ կարգուկանոնի պահպանման մեխանիզմներն ու

լծակները: «Հոր» կերպարի տակ պետության երաշխավորանքը, անձին երաշխավորելը դիտվում էր որպես «անձնական» երեւույթ, մտերմիկ վիճակ: Այդ կարգը հասնում էր հասարակության տարբեր բնագավառներում որպես գործող հարաբերություններ: Այսինքն, մարդկանց ոչ միայն ինքնուրույն մտածողությունն են սահմանափակել, այլեւ ստեղծել են մի շարք երեւույթների նկատմամբ կռապաշտական եւ անձեռնմխելի վերաբերմունք, որի արդյունքում ունենում են քաղաքականապես պասիվ, «անիրավունակ» զգացողությամբ քաղաքացի: Այսօր քաղաքականության նկատմամբ մարդկանց այդ վերաբերմունքն արտահայտվում է միահեծան, տրվելով մանիպուլյացիաների՝ թե քաղաքական հայտարարությունների տեսքով, թե սոցիոլոգիական մանիպուլյատիվ արդյունքների, ընտրություններում թերագնահատելով իրենց քվեն, «օգնելով» իշխանությանն իրենց կեղծիքները կազմակերպելուն: Նման անթաքույց վարք, օրինակ են զանգվածային լրատվամիջոցների միջոցով սոցիոլոգիական գիտության եւ լրատվական դաշտն այդ կողմով մենաշնորհած սոցիոլոգների հարցումների «արդյունքները»: Շատերը՝ մեծամասնությունը, իմանալով, որ դրանք վստահելի տվյալներ չեն, այնուամենայնիվ, որպես թելադրվող ցուցանիշ «վերցնում» են: Կանխակալ կարծիքի հրապարակման էությունը, որը շահարկվում է շատ կոպտորեն, յուրատեսակ ուղերձ է՝ «տեսեք, շատերը սա են մտածում եւ պետք է այսպես անել, որն ընդունելին ու ճիշտն է»: Այս մտածելակերպը դեռ գործող եւ ազդեցիկ է լայն ու պասիվ զանգվածների համար[4]: Ամբողջատիրական, ավտորիտար մտածողության հետեւանքով քաղաքական ընտրախավի՝ թե իշխանության, թե ընդդիմության, որդեգրած ուղին է՝ «դուք գնացեք տուն, մենք մտածում ենք, բանակցում ենք»[5]:

Զանգվածին թելադրելու մեխանիզմերի ու առանձնահատկությունների մասին գիտենք, իսկ եթե առանձնացնենք մարդուն, ապա այսօր նա «սպիտակ ագռավ» լինելու համարձակություն չունի եւ չի կարող ունենալ: Քանի որ մարդն իր թիկունքում անպաշտպան է, գիտակցում է, որ օրենքը իշխանություններն են: Հասուն քաղաքացին՝ դա պատասխանատվություն կրող մարդն ու քաղաքացին է: Հատկանշական է, որ նա երբեք չի **խրախուսվել** տարիներ ի վեր ինքնուրույն որոշում կայացնելու եւ պատասխանատվություն ունենալու, դիմելու իր իրավունքների ոտնահարման համար եւ կրելու որոշակի պատասխանատվություն:

Դրա համար այսօր՝

ա/ Հասարակությունը չի ձեւակերպում իր խնդիրները, քանի որ որպես այդպիսին ոչ միայն ընդհանուր որակ չի ներկայացնում, այլեւ տարբեր են հասարակության մեջ խմբային շահերը, ինչպես նաեւ հասարակությունը

սովոր չէ ինքն իր խնդիրներն օրակարգ հանել: Սա եւս ավտորիտար մտածողության հետեւանք-արդյունք է:

բ/ **«Բայց ով է որոշել՝ այլընտրանքը բացակայո՞ւմ է, թե՝ ոչ: Քաղաքական այլընտրանքը գալիս է քաղաքական պատկերացումներից»**[6]: Ինչու մարդիկ այլընտրանք չեն տեսնում, քանի որ իրենց պատկերացումներում տեղավորվում է քաղաքական այրի այն կերպարը, որը հոր կուռքի հետ է ասոցացվում: Քաղաքական պատկերացումները բավականաչափ աղքատիկ եւ սահմանափակ են՝ կառավարման եղած ոճից դուրս կերպար, այլընտրանք տեսնելու համար: Այսպիսով՝ կարող ենք ասել, որ այլընտրանքի դեպքում էլ ժողովրդի համար այլընտրանք հասկացվում եւ ընկալվում է նույն ավտորիտար, գուցե ուժային, առաջնորդային տեսակը, որն ինչպես վերում ասվեց, իշխանության մյուս ծայրն է:

4. Քաղաքացիական հասարակության ակտիվ մեծամասնությունը եւս ավտորիտար գիտակցության կրող է:

Խորհրդային մտածողություն՝ ավտորիտար, տոտալիտար.

Խորհրդային մտածողություն եզրույթն արդեն իսկ առասպելված է: Տարբեր վերլուծաբաններ, որպես բացասական հատկանիշ, հղում են անում այս մտածողությանը, առանց դիտարկելու իրենց վերլուծության մեջ նույն երկակի չափանիշները: Այսինքն՝ հղում են, որ այլակարծություն չկար, մի գաղափար էր եւ մի գաղափարի հետեւորդներ էին, իսկ իրենք անընդունելի կամ գանահարության են արժանացնում այն բոլոր կարծիքները եւ մարդկանց, որոնք այս կամ այն կերպ հակադրվում են իրենց մտքերին ու գաղափարներին, նույնիսկ պատկերացումներին: Նման փայլուն օրինակ է DYI ակումբի պայթյունից հետո հասարակության քննարկումները՝ տարբեր ոլորտներից. պահպանողականներից, ազգայնականներից մինչեւ ազատական՝բոլորը այդ երկակի ստանդարտների զոհն էին: Հարց է առաջանում. Հայաստանի ամենաազատական զանգվածը ճիշտ կրում է տոտալիտար մտածողության առանձնահատկությունները: Պարզվում է՝ այո: Ոչ ամբողջապես, սակայն նաեւ ոչ փոքրամասնությունը:

Այսպես՝ պայքարը խոսքի ազատության, մարդու իրավունքների ազատության վերաբերյալ էր, որը շրջանառվում էր որպես «դեմ» կամ «կողմ» միասեռականությանը: Արդեն իսկ հարցի ձեւն աղավաղվեց: Մի շարք ակտիվիստներ, մտավորականներ հույս ունեին, որ այս խնդրի շուրջ ծագած աղմուկն ու անհանգստությունը հնարավոր է փոխանցել ընդհանուր ըմբոստության եւ իշխա-

նության դեմ պայքարի, քանզի ընդդիմությունը չկարողացավ այն անել: Բայց դրսեւորվեց այլ թերություն՝ այս ոլորտում էլ ամբողջատիրական մոտեցումներ արտահայտվեցին: Գուցե ոչ բոլորի, բայց մի մաս «պայքարողների» կողմից յուրայինների եւ օտարների տարաբաժանում կատարվեց՝ չհասցնելով ըմբոստությունն ընդհանուր մի ճակատի գաղափարին: Ուշագրավ միտումներ կային տարբեր ճամբարներում. ՀԱԿ-ի առավել ծանոթ ու հայտնի՝ ով մեզ հետ չէ, նա տականք է եւ այլ գծապատկերով: Պայքարն այնքան էր կաղապարվում, որ ենթատեքստում գրեթե նման մի բան կար՝ ով մեզ հետ չէ, նա ֆաշիստ է, մյուսը, ով մեզ հետ չէ, նա հոմոսեքսուալ է: Նման անառողջ եւ մենաշնորհային մտածելակերպով ՀԱԿ-ը փլուզվում էր կամ փլուզվեց: Մտավորականները, որոնք որոշակի պայքարի հույս էին այստեղ տեսնում, ինքնախաբված էին, քանզի ի սկզբանե տանուլ տված պայքար էր, որը կարող էր թեքվել եւ շատ սուր բնույթ ստանալ հասարակության ներսում: Ամբողջատիրական եւ ավտորիտար մտածողության դրսեւորմամբ ազատականները կոնկրետ առանձնացրին ֆաշիստ ու հակաֆաշիստ կողմերը: Վերլուծությամբ տեսնում ենք ազատության համար պայքարողի անազատությունն ու կարծրատիպացվածությունը, երկրորդ, մյուս կողմը՝ ֆաշիստ անվանված, եւս քաղաքացիական հասարակության մի մասը կազմող մարդիկ են, որոնք անհանդուրժողական են մյուսի ազատության, կյանքի, կյանքի կազմակերպման եւ նախասիրությունների նկատմամբ:

Դիտարկենք այսպես, երբ հակաֆաշիստը (բառն արդեն իսկ իր մեջ ագրեսիա է պարունակում, ֆաշիզմի դեմ պայքարողը չպետք է ներառեր ֆաշիստ արմատն իր բնութագրման միջեւ գումարած «հակա» կրկին ավելի շատ բացասական երանգ պարունակող նախածանցը) հարձակողական ոճով դիմացինին պիտակում է ֆաշիստ՝ սա մեկ: Երեւույթի մեջ էլ արդեն իսկ ագրեսիա կա, մեկին պիտակում է որպես x եւ իրեն կոնկրետ հակադրում է՝ որպես հակա-x: Ուրեմն, ինչո՞ւմն է բողոքի էությունը. ուզում է կարծրատիպ կոտրել, իսկ ստացվում է, որ առաջարկում է եւս երկուսը՝ ֆաշիստ եւ հակաֆաշիստ կարծրատիպերը: Երկրորդ՝ հանդուրժողականության կոչ է անում, բայց անհանդուրժողաբար եւ շատ լրջորեն բաժանում՝ «մենք» ու «դուք»-ի: Երրորդ՝ ընդդիմադիրները, թերեւս, այս թեման վարչախմբի դեմ պայքարի կարեւոր տեքստ էին համարում, սակայն չնկատելով, որ իրենց պայքարը չի հասնում ճշգրտորեն դեպի վարչախումբը, այլ շատ հեշտությամբ, շեշտադրումը փոխելով՝ ոտքի էին հանում պահպանողական երիտասարդների:

Այսպիսի կարծրատիպային մտածողության եւ վարքագծի կրողները շատ դժվար են «գիտակցում» (awareness), որ իրենց ընկալման սահմաններից եւ

ընդունված հայեցակետերից դուրս գոյություն ունեն այլ կերպ մտածող մարդիկ, վարքի այլ ձեւեր: Այդպիսի անձը հիմնականում չի կասկածում իր արարքի ճշմարտացիությանը եւ իր ցանկացած գործողություն «այնքան բնական եւ այնքան համապատասխան, համահունչ է», որ երբեմն բնավորության առանձնահատկություններից ելնելով՝ գրեթե ակամա է գործում, կարծելով, որ շատ բնական հակազդեցություն է տվել: Մարդու ազատության դարաշրջանում դեռ շատ ոլորտներում եւ հարցերում չենք զգում անազատության աստիճանն ու կաշկանդվածությունը, ճիշտ հակազդումներ տալն ու առհասարակ հակազդելու անհրաժեշտությունը, այն մտածողության վերհանումը, որն արգասիք է տոտալիտար եւ բռնատիրական կառավարման համակարգերի տիրապետության:

Օրենքները գնում են, սովորույթները՝ մնում: Սովորույթները մնում են եւ դառնում բնավորություն, բնավորությունը քարացել է եւ «ժառանգաբար» փոխանցվում է յուրաքանչյուր հաջորդ սերնդի: Այս ամենը շատ հեշտ է «աշխատում», քանի որ հիմնական նպաստող եւ իրականացվող մեխանիզմ կա հիմքում, այն է՝ հոգեկանի իներցիան՝ քաղաքական ընկալման, քաղաքական հույզերի ու քաղաքական վարքագծի իներցիան:

Վերջաբան

Ըստ Ցիցերոնի՝ «Ստրուկը երազում է ոչ թե ազատության, այլ ստրուկներ ունենալու մասին», միգուցե, այն պատճառով, որ չգիտի՝ ինչ է ազատությունը, բայց գիտի ինչ-ով է ստրուկը...

Այժմ կարեւոր է «թագավոր-ստրուկ» հոգեբանությունը հաղթահարելը. այդ հոգեբանությամբ է հասարակությունն այսօր քաղաքական այրերի մասին պատկերացումներ կազմում: Այս հոգեբանությամբ, քաղաքական դաշտի մասին պատկերացումներով, չափանիշներով է հասարակությունը «խաղարկային» կերպարներ ընտրում, քանի որ իր մտածողության մեջ դեռ գերակշռում են՝«մեր մասին կմտածի», «մեզ համար կանի», «ի վիճակի է այս կամ այն բանում օգնել»[7]: Սա ավտորիտար համակարգի, վարչակարգի դաստիարակած մտածողության ձեւն է եւ հասարակությունը դեռ այլ «տեսակ» կերպարներ չի տեսնում, քան խարիզմայով առաջնորդներ, որոնք իրենց «գործունեությամբ» մարդկանց հոգեբանորեն կախվածության մեջ են գցում:

Նման մտածողության առանձնահատկություններով հասարակությամբ, ժողովրդով, մենք ունենք այն, ինչ ունենք, եւ կունենանք ավելին, եթե յուրաքանչյուր գիտակից էակ չփորձի կյանքում պատասխանատվություն վերցնել իր վրա, զգալ

իրավունակությունը եւ նույնը տեսնել դիմացինի մեջ: Սա մասնավորից դեպի մեծ քայլն է, դեպի մեծ քաղաքականություն, որտեղ թելադրվող նորմերի փոխարեն ընտրության հնարավորություն է տրված: Հասկանալի է, որ խորհրդային կենսակերպին սովոր շատերն իրենց անդամալույծ զգացին ԽՍՀՄ փլուզումից հետո. նոր կյանքում ինքնուրույն որոշումներ կայացնելու անհրաժեշտություն կար, նախաձեռնողականություն եւ քիչ ավելի սուր երեւակայություն, պատասխանատվության զգացում, որոնք «սառեցվել» էին գաղափարախոսական կառույցի տիրապետման տարիներին: Սակայն անկախությունը, ըստ երեւույթին, «բացեց» մարդու միայն մի քանի շերտ եւ պահպանեց սովորության համաձայն ապրած կյանքի մեխանիզմները. ավելի համարձակները թվացյալ իրավունակությունը գործածելիս՝ հանդիպեցին պատնեշի: Այսօրվա մարտահրավեր են՝ անպատժելիից պատժելի դարձնելը, իրավունակության գիտակցումը մյուսների կողմից, հասարակական կարծրատիպերի քանդումը, ինչպես նաեւ խորհրդային վերնախավի անպատժելիության գաղափարի ոչնչացումը:

Մտավորականները, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, ընդդիմությունը պետք է մտածեն եւ գտնեն հասարակության ոչ թե պառակտման, այլ ձուլման եզրերը:

ՀՂՈՒՄՆԵՐ

1 Լինց Խուան, Ալֆրեդ Ստեփան, Ժողովրդավարությանն անցնելու եւ ժողովրդավարության կայացման խնդիրները Հարավային Եվրոպա, Հարավային Ամերիկա եւ հետկոմունիստական Եվրոպա, Երեւան 2011, էջ 492

2 Ольшанский Д., Политическая психология, Питер 2002, стр. 85

3 Фрейд З. Психоаналитические этюды, Психология масс и анализ человеческого Я, стр. 440-441

4 Երկրի վիճակից դժգոհ են, բայց կընտրեին Սերժ Սարգսյանին. Gallup International Association http://tert.am/am/news/2012/11/02/gallup

5 ՀԱԿ հանրահավաքներում հնչած կոչերից

6 *Մանվել Սարգսյան,* http://www.lragir.am/index.php/arm/0/interview/view/73276

7 «ի վիճակի է այս կամ այն բանում օգնել» - Հայաստանյան դժվար այն տարիներց հետո /երկրաշարժ, Արցախյան պատերազմ/ մարդկանց մեջ ավելացավ մի այլ մոտեցում-չափանիշ, որը որոշ զանգվածի բնավորությունը դարձավ:

АРМИНЕ КАЗАРЯН

Последствия тоталитарного и авторитарного мышления в армянском общественно-политическом поле

В течение пяти лет, как основное крыло оппозиции, так и другие оппозиционные силы, а также активная гражданская общественность, выступая против президента, правящего режима, все равно не смогли изменить ситуацию. Более того, в данный момент система со своим кандидатом является очень серьезным соперником “всего общества”. Почему всего общества? Пожалуй, рассматриваемая мною гипотеза заключается именно в этом: царящая в Армении ситуация, стиль и сущность управления, избранный президент (не важно с фальсификациями или нет), качество оппозиции и, естественно, укрепившиеся в жизни народа определенные закономерности являются последствиями не только стиля авторитарного правления, но также следствием авторитарного мышления людей.

ARMINE GHAZARYAN

The Impact of Totalitarian and Authoritarian Thinking on Armenia’s Socio-Political Domain

Over the course of five years, though both the main wing of the opposition and other opposition forces along with the active civil society were against the President and the incumbent regime, they were unable to change the situation. Moreover, at the moment, the system with its candidate is a very serious opponent of the “society as a whole.” Why the society as a whole? The author puts forward the following hypothesis: the situation that predominates in Armenia, the style and content of governance, the elected President (regardless through falsified poll or not), the quality of the opposition, and some social regularities resulted not only from the style of the authoritarian rule but also from the authoritarian thinking of the people.

Հայաստանյան կուսակցական համակարգի «կարտելացումը»

ՎԱՐԴԱՆ ՁԱԼՈՅԱՆ

Արվեստի քննադատ, Արվեստի քննադատների միջազգային ընկերակցության անդամ: Դասավանդում է մշակութաբանություն, մամուլում հանդես է գալիս քաղաքագիտական վերլուծություններով: Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի շրջանավարտ է:

Բազմակուսակցական համակարգը ժողովրդավարության անբաժանելի մասն է: Բայց Հայաստանում հաճախ կարելի է լսել դատողություններ այն մասին, որ կուսակցությունները ներկայացնում են որոշակի խմբերի նեղ շահերը, իսկ «ազգային շահը» մնում է անտեսված: Մյուս կողմից՝ եթե ազգ ասելով հասկանում ենք ազգ-պետությունը, ապա կուսակցությունների կողմից սոցիալական որոշ խմբերի շահերի ներկայացումը ոչ թե թերություն է, այլ՝ առավելություն[1]: Չէ՞ որ հայտնի փաստ է, որ կուսակցությունները՝ մրցակցելով իրար հետ, սպառում են քաղաքական էներգիան եւ դադարում վտանգ ներկայացնել ազգ-պետության համար: Հակառակ դեպքում, երբ չկա քաղաքական մրցակցություն, որեւէ խմբի կուսակցությունը զավթում է պետությունը եւ ենթարկում իր խմբային շահերին: Այսպիսով՝ Հայաստանում իշխող են կուսակցությունների եւ կուսակցական ժողովրդավարական մրցակցության մասին բացառիկ անհեթեթ եւ վնասակար պատկերացումները: Այս հոդվածը մի առաջին փորձ է՝ հստակություն մտցնելու կուսակցական համակարգերի եւ կուսակցական մրցակցության համընդհանուր ժամանակակից դեգեներացիայի ընթացքի մասին:

Արեւմուտքում կուսակցական մրցակցության մոտ երկու հարյուրամյակը ձեւավորել է կատարյալ կուսակցության որոշակի ստերեոտիպ: Կատարյալ կուսակցությանը ներկայացվող առաջին պահանջն այն է, որ քաղաքական կուսակցությունը պետք է մաս կազմի ընտրական համակարգին, այսինքն՝ մրցակցի այլ կուսակցությունների հետ հանրային կարծիքի ոլորտում: Մի կողմից՝ սա նշանակում է, որ կուսակցությունը պետք է այնքան լայն եւ կայուն ընտրազանգված ունենա, որ մրցակցող խմբերը չկարողանան նրան դուրս մղել քաղաքական ասպարեզից, մյուս կողմից՝ նա պետք է դա անի՝ չխախտելով քաղաքական, այսինքն՝

ընտրական կանոնները: Իհարկե, միշտ էլ կան բազմաթիվ կուսակցություններ, որոնք էլեկտորալ ձգտումներ չունեն, քանզի հակահամակարգային են, իմա՝ աջ եւ ձախ ծայրահեղական կուսակցությունները, որոնք փորձում են սահմանել մրցակցության կամ մենաշնորհի նոր կանոններ: Որքան էլ ապակառուցողական թվա նրանց գործունեությունը, ակնհայտ է, որ իրենց գաղափարներով նրանք կարեւոր ազդակներ են տալիս եւ, կարծում եմ, եւս պետք է ներկայացված լինեն քաղաքական դաշտում:

Երկրորդ՝ կուսակցությունը պետք է լինի կայուն, եւ դժվարությունների դեպքում բացառվի «առնետավազքը»: Եվ երրորդ՝ կուսակցությունը պետք է ունենա հստակ գաղափարական ինքնություն: Դա նշանակում է, որ, օրինակ, նա չի կարող մաս կազմել նեոլիբերալ քաղաքականություն վարող քաղաքական կոալիցիային եւ ապա, մի քանի տարի անց, հայտարարել սոցիալիստական շարժմանն իր նվիրվածության մասին: Կամ՝ սկսել որպես ժողովրդավարական շարժում, ապա հայտարարել, որ այլեւս նա աջ լիբերալ քաղաքականության կրող է:

Վերոհիշյալ դիտարկումները ցույց են տալիս, որ կատարյալ կուսակցության մոդելին հայաստանյան եւ ոչ մի կուսակցություն մոտավոր իսկ նմանություն չունի: Այստեղից հարց է առաջանում. Ինչ կարելի է այդ քաղաքական խմբերին քաղաքական կուսակցություններ անվանել: Դասական առումով՝ անշուշտ, ոչ:

Սովորաբար, խոսելով կուսակցությունների մասին, առաջին հերթին վերլուծաբանները (իսկ նրանք կամ լիբերալներ են, կամ՝ պահպանողական լիբերալներ) ուշադրություն են դարձնում կուսակցության գաղափարախոսությանը: Եթե հետադարձ հայացք ենք նետում ետխորհրդային Հայաստանի գաղափարախոսական պատմության վրա, ապա մտածողական ակտիվություն նկատում ենք հիմականում 90-ականների առաջին կեսին, որ առաջին հերթին արտահայտվեց տարաբնույթ քաղաքական ակումբների ակտիվության միջոցով: Դա բնական է թվում. կոմունիստական գաղափարախոսության տապալումից հետո գաղափարախոսական այլընտրանքների փնտրտուքը պետք է գար լրացնելու առաջացած վակուումը: Բայց նույն հետահայացի տեսանկյունից դա անհույս ձեռնարկում էր, քանզի եկել էր ոչ միայն ապագաղափարականացման, այլ նաեւ՝ ապաքաղաքականացման դարաշրջանը: Բայց քաղաքական ակումբները կարեւոր ինչոր բան արել են. մատակարարել են քաղաքական ձեռնարկատերերին որոշակի լեզվական կլիշեներ: Այսինքն՝ հետխորհրդային իրավիճակում քաղաքական գաղափարից պահանջվում էր ոչ այնքան արդյունավետություն եւ գործնական նշանակություն, որքան «գեղեցկություն». այն հրապուրիչ պետք է լիներ՝ շփոթված, կողմնորոշումը կորցրած բնակչությանը ընտրական գործընթացում ներգրավե-

լու համար: Որպես օրինակ բերեմ Ա.Դուգինի նեոֆաշիստական գաղափարները[2]: Նրանք Հայաստանում տարածում ստացան ոչ թե իրենց բովանդակության, այլ էկզոտիկ ձեւի եւ գեղագիտական «փաթեթավորման» շնորհիվ:

Քաղաքական ակումբների եւ գաղափարախոսության փնտրտուքի հաջորդ ալիքը տեսնում ենք վերջին տարիներին, որ կարելի է համարել հայաստանյան «մեկ ու մի քիչ» քաղաքական համակարգի ճգնաժամի արտահայտություն: Ի՞նչ է «մեկ ու մի քիչ» քաղաքական համակարգը: Առավել հայտնի են «բազմակուսակցական», «երկկուսակցական» եւ «մեկուկեսական» քաղաքական համակարգերը: «Մեկ ու մի քիչ» քաղաքական համակարգը, ինչպես հուշում է նրա թվային արտահայտությունը, առավել մոտ է «մեկուկեսանոց» համակարգին: Վերջինս, իմ սահմանմամբ, այն համակարգն է, որտեղ իշխող կուսակցությունը կանոնավոր կերպով հաղթում է ընտրություններում, սակայն գոյություն ունի կայուն, հստակ գաղափարական ինքնություն ունեցող ընդդիմություն, որն իրապես մրցակցում է իշխող կուսակցության հետ: «Մեկ ու մի քիչ» համակարգում ընդդիմությունը կայուն չէ, չունի հստակ գաղափարական ինքնություն եւ այդ պատճառով, թերեւս ունենալով կայուն միջուկ, հիմնականում կառավարվում է պատեհապաշտական քաղաքական առաջնորդներով եւ անկայուն կադրերով:

Թերեւս, հասկանալու համար հայաստանյան կուսակցական համակարգի առանձնահատկությունները, հարկ է դիմել համեմատական մեթոդին: Համեմատության համար, ակնհայտորեն, պետք է վերցնել եվրոպական կուսակցական համակարգը, եւ, իհարկե, Ռուսաստանը:

19-րդ դարի եվրոպական կուսակցությունները էլիտար էին, ինչը հիմնականում պայմանավորված էր նեղ ընտրական բազայով. ընտրություններին մասնակցում էր միջին եւ բարձր խավը, իսկ բանվորները, կանայք եւ էլի բազմաքանակ խմբեր զրկված էին ընտրելու իրավունքից: Մորիս Դյուվերժեն[3] այս տիպի կուսակցությունները անվանում է «կադրային»: Կադրային կուսակցությունները ներկայացնում էին փոխզիջում արիստոկրատիայի եւ խոշոր բուրժուազիայի միջեւ:

Կադրային կուսակցությունները, ըստ Մ. Դյուվերժեի, «լավագույնների՝ նոտաբլների միավորումն» է, որը նպատակ ունի նախապատրաստել եւ անցկացնել ընտրություններ՝ հետագայում պահպանելով կապը ընտրյալների հետ: Նա տարբերակում է «նոտաբլների» մի քանի խումբ: Առաջինն այն հայտնի մարդիկ են, ովքեր իրենց հեղինակությամբ գերազանցում են թեկնածուի հեղինակությունը եւ դրա շնորհիվ մեծացնում վերջինս նկատմամբ վստահությունը: Հայաստանում սովորաբար դրանք նոմենկլատուրային մտավորականության ներկայացուցիչ-

ներն են: Հաջորդ խումբը կազմված է կազմակերպչական տաղանդ ունեցող «նոտաբլներից», եւ երրորդը ընտրարշավը ֆինանսավորողներն են: Հայաստանում երկրորդ խմբի մեջ սովորաբար մտնում են հեղինակություն ունեցող նախկին քաղաքական գործիչները: «Կադրային կուսակցություններն» ակտիվ են միայն նախընտրական շրջանում, ընտրությունների միջեւ նրանք պասիվ են:

Հաջորդ փուլում՝ պայմանավորված ընտրական իրավունքի ընդարձակմամբ, ձեւավորվում են սոցիալիստական կամ սոցիալ-դեմոկրատական զանգվածային կուսակցություններ կամ, ընդհանրապես, ժողովրդական լայն զանգվածների վրա կողմնորոշված կուսակցություններ: Զանգվածային կուսակցությունները Մորիս Դյուվերժեն համարում է ամենաօրինակելի տիպի կուսակցությունները, քանզի նրանք ապահովում են առավել ուժեղ կապ ընտրազանգվածի հետ, ունեն գաղափարախոսական հստակ պլատֆորմ եւ կողմնորոշված են սոցիալական որոշակի զանգվածի վրա: Զանգվածային կուսակցություն ստեղծելու փորձ կատարեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը 2007թ. խորհրդարանական ընտրությունների նախօրեին, կամ ՀԱԿ-ը 2008թ. նախագահական ընտրություններից հետո, եւ այլն: Սակայն Վ.Չեռնոմիրդինի մի դիպուկ արտահայտությամբ՝ «ինչ կուսակցություն էլ որ չի հիմնվում, ի վերջո ստացվում է ԽՄԿԿ», այսինքն՝ որոշումները կայացվում են «պոլիտբյուրոյի» նեղ շրջանակներում:

Արեւմտյան կուսակցական համակարգը հետագա զարգացումը ստացավ հետպատերազմյան շրջանում՝ պայմանավորված աշխատանքի եւ կապիտալի միջեւ համաձայնության կայացմամբ, որի արտահայտությունը եղավ սոցիալական պետությունը եւ սպառողական հասարակությունը: 1966թ. Օտտո Կիրկհայմերը Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության օրինակով ցույց տվեց, որ զանգվածային կուսակցություններն այլեւս չեն կարող մնալ եզակի գաղափարախոսական պլատֆորմի վրա եւ ստիպված են դառնալ «համընդգրկուն»՝ «catch-all party» կուսակցություններ, բառացի՝ «բռնիր բոլորին»[4]: Դրանց անվանում են նաեւ էլեկտորալ կուսակցություններ, քանզի նրանց հիմնական մղումը առավել շատ ձայներ հավաքելն է: Ակնհայտ է, որ հայաստանյան կուսակցությունները հենց այս տիպի են՝ գաղափարազուրկ: Բայց ոչ միայն:

Խորհրդային Միության փլուզումից հետո հասարակության սոցիալական հստակ կառուցվածքը խախտվեց, եւ համարյա բոլոր սոցիալական խմբերը մարգինալացվեցին: Չնայած հիմա հստակ երեւում են սոցիալական նոր խմբերի ուրվագծերը՝ մենատնտես գյուղացիներ, վարձու աշխատողներ, մանր, միջին եւ խոշոր բիզնես եւ այլն, բայց դրանք սոցիալական խմբեր են միայն անվանապես: Ընդհանուր սոցիալական եւ տնտեսական կեցությունը չի հանգեցրել ընդհանուր

շահերի շուրջ համախմբման, չի վերածել «իր մեջ դասակարգը» «իր համար դասակարգի», եթե խոսենք մարքսիստական եզրույթներով:

Ինչ հետեւանքների հանգեցրեց «համընդգրկուն» կուսակցությունների առաջացումը Արեւմուտքում: Կուսակցությունները կորցրին իրենց հստակ սոցիալական հիմքը, բայց հնարավորություն ստացան պայքարելու «չկողմորոշված» ընտրողի համար: Կուսակցությունները դադարեցին պայքարել անդամների թվի ավելացման համար, քանզի նրանց արդեն հետաքրքրում է ընտրողների պոտենցիալ թիվը, եւ նրանք համապատասխանաբար պայքարում են ոչ թե նրանց «ուղեղի», այլ «սրտի», այսինքն՝ առավելագույն գրավչության համար:

Ընտրական գործընթացի ժամանակ կտրուկ աճում է ԶԼՄ-ների, հատկապես հեռուստատեսության նշանակությունը: Հեռուստատեսության ազդեցությունը մասնավորապես կայացավ նրանում, որ աճեց առաջնորդների դերը: Առաջնորդը ընտրողների հետ կապը սկսում է պահել հեռուստատեսության, այլ ոչ թե կուսակցական ակտիվիստների եւ անդամների միջոցով: Իսկ դա նշանակում է, որ նվազում է առաջնորդի ուղերձի գաղափարական մասը եւ աճում է նրա իմիջի դերը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կարեւորության աճի հետ աճում է նաեւ համապատասխան մասնագետների դերը, օրինակ՝ առաջնորդի մամլո խոսնակինը: Այս ամենը հանգեցնում է նրան, որ նվազում է կուսակցության շարքային անդամների, այդ թվում՝ նույնիսկ ակտիվիստների նշանակությունը, եւ աճում է ղեկավարների դերը: Պետությունը եւս աջակցում է կուսակցությունների ԶԼՄ-ականացմանը՝ երաշխավորելով խորհրդարանական կուսակցությունների համար հեռուստատեսության, ռադիոյի եւ այլ միջոցների մատչելիությունը: Այսպիսով՝ հեռուստատեսությունը նպաստում է, որ զանգվածային, անդամության եւ անդամվճարների վրա հիմված կուսակցությունները հետընթաց ապրեն, այլափոխվեն «կադրային» տիպի կուսակցությունների, որտեղ նոր «նոտաբլները» քաղաքական հեռուստաաստղերն են:

Կուսակցական համակարգի վերափոխման համար կարեւոր նշանակություն ունեցավ նաեւ այն փաստը, որ եվրոպական երկրներում պետությունը սկսում է ֆինանսավորել կուսակցություններին: Դա նշանակում է, որ կուսակցություններ-ի կախվածությունը հասարակությունից նվազում է, նվազում է նաեւ կուսակցությունների շահերի պաշտպանության մեջ շահագրգռվածությունը: Ավելին՝ ընտրվելուց հետո, հատկապես իշխող կուսակցության համար, հիմական հետաքրքրությունը կենտրոնանում է բյուջետային միջոցների վերաբաշխման վրա: Հայաստանում պետությունը եւս ֆինանսավորում է կուսակցություններին, իսկ կուսակցություն-հասարակություն (քաղաքացիական հասարակություն) կա-

պը նվազագույնն է: Իշխող կուսակցությանն ընդհանրապես չեն հետաքրքրում ընտրողների շահերը, այն եւս խիստ շահագրգռված է բյուջետային միջոցները հօգուտ կուսակցական վերնախավի վերաբաշխման մեջ, բայց Հայաստանում ավելի կարեւոր են կոռուպցիոն կամ գանձագողության հնարավորությունները: Այսինքն՝ որոշակի ձեւական նմանությունների առկայությամբ հանդերձ, կան սկզբունքային տարբերություններ, որոնք հայաստանյան կուսակցությունները վերածում են այլ տիպի երեւույթի:

Հարկ է նշել, որ նույն Օ.Կիրկհայմերը նկատեց եւս մեկ վճռական միտում. Արեւմուտքում «համընդգրկուն» կուսակցությունները 70-ականներին սկսեցին սերտաճել պետության հետ: Այս միտումը Ռիչարդ Կացը եւ Պիտեր Մեյրը 1995թ.-ին հայեցակարգայինի ձեւակերպեցին «կարտելային կուսակցությունների» տեսության մեջ[5]:

90-ականներին աշխարհում տեղի ունեցան նշանակալի փոփոխություններ, որոնք իրենց ազդեցությունը թողեցին նաեւ արեւմտյան կուսակցական համակարգի վրա: Ամենակարեւորը գլոբալացումն էր, որ խիստ սահմանափակեց պետության տնտեսական քաղաքականության հնարավորությունները: Մասնավորապես պետությունների զգալի մասը ստիպված էր ենթարկվել ֆինանսավորեցման եւ մասնավորեցման պահանջներին՝ «վաշինգթոնյան կոնսենսուս»: Պակաս կարեւոր չէր Բեռլինյան պատի անկումը, ինչը նշանակում էր ձախ շարժման, սոցիալիստական կուսակցությունների գաղափարական ճգնաժամի խորացում, որի հետեւանքներից մեկն էլ եղավ գաղափարախոսական հակամարտության թուլացումը: Մյուս էական իրադարձություններից նշենք 1992թ. Մաաստիխյան պայմանագրի կնքումը եւ 1995թ. Առեւտրի համաշխարհային կազմակերպության հիմնումը: Այս փոփոխությունների հանգեցրին նրան, որ Արեւմուտքի համար հիմնական քաղաքական խնդիրները՝ գործազրկությունը եւ արժեզրկումը դուրս եկան պետության հսկողությունից, իմա՝ քաղաքական որոշումների ոլորտից: Պատկերավոր ասած՝ քաղաքական նավը սկսեց նմանվել նավավար չունեցող նավակի, որտեղ միայն թիավարներ են, կառավարումը փոխարինվեց տեխնիկական մենեջմենթով:

Ավելի ուշ Ռ.Կացը եւ Պ.Մեյրը գրում են. «Այս երեք փոփոխությունները նպաստեցին հետագա ապաքաղաքականացմանը, հետեւաբար՝ եւ դա կարտելացման ամենակարեւոր փաստարկն է, կուսակցական համագործակցությունը եւ համաձայնությունը դարձրին շատ ավելի հեշտ զբաղմունք: Դավադրական համաձայնությունը, որը կարտելային կուսակցությունների տեսության կարեւոր տարրերից մեկն է, դառնում է շատ ավելի հեշտ մրցակցային դրույքների իջեցման ժա-

մանակ, որն իր հերթին, համենայն դեպս՝ մասնակիորեն, բացատրվում է միջազգային մակարդակի իրադարձություններով, որոնք չէին շոշափված նախնական հրապարակման մեջ»[6]:

Ի՞նչ է կարտելային կուսակցությունը: Ըստ Ռ.Կացի եւ Պ.Մեյրի, «կարտելային կուսակցությունը ինչպես կուսակցության եւ պետության փոխներթափանցմամբ, այնպես էլ միջկուսակցական դավադիր համաձայնությամբ բնութագրվող ենթադրյալ տիպ է, որն առաջանում է ժողովրդավարական երկրներում: Կարտելային կուսակցությունների զարգացմամբ քաղաքական ծրագրերը դառնում են ինքնանպատակ՝ մասնագիտական, տեխնոկրատական ու միջկուսակցական մրցակցության իրական մասնակիցները կենտրոնանում են պետության գործոն եւ արդյունավետ կառավարման վրա: Կարտելային կուսակցությունների տարբերությունն ավելի ու ավելի քիչ է արձանագրվում քաղաքական ուղեգծերի, ծրագրերի տարբերության վրա եւ, համաձայն Բեռնար Մանենի աուդիտորային ժողովրդավարության գաղափարի, ավելի շատ՝ հանդիսանքի, գրավիչ պատկերի, թատրոնի առաջարկի վրա»[7]: Հայաստանում կուսակցությունները երբեք էլ գաղափարախոսական տարբերություններ չեն ունեցել. հիշենք «սոցիալիստական» ՀՅԴ-ին, որ քվեարկում էր նեոլիբերալ քաղաքականության համար, երբեք չեն ունեցել որեւէ քաղաքական ծրագիր, երբեք, բացի առանձին դրվագներից, կողմնորոշված չեն եղել ընտրազանգվածի վրա: Անշուշտ՝ հանդիսանքը կարեւոր դեր է խաղում հայաստանյան քաղաքական կյանքում. հիշենք Եվրատեսիլի շուրջ իրարանցումը, բայց այն էլ այժմ վճռական նշանակություն չունի: Պատճառը ակնհայտ է: Մրցակցության վերջին ոլորտը՝ «պետության գործոն եւ արդյունավետ կառավարումը» եւս բացառված է հայաստանյան քաղաքական կյանքից: Այն, որ քաղաքական կյանքը վերածվում է «թամաշայի», վկայում է նաեւ փաստը, որ նախընտրական միջոցառումներում «հանդիսականները» վազում են մի քաղաքական «թամաշայից» դեպի մյուսը՝ ձգտելով առավելագույն հաճույք ստանալ ընձեռված «ձրի» հնարավորություններից:

Բայց կարտելային տեսությունը եւս մեկ նրբերանգ ունի: Կարտելային կուսակցությունը, ինչպես արդեն նշվեց, ոչ միայն ապագաղափարականացված, այլ նաեւ ապաքաղաքականացված է: Նշվեց կարտելային կուսակցության եւ պետության սերտաճումը: Վերջինս նշանակում է, որ կարտելային կուսակցությանը մտահոգում են ոչ թե արդարությունը կամ քաղաքացիների բարեկեցությունը, ոչ թե գործազրկությունը, այլ՝ պետության վերահսկողության բացարձակությունը: Հայաստանում կարտելային բոլոր կուսակցությունները հոգ են տանում, որ պետական վերահսկողությունը դառնա տոտալ՝ ամենակարող, իսկ քաղաքացինե-

ը՝ առավել անզոր: Դա վերաբերում է ինչպես իշխող կարտելային կուսակցությանը, այնպես էլ ընդդիմադիր կուսակցություններին:

Հենց այս կետում է կարտելային կուսակցության տեսությունը ցուցաբերում իր բացատրական կարողությունը նաեւ Հայաստանի համար: Առաջին՝ այդ տեսությունը պարզաբանում է, որ կարտելային համաձայնության գնում են եսասիրական շահերից ելնելով, բայց դրանք արդարացնում են պետականության ամրապնդման փաստարկներով: Այսինքն՝ իշխանական կամ ընդդիմադիր կարտելային կուսակցությունն իր անազնիվ գործելակերպը արդարացնում է պետական շահերի հղումով, իսկ ընտրազանգվածները ներկայացնում որպես անսկզբունք խառնամբոխ:

Կարճ ասած՝ կարտելային կուսակցությունը շարժվում է հասարակության բեւեռից դեպի պետության բեւեռը: Մասնավորապես՝ արեւմտյան ժողովրդավարություններում 90-ականներից նկատվում է կուսակցական շարքերի նոսրացում: Եվ քանի որ բոլոր կուսակցությունների առաջնային կարգախոսը պետությունն է, նրանք սկսվում են նմանվել իրար: Դրա մասնավոր արտահայտությունն է, որ կարտելային կուսակցությունները հրաժարվում են պոպուլիզմից, իրենց առաջնորդների խոսքով՝ առաջարկում «իրատեսական» ծրագրեր: Նրանք «գործի» կուսակցություն են, որոնք «խնդիրներ» են լուծում: Այս առումով կարտելային կուսակցությունը կրկնում է պետական ապարատի գործառույթները: Այսինքն՝ պետապարատի ուժը աճում է բազմակի:

Որո՞նք են կարտելային կուսակցության շահերը: Ըստ Ռ.Կացի եւ Պ.Մեյրի, «Քանի որ կուսակցության առաջին դեմքը միավորում է կուսակցության ներկայացուցիչներին հանրային իշխանությունում, նրա սեփական շահերը դիտարկվում են որպես ողջ կուսակցության շահեր»: Եվս մեկ կարեւոր դիտողություն. «Բացի դրանից, չնայած կարող է թվալ, թե ոչ հանրային իշխանության կուսակցության շահերը բացարձակապես կենտրոնացած են ընտրական հաղթանակի վրա, մեր կարծիքով, նրանք նույնքան նշանակություն են տալիս նաեւ պարտության վնասներն առավելագույնս կրճատելու համար»[8]: Սա եւս մի պատճառ է միջկուսակցական դաշինքների կամ բաց կամ դավադրական համաձայնությունների համար:

Մյուս կարեւոր դիտարկումն այն է, որ նոր քաղաքական շարժումների, ուրեմն եւ նոր քաղաքական գաղափարների համար ճանապարհ հարթելը դարձել է խիստ դժվար: Բուլերը եւ համահեղինակները ցույց են տվել, որ «նոր կուսակցությունների համար այսօր ավելի դժվար է մուտք ունենալ քվեարկություններին, քան՝ 60-ականներին»[9]: Համապատասխանաբար՝ Հայաստանում այդ

առումով վճռական էին 2007թ. խորհրդարանական ընտրությունները, որտեղ տասնյակ քաղաքական կուսակցություններ ջախջախիչ պարտություն կրեցին: Դա նշանակում է, որ քաղաքական ընտրախավը դարձել է փակ ակումբ:

Ամփոփենք Ռ.Կացի եւ Պ.Մեյրի տեսության արդյունքները.

1. Պետության հետ սերտաճում՝ հանրային պաշտոններ ստանալու, կուսակցությունների պետական ֆինանսավորման աճի եւ պետական ՁԼՄ-ներ թափանցելու միջոցով:
2. Միակուսակցական մրցակցության թուլացում. կուսակցությունները, որոնք մտնում են «իշխանական կարտել», իրար հետ պայմանավորվում են պետական արտոնությունների բաշխման համար՝ դրանով իսկ արգելակելով «կարտելից» դուրս կուսակցությունների ազդեցության աճին:
3. Պետական պաշտոններ զբաղեցնող կուսակցականների ազդեցության աճ:
4. Քաղաքական գործունեության մեջ առաջնորդների եւ արհեստավարժների ազդեցության աճ:

«Կարտելային կուսակցության» տեսության մեջ նկատելի ներդրում ունի նաեւ Ռիկարդո Պելիցոն: Նա Գիֆիտիսի համալսարանի Կառավարման եւ հանրային քաղաքականության կենտրոնի աշխատակից է, իսկ 2002-2004թթ. եղել է նաեւ Համաշխարհային բանկի խորհրդատու: Նա 2008թ. հրատարակեց «Կարտելային կուսակցություններ եւ կարտելային քաղաքական համակարգ. Անպատասխանատու կուսակցական կառավարման զարգացումը» գիրքը[10]:

Ըստ նրա, կարտելային կուսակցության գործելակերպը օլիգոպոլիկ կորպորացիաների վարք է հիշեցնում: Վերը նշված աղավաղումների հետեւանքով քաղաքական շուկան մրցակցայինից վերածվում է օլիգոպոլիկ շուկայի[11]: Նա գրում է. «Միանգամայն կարելի է օգտագործել տնտեսական զուգահեռը. «կարտելային» կուսակցական համակարգը գործում է ինչպես օլիգոպոլիկ շուկա: Օլիգոպոլիկ շուկայի համար բնութագրական է մրցակցության բացակայությունը. մի քանի ընկերություններ վերահսկում են շուկայի մեծ մասը: Այդպիսի շուկաներում պահանջարկը չի որոշում ոչ գինը, ոչ առաջարկվող ապրանքի քանակը:

70-ականների կեսերից Արեւմուտքի կուսակցական համակարգերը սկսում են ավելի շատ օլիգոպոլիկ շուկա հիշեցնել: Կուսակցությունները կորցնում են իրենց կապը ընտրողների հետ: Ավելին՝ բազմաթիվ դեպքերում նրանք ոչ միայն դադարում են արձագանքել ընտրողների պահանջներին, այլեւ համաձայնության են գալիս՝ ձգտելով քաղաքական տարածության մեջ ամրագրել իրենց տիրապետությունը: Այս իմաստով նրանք շատ են նմանվում կարտելի անդամներին»[12]:

Ըստ Ռ.Պելիցոյի, հետազոտողները նշում են երեք պատճառ, թե ինչու է արեւմտյան կարտելային կուսակցության գործելակերպն օլիգոպոլիաների վարք հիշեցնում:

Այդ երեք տարբերակներն են.

1. սուբյեկտիվ՝ կապված կուսակցական ձեւերի պատմական փոփոխությունների հետ.
2. համակարգային՝ կապված գլոբալ տնտեսության փոփոխությունների հետ.
3. եւ սուբյեկտիվ-համակարգային, որոնք ներառում են երկու հիպոթեզների տարրերը[13]:

Որոշելու համար, թե որ տարբերակն ավելի մեծ բացատրական ուժ ունի, հեղինակը օգտագործում է վիճակագրությունը: Արդյունքում պարզվում է, որ առաջին տարբերակն ավելի մեծ բացատրական ուժ ունի, քան մյուս երկու տարբերակները: Համեմատական հետազոտությունները ցույց են տալիս, որ ընտրողների առաջարկությունների եւ քաղաքական առաջարկի միջեւ խզումն աճում է: Այստեղից նա դուրս է բերում պատասխանատու/անպատասխանատու կուսակցական կառավարման թեզը: Չնայած երեք տարբերակների միջեւ առկա տարբերությանը, նրանք բոլորը Արեւմուտքում աջ ծայրահեղական կուսակցությունների աճը միահամուռ կապում են կարտելացման հետ: Աջերի ակտիվացումը պայմանավորված է հենց պահանջարկի ու առաջարկի միջեւ վերը նշված խզումով, եւ իշխանության գալու՝ նրանց հնարավորությունները եւս աճում են[14]:

Անդրադառնալով հայաստանյան կուսակցական համակարգին՝ այն, իհարկե, կարելի է անվանել կարտելային: Ինչպես արտահայտվել է Մ.Աֆանասեւը ռուսաստանյան կուսակցությունների մասին. «Մեր կուսակցություններն աճում են վերեւից եւ արմատներով ձգվում վեր»[15]: Հայաստանյան կարտելային կուսակցությունները, իսկ բոլոր նշանակալի կուսակցություններն այդպիսին են, քանզի վերջին 10 տարվա ընթացքում այս կամ այն ձեւով կնքել են կարտելային համաձայնություն իշխող ուժի հետ, պարազիտային ագլոմերատներ են, որոնք կարող են գոյություն ունենալ, եթե օգտագործում են պետության կազմակերպչական, տնտեսական եւ այլ հնարավորությունները: Վերը հիշատակված Պիտեր Մեյրը գրում է. «Իրենք՝ կուսակցությունները, սկսում են իրենց պահել ոչ թե որպես որոշակի քաղաքականության կրողներ, այլ որպես իշխանության զավթման եւ պահպանման մեխանիզմներ: …Իշխանությունը դարձել է ոչ միայն նպատակ, այլ նաեւ գոյության իմաստ… Կուսակցությունները սկսեցին ստանալ պետական սուբսիդիաներ եւ օգտվել պետական կառուցվածքների հովանավորությունից:

Այդպես առաջացան քաղաքական դասակարգի կուսակցություններ, որը ես իմ հետազոտություններում անվանեցի «կարտելային կուսակցություններ»…Նրանց հիմնական առանձնահատկությունը իշխանական կառուցվածքներից դուրս գոյատեւման անհնարինությունն է: Կարտելային կուսակցությունները չեն կարող լինել խաղից դուրս, նրանք կարող են գոյատեւել, եթե իշխանություն ունեն»[16]:

Պիտեր Մեյրի այս հատվածի հիմնական միտքն այն է, որ կարտելային կուսակցությունները «քաղաքական դասակարգի» կուսակցություններ են: Թե ինչ է «քաղաքական դասակարգը» Հայաստանում՝ ես արդեն վերլուծել եմ մամուլի էջերում[17]: Որոշ բաներ հիշեցնելն ավելորդ չէ. «Քանի որ ապագաղափարականացում-ազատականացումը կոմունիստական-ստալինյան գաղափարախոսությանը զրկում էր լեգիտիմացման ուժից, կոմունիստական եւ կոմերիտական հրահանգիչները քաղաքական ազդեցություն ձեռք բերելու համար դիմում էին ազգայնական ռեսուրսին: Բավական ողորմելի էր նրանց մշակութային կապիտալը՝ Ռաֆֆի, Մուրացան, մի քիչ Սեւակ եւ այլք եւ, իհարկե, համագումարների որոշումների իմացություն: Այսինքն՝ ստացվում է ստալինականության եւ ազգայնականության բարբարոս խառնուրդ՝ **ձեւով սոցիալիստական, բովանդակությամբ՝ ազգային**: …Նրանց միակ տաղանդը ճոռոմ եւ անիմաստ ճառեր արտասանելն էր, խրատաբանության հակումը: Զարմանալի չէ, որ ուշխորհրդային հասարակության մեջ նրանք արհամարհված խումբ էին: Որպես ընդհանրացնող անվանում՝ ես կկիրառեի «քաղաքական դասակարգ» եզրը, նկատի ունենալով ամեն ինչը գաղափարականացնելու՝ նրանց մոլուցքը, մասնավորապես՝ «ազգային գաղափար» մոգոնելու հակումը: …

Կուսակցական շինարարության ժամանակ նրանք դարձան «քաղաքական շինանյութ»՝ հիմնականում համալրելով ՀՅԴ-ի, ԱԺՄ-ի եւ այլ պոպուլիստական կուսակցությունների շարքերը: Բացի մի քանի տասնյակ համոզված լիբերալներից, հրահանգիչների խավը մեծամասնություն էր նաեւ ՀՀՇ-ում: Հետագայում նրանց զգալի մասը «փափուկ» անցում կատարեց Հանրապետական կուսակցություն: Հայկական «քաղաքական դասակարգի» արատավոր գծերն ի հայտ եկան անկախ պետության կազմավորման առաջին իսկ օրերից: Հիմնականը դավաճանության մոլուցքն է, կողմնորոշումները փոխելու հակվածությունը, լրագրողական բառապաշարով՝ «առնետավազքը», բայց նաեւ՝ ագահությունը, եսասիրությունը, էգոիզմը, մտավոր եւ բարոյական սահմանափակությունը: Իշխանության գալով լիբերալ-դեմոկրատական կարգախոսներով, նրանք 1998-ին դավաճանեցին այդ գաղափարներին, իսկ 2003-ին սերտաճեցին քրեական խավի հետ: Իրենց գաղափարախոսության համար նրանք գտել են «պահպանողական»

քաղցրիկ բառը: Սա օրինաչափ է. հետխորհրդային տարածքում «պահպանողականներն» ամենուր «վերակազմյալ» ստալինականներ են»[18]: Այն, որ Հայաստանում կուսակցական համակարգն այլասերողները հենց «քաղաքական դասակարգն» է, համոզիչ կերպով համապատասխանում է Ռ.Պելիցոյի «սուբյեկտիվ» հիպոթեզի բացատրական առավելության դրույթին:

Հայաստանում տնտեսական համակարգը օլիգոպոլիկ է եւ ոչ մի պատահականություն չկա, որ քաղաքական համակարգը եւս վերաձեւվեց օլիգոպոլիկ համակարգի նմանությամբ:

Քաղաքագետ Մանվել Սարգսյանը՝ բնութագրելով միջկուսակցական հարաբերությունները, գրում է. «Եթե փորձենք թեզային հարթությունում նկարագրել կուսակցությունների գործողությունների բնույթը, ապա կհանգենք այդ գործողությունների ներքոհիշյալ բաղադրիչներին.

ա) արտաքին հովանավորների փնտրտուք.

բ) երկրի ներսում համախմբող գաղափարների փնտրտուք:

Կուսակցությունների գործողությունների այս երկու բաղկացուցիչները վարչակարգի հետ սակարկելու ռազմավարության պայմանների ձեւավորման միջոցներ են: Պայմանները կարելի է ձեւավորված համարել, եթե այս կամ այն կուսակցությունը կարողացել է վարչակարգի համար սպառնալիքներ առաջացնել կամ նրան հնարավոր ծառայություն մատուցել:

Վարչակարգին մատուցված ամենանշանակալի ծառայությունների թվին է դասվում մեկ կուսակցության պայքարը մյուսի դեմ: Եվ պատահական չէ, որ ընդդիմադիր կեցվածք ընդունած քաղաքական ուժերն ավելի շուտ պայքարում են իրար, քան երկրում գործող վարչակարգի դեմ: Համապետական ընտրությունների ժամանակաշրջանները վերածվում են այս կամ այն քաղաքական կուսակցության ռազմավարության ցուցադրության:

Այսպես՝ 2008թ. Հայաստանում գործող վարչակարգն իր համար ճգնաժամային իրավիճակը լուծեց երկու կուսակցությունների՝ Դաշնակցության եւ «Օրինաց երկրի» ծառայություններն ընդունելու միջոցով: Վերջիններս օգտագործեցին ընդդիմադիր թեկնածուի բարձրացրած դժգոհության ալիքը, որը միտված էր վարչակարգի հետ սակարկությանը, եւ դիմակայության վճռական պահին անցան իշխանական ճամբար: «Անբասիր» ծառայության դիմաց նրանք կառավարության մաս կազմեցին»[19]:

Բայց քաղաքական կարտելային համաձայնությունները (2003, 2007թթ. եւ հետո), որոնց ավելի ճիշտ կարելի է բնութագրել որպես դավադրություններ, չի կարելի համարել կամավոր համաձայնություններ «հանրային իշխանության»

կուսակցությունների կողմից: Դա հանրապետության նախագահի եւ գործադիր իշխանության կողմից հովանավորվող Հանրապետական կուսակցության կողմից բռնի ուժով պարտադրվող համաձայնություններ են, որտեղ չեն բացառվում ոչ միայն քաղաքական գործունեություն ծավալելու արգելքները, քրեական հալածանքները եւ քաղաքական հետապնդումները, այլ նաեւ՝ սպանությունները: Մի խոսքով՝ ահաբեկչական զինանոցի բոլոր հնարավոր եղանակները:

Ժամանակակից Հայաստանում կուսակցական համակարգի ձեւավորման համար էական նշանակություն ունեցավ 1999թ. հոկտեմբերի 27-ի սպանդը, որի հետեւանքով խորհրդարանը կորցրեց իր ազդեցությունը եւ նշանակությունը: Հենց դրան հաջորդող մի քանի տարվա ընթացքում Հանրապետականը դարձավ այն, ինչ այժմ կա՝ նախագահական եւ գործադիր իշխանությանը կազմակերպչական ծառայություններ մատուցող կազմակերպություն: Հանրապետական կուսակցությունը ոչ թե իշխանության կուսակցություն է, այլ կուսակցություն իշխանության համար: Հանրապետական կուսակցությունը չէ, որ ձեւավորում է իշխանությունը եւ ղեկավար դեր ունի Հայաստանում: Այդ դերը կատարում են միանգամայն այլ ուժեր, որոնց Հանրապետականն իր արբանյակների հետ սպասարկում է: Այս առումով Հանրապետական կուսակցությունը նման է ռուսաստանյան «Եդինայա Ռոսիա» կուսակցությանը: Ինչպես գրում է Գլեբ Մուսիխինը. «Խնդիրն այն է, որ «Եդինայա Ռոսիան» ընդհանրապես չի կարելի գնահատել որպես քաղաքական կուսակցություն՝ այդ բառի գիտական իմաստով: «Եդինայա Ռոսիա» նախագիծը վարչական մեխանիզմ է՝ խորհրդարանական մեխանիզմի եւ ընտրական գործընթացի ապահովման համար, եւ այդ նախագիծը չի կարելի բացատրել միայն կուսակցական տրամաբանությամբ: Փաստորեն այն հսկայական բյուրոկրատական մեխանիզմ է, որը պետք է ապահովի ընտրական գործընթացը»[20]:

Համապատասխանաբար՝ կարող ենք ասել, որ Հանրապետականը ոչ թե կուսակցություն է, այլ կազմակերպություն, որը խանգարում է կուսակցական համակարգի կայացմանը՝ ներսից եւ դրսից քայքայելով առկա կուսակցությունները:

Հայաստանում կուսակցական համակարգի կայացման հիմնական հակառակորդը ավտորիտար իշխանությունն է, որը նաեւ հասարակական առաջընթացի լուրջ խոչընդոտն է:

ՀՂՈՒՄՆԵՐ

1 Липсет С. М., Роккан С. Структуры размежеваний, партийные системы и предпочтения избирателей // Партии и выборы. - М., 2004

2 Ա.Դուգինի մասին, որպես օրինակ, կարող ենք բերել հետեւյալ հրապարակումը. Марлен Ларюэль. Александр Дугин, идеологический посредник/ http://www1.ku-eichstaett.de/ZIMOS/forum/inhaltruss12.html. Ա.Դուգինը իր աջ արմատական հայացքները Հայաստանում տարածելու համար մեծ ջանքեր է գործադրել, ինչը կասկածանքներ չի կարող չառաջացնել:

3 Մորիս Դյուվերժեն քաղաքական սոցիոլոգիայի ճանաչված ներկայացուցիչ է: Նրա ամենահայտնի գիրքն է՝ «Քաղաքական կուսակցություններ»: Ռուսերեն տարբերակը՝ Дюверже М. Политические партии. Пер. с франц. — М.:Академический Проект, 2000. 538 с.

4 Kircheimer O. The Transformation of West European Party Systems // Political Parties and Political Development / Ed. by J.LaPalambara, M.Weiner. - Princeton, N.J.: Princeton University Press, 1966.

5 Առաջին անգամ՝ Katz R. S., Mair P. Changing Models of Party Organization: The Emergence of the Cartel Party. Presented at the Democracies and the Organization of Political Parties Workshop, European Consortium for Political Research Joint Sessions of Workshops. University of Limerick, March 30 — April 4 1992. Վերամշակված տարբերակը՝ Katz R. S., Mair P. The Evolution of Party Organizations in Europe: The Three Faces of Party Organization // American Review of Politics. 1993. № 14 (Winter). P. 593 – 618.

6 Katz R. S., Mair P. The Cartel Party Thesis: A Restatement // Perspectives on Politics. 2009. Vol. 7. № 4. P. 753 – 766. Ռուսերենը՝ Ричард С. Кац и Питер Майр .КАРТЕЛЬНАЯ ПАРТИЯ: ПЕРЕСМОТР КОНЦЕПЦИИ/ http://www.intelros.ru/pdf/Prognozis/3-4_2010/8.pdf: Բոլոր հղումները ստուգվել են 25.11. 2012 դրությամբ:

7 Ричард С. Кац и Питер Майр, նույն տեղում:

8 Ричард С. Кац и Питер Майр, նույն տեղում:

9 Bowler Sh., Carter E., Farrell D. Studying Electoral Institutions and their Consequences: Electoral Systems and Electoral Laws. University of California, Irvine, Center for the Study of Democracy, 2001. Paper 01 – 05 [http://repositories.cdlib. org / csd / 01 – 05].

10 Riccardo Pelizzo. Cartel Parties and Cartel Party Systems: The Rise of Irresponsible Party Government. Saarbruecken, 2008.

11 Նույն տեղում:

12 Рикардо Пелиццо. “Картельная” партийная система/ http://russ.ru/Mirovaya-povestka/Kartel-naya-partijnaya-sistema

13 Տես, օրինակ՝ Аршин К., А. Павлов. Блеск и нищета партийных систем. URL: http://www.intelros.ru/pdf/Rus_journal_10_08/16.pdf (дата обращения 12.12.2010). – Рец. на кн.: Cartel Parties and Cartel Party Systems: The Rise of Irresponsible Party Government / Riccardo Pelizzo. – Saarbruecken, 2008.

14 Рикардо Пелиццо. “Картельная” партийная система/ http://russ.ru/Mirovaya-povestka/Kartel-naya-partijnaya-sistema

15 Многопартийность в России. Материалы Круглого стола на Третьем Всероссийском конгрессе политологов «Выборы в России и российский выбор». – М., ИНИОН РАН, 29 апреля 2003 г. Режим доступа: http://alestep.narod.ru/lubin/lubin_multipart.htm

16 Мейр П. О партиях, которые не могут быть аутсайдерами. – Русский журнал, 21.11.2008. Режим доступа: http://www.russ.ru/Mirovaya_povestka/O_partiyah_kotorye_ne_mogut_byt_autsajderami

17 Վարդան Ձալոյան. Նոր քաղաքական դասակարգ /http://www.lragir.am/armsrc/comments37884.html

18 Նույն տեղում:

19 Մանվել Սարգսյան. Անդրադարձ Հայաստանում քաղաքական պայքարի ձեւերի հարցին/ Փոփոխվող աշխարհ. Հայացք Երեւանից. Վերլուծական-փորձագիտական եռամսյա հանդես; 2012/2 (2)

20 Глеб Мусихин «Единая Россия» – не политическая партия/ http://russ.ru/Mirovaya-povestka/Edinaya-Rossiya-ne-politicheskaya-partiya

ВАРДАН ДЖАЛОЯН

“Картелизация” армянской партийной системы

В статье представляются западные теории о партиях. Особенно обращено внимание на теории Мориса Дювреже, Отто Киркхаймера, Ричарда Каца, Питера Мейра и Рикардо Пелиццо. Сделана попытка найти возможности для применения этих теорий в условиях армянской действительности. Автор выражает мнение, что в условиях наших реалий самым подходящим является модель “картельных” партий.

VARDAN JALOYAN

The “Cartelization” of the Armenian Party System

The article scrutinizes the Western theories on political parties. A particular attention is paid to the philosophies of such thinkers as Maurice Duverger, Otto Kirchheimer, Richard Katz, Peter Mair and Ricardo Pelizzo. The study attempts to map the opportunities of their implementation in Armenia. According to the author, the “cartel” party model is the closest one to Armenia’s realities.